

Հ Ս Ս Թ Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Ա Կ Ա Դ Ե Մ Ի Ա  
Գ Ր Ա Կ Ա Ն ՈՒ Թ Ե Ա Ն Ի Ն Ս Տ Ի Տ ՈՒ Տ

**ԵՐՎԱՆԴ ՇԱՀԱԶԻԶ**  
ՖԻԼՈՍՓԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ

**ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԻ**  
**ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Հ Ս Ս Թ Գ Ի Տ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր Ի Ա Կ Ա Դ Ե Մ Ի Ա Տ Ի Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Չ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

8(092)  
2-16

ԵՐՎԱՆԻ ՇԱՀԱԶԻԶ

ՖԻԼՈՍՓԻԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ

ՄՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԻ  
ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

363Ե

1513



ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Ե Ր Ե Վ Ա Ն

1944

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հրատարակութեան տարով բանաստեղծ Սմբատ Շահա-  
զիզի այս կենսագրութիւնը, մենք անհրաժեշտ ենք համա-  
րում այստեղ նշել, որ այս նրա լրակատար կենսագրութիւնն է  
իր էական մասերով, զբված արժանահավատ աղբյուրների  
հիման վրա, որ մինչև օրս պակասում էր մեր գրականութեան  
մեջ: Մենք ասում ենք «արժանահավատ աղբյուրների հիման  
վրա», որովհետև տողերիս գրողը միակ անձն է նրա ազգական-  
ներից, որ վայելել է նրա լրակատար համակրանքը և մտերմու-  
թիւնը, աշակերտել է նրան Լազարյան ձեռնարանում առաջին  
դասարանից մինչև ութերորդը և, ավարտելուց հետո էլ, մոտ  
հարաբերութիւն է ունեցել նրա հետ թղթակցութեամբ մինչև  
նրա մահը և մասնակցել նրա հուղարկավորութեանն ու թաղմանը:  
Այդ բոլորի հետևանքով, բնականաբար, նա լավ է ճանաչել նրան,  
տեղյակ է եղել նրա կյանքի հանգամանքներին, ճանաչել է նրա  
ներքին աշխարհը, համոզմունքը, կարծիքները ժամանակի ան-  
ցուդարձի մասին: Բացի այս, նա էր ձեռքի տակ ունեցել է այն-  
պիսի արժանահավատ աղբյուրներ, ինչպիսին են ձեռնարանում  
նրան աշակերտակից եղած Փիլիպպոս Վարդանյանի և Սեդրակ  
Մանգինյանի հիշողութիւնները, Գևորգ Բարխուդարյանի հիշո-  
ղութիւնները, որ տարել է նրան Մոսկվա և հանձնել ձեռնարա-  
նի վարչութեան, Պերճ Պոռչյանի հիշողութիւնները նրա ման-  
կութեան մասին, այն 19 նամակների պատճենները, որ նա գրել է  
իր բարեկամ, Մոսկվայի հայոց եկեղեցիների երեցփոխ, աբու-  
լեցի Մելքոն Գասպարի Փանյանին Նիժնի-Նովոգորոդից, որտեղ  
նա մի երկու ամառ ապրել է իր դասընկեր Հովհաննես Տեր-  
Հակոբյանի մոտ և լողացել Վոլգայի սառնորակ ջրերում, և  
գլխավորապես այն երկու հարցուրի չափ նամակները, որ տողե-  
րիս գրողն ստացել է նրանից և անտիպ պահպանել մինչև  
օրս: Այս նամակները չպետք է շփոթել այն 33 նամակների հետ,  
որ նա դարձյալ գրել է մեզ Մոսկվայից և Ղրիմի Գուրգուֆ գյու-

դից 1896 թվին և ապա հաջորդ տարին հավաքել, փոփոխել, ավելացրել, պակասեցրել, վերամշակել և հրատարակել «Ամառնային նամակներ» խորագրով:

Սմբատ Շահազիզն իր այդ նամակները գրել է իր եղբորորդի Երվանդ Շահազիզին: Շահազիզի եղբորորդիները, որոնց անունները նա հիշում է իր նամակներին մեջ, նրա ավագ եղբայր Հովակիմի որդիքն են, որոնք իրենց հոր մահից հետո մնացել են փոքրահասակ և որբ, ուստի նա իր համար բարոյական պարտք է համարել տեր կանգնել նրանց, կրթել և ոտքի կանգնեցնել, ինչպես որ նրանց հայր Հովակիմը տեր էր կանգնել նրան իրենց հոր մահից հետո և ուղարկել նրան Լազարյան ձեմարան:

Նա միջնորդել և կարողացել է հետզհետե ընդունել տալ ձեմարան իր եղբոր երեք որդիներին, որոնք իբրև ճրիվարժ գիշերօթիկ սաներ, մտել են ձեմարան, այդտեղ սնվել, մեծացել, դաստիարակվել, կրթվել և ավարտել իրենց ուսումը. նրանք հետո մտել են իրենց ընտրած բարձրագույն դպրոցները և այդտեղ ևս ուսանելով տարբեր մասնագիտություններ ըստ իրենց ցանկությունների, հաջողություններ ավարտելով՝ վերադարձել են հայրենիք և ծխել իրենց հոր հանգած օշախը:

Եվ այդ բոլորը կատարել է Շահազիզը ոչ իբրև ազգական, այլ իբրև փոխադարձ բարոյական պարտականություն, որովհետև ազգական լինելը մի առանձին առաքինություն կամ արժանավորություն չի համարել նա, այլ, ինչպես ինքն է ասում, միայն լոկ «ծննդաբանություն»: Այս մասին նա իր մի նամակում գրել է իր եղբորորդի Երվանդին. «Եվ այսպես խոսելով, ես, անտարակույս, չեմ կամենում շողոքորթել քեզ, ինչպես եղբորորդու կամ ազգականի, որ մի առանձին առաքինություն չէ, կամ արժանավորություն, այլ միայն լոկ ծննդաբանություն»: (Տես՝ 1901 թ. նոյեմբերի 25-ի նամակը):

Շահազիզն, իհարկե, խնամել և հավասար աչքով է նայել երեք եղբայրների վրա էլ, բայց առանձին համակրանքով կապված է մնացել իր եղբոր կրտսեր որդու՝ Երվանդ Շահազիզի հետ, որն իր միջնակարգ և բարձրագույն ուսումնառության հետ (1870—1882) իրեն նվիրել է հայ մանուկներին հայկական դպրոցներում ուսուցանելու գործին և գրական զբաղմունքի, այսինքն՝ դարձել է մի այնպիսի համեստ գործիչ, այն էլ այնպիսի մտածողությամբ և ուղղությամբ, որպիսին եղել է

ինքը՝ Ս. Շահազիզը: Եվ, բնականաբար, սրա հետևանքը եղել է այն, որ շուտով նրանց միջև ստեղծվել է մի, եթե կարելի է այսպես ասել, հասարակաց և բարոյական շահերի ընդհանրություն, որ մոտեցրել է նրանց և կապել միմյանց հետ:

Այս բոլորից հետո հասկանալի պիտի լինի, թե Շահազիզն ինչու մոտ է եղել իր այդ եղբորորդուն, ինչու նրա հետ է շարունակաբար թղթակցել, իր մտքերն ու խոհերը նրան հայտնել և փոխադարձաբար նրանը լսել, մի խոսքով՝ մտավորապես և բարոյապես կապված մնացել նրա հետ մինչև իր կյանքի վերջը (1907): Ահա այսպիսի մտավոր և բարոյական կապակցություն արդասիք են այդ նամակները, որոնց մեջ մասնավորը, անձնականը շատ քիչ տեղ է բռնում, այլ միայն հասարակաց շահերը—ժողովրդի ու երկրի շահերը, դպրոցը, լեզուն, գրականությունը և հայ ժողովրդին վերաբերող կուլտուրական խնդիրներն ընդհանրապես:


ԵՐՎԱՆԻ ՇԱՀԱԶԻԶ

## ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Սմբատ Շահազիզը ծնվել է Աշտարակ գյուղում 1841 թ. սեպտեմբերի 5-ին և նույն ամսի 12-ին մկրտվել Ամենափրկիչ եկեղեցում Տեր-Գրիգոր քահանա Խաչատրյանցի ձեռքով, աշտարակեցի Դավիթ Սաթուեյանի կնքանայրությամբ, և անվանվել Սմբատ:

2. Սմբատը սերել է Աշտարակի «Շահազիզյան» մեծ ընտանիքից. նրա հայրը՝ «Հովակիմենց Տեր-Սիմոնը» ուսել է Երևանի հոգևոր դպրոցում և դարձել է ժամանակի պահանջի չափով կրթված մարդ և մեր հին նահապետական կյանքի լավ քահանաներից մեկը: Պերճ Պոռչյանն իր մանկական հիշողությունների մեջ Տեր-Սիմոնի մասին, որի «մոնթն» է եղել իր 7—8 տարեկան հասակում, ասում է. «Մի ուրիշ տեսակ քահանա էր հոգին դրախտում խնդացող Տեր-Սիմոնը. նա ոչնչով նման չէր յուր չորս ընկեր տերտերներին. ոչ քուչումն էր նրատում, լավ ու վատ գործերի և խոսքերի ներկա լինում, ոչ անվայել կատակներ ու սրախոսություններ անում, ոչ բարձր էր խոսում, ոչ ժամումն էր իրան անկարգ պահում և ոչ էլ իր ժողովրդի հետ իր հասույթի համար անբավականություն անում, ինչ որ տալիս էին, առանց վրան նայելու գրպանն էր դնում: Գինու համը միայն պատարագ անելուն էր տեսնում: Մի ծանր, մի համեստաբարո, մի անշահասեր, մի առաքինի քահանա էր նա, գյուղի մեծ ու փոքրից սիրված ու հարգված: Մենք, Տեր-Սիմոնի մոնթերս, սիրում էինք մեր ուսուցչին և դիտեինք, որ ուրիշ տերտերների նման «Ֆալախա» դնել, ավազի վերա բաց ծնկներով չոքացնել կամ ուրիշ անխիղճ պատիժներ տալ չունեիք, սակայն էն էլ դիտեինք, որ մեր համբերատար տերտերին բարկացնողը խեղ չէր դուրս տանիլ, մին կտար ու փիլ կտար»:


3. Սմբատի մայրը, Խոսրովիդուխտը կամ «Խոսրով նանը» եղել է Մկրտչենց, կամ, ինչպես աշտարակեցիք տեսել են, «Շահազանենց» տանից, գյուղի գեղեցիկ աղջիկներից մեկը—միջա-



հասակ, կարմրայտ և առողջակազմ: նա շատ սիրող մայր է եղել, բայց միաժամանակ կտրուկ բնավորութեան տեր: Տան մեջ ամենքն ստիպված լսել են նրան, նրա խոսքով ղեկավարվել, մանավանդ որ նա առողջամիտ, տնտես ու անարար կին է եղել, այնպես որ մինչև իսկ տերտերը ճանաչել է նրա հեղինակութունը տնային գործերում և նրա խոսքից գուրս չի եկել: «Տիրուհի Խոսրով-նանը,—ասում է Պողոսյանն իր նույն հիշողութունները մեջ,—ամենից սիրված ու հարգված էր: Խոսրով-նանին միայն մենք չէինք սիրում, ամբողջ գյուղը պատվում էր այն հարգելի կնոջը, գյուղի մեջ ուրիշ տերտերակիներ ու աղաների կնանիք էլ կային, բայց Խոսրով-նանը նրանց բոլորից ավելի հարգված էր»:

4. Տեր-Սիմոնն ունեցել է վեց արու զավակ, որոնցից անդրանիկը պապի անունով կոչվել է Հովակիմ, իսկ մյուսները՝ Եփրեմ, Կաթսար, Սահակ, Սարիբեկ և Սմբատ: Այսպիսով՝ իր եղբայրների մեջ Սմբատը եղել է կրտսերը կամ, ինչպես ասել է Խոսրով-նանը, իր «տաշտաքերանքը»: Տերտերը սիրելիս է եղել ուսումը, ուստի և իր որդիներից հրեքին՝ Հովակիմին, Կաթսարին և Սահակին տվել է Երևանի հոգևոր դպրոցը, մտածելով նրանց ավարտելուց հետո դպրոց ուղարկել նաև Սարիբեկին ու Սմբատին, որովհետև Եփրեմը վախճանվել էր դեռ վաղ պատանեկական հասակում: Սակայն նա չի հասնում իր նպատակին. նա մեռնում է 1847—1848 թվին՝ «մեծ խոլերի տարին», երբ Սմբատը 6—7 տարեկան մանուկ է եղել, իսկ Հովակիմը 1839 թվին ավարտած իր ուսման ընթացքը, նույն թվին էլ պաշտոնի մտած Երևանի կոնսիստորը, առաջացած ծառայութեան մեջ՝ 1846 թվին կոնսիստորի գործավարի պաշտոնին հասած և ամուսնացած ընտանիքի տեր դարձած:

5. Տեր-Սիմոնը եղել է միջակ կարողութեան տեր. նա ունեցել է մի այգի՝ «Պուրաններում» [խոպաններում]—«Քուրքի իգի», մի նորատունկ աճեր՝ «Սևահողերում», «Օլորանի» ճանապարհի վրա, մի ջրաբքի արտ՝ «Միջնահանգում», բայկարար վարելահող՝ անջրդի «Չաղի-դուղում» և սեփական տուն՝ «Մող-նու թառի» տակ, հին գյուղում, որ կիսաքանդ վիճակում մինչև օրս էլ գոյութուն ունի և ուր ծնվել է Սմբատը. իր այդ ունեցածից այնքան եկամուտ է ստացել, որ քահանայական չնչին արդյունքի հետ միասին կարողացել է այն ժամանակները, երբ պահանջը քիչ է եղել և կյանքն էլ անպաճույճ, համեստ ու անկարոտ



Շտապիմյ տունը Առաքալում, որտեղ ծնվել է Ս. Շամս լիբը:

ապրելու, բայց երբ մի կողմից քահանայի մահովամբ եկամուտն է պահասել, մյուս կողմից էլ 1848 թվին մարտին է հայտնվել և դաշտ ու անդաստան, այգի ու պարտեզ կերել, չորացրել, ընտանիքը չքավորության է մատնվել:

6. Ընտանիքի կարիքները հոգալու ծանրությունն այդ նեղ օրերին ամբողջովին ընկնում է անդրանիկ որդու՝ Հովակիմի վրա: Հոր մահվան բոթն առնելուն պես, նա հասնում է Աշտարակ և ձեռք առնում ընտանիքի կառավարման գործը. նա հացի պաշար է պատրաստում և միջոցներ որոնում ընտանիքն ապահովելու նաև ապագայում, որի համար Սահակ եղբորը տանում է իր մոտ, որ շարունակել տա ուսումը և վերջը մի գործի, պաշտոնի գնե նրան. Կամսարի համար իրավունք է ձեռք բերում քահանա ձեռնադրվելու իր հոր տեղը. մնում է միայն տեղավորել Սարիբեկին, որի ուսանելու ժամանակը հասել էր, որովհետև Սմբատը դեռ մանուկ էր և կարող էր համբերել Ահա հենց այդ ժամանակ նրա գլխում ծագում է մի միտք՝ խնդրամատույց լինել Լազարյան ձեռարանի վարչության՝ Սարիբեկին ձրխավարժ գիշերօթիկ սան ընդունելու: Խնդիրքն ուղարկում է և դրա հետ միասին գիտում է ներսես կաթողիկոսին՝ միջնորդելու այդ մասին ուր հարկն է:

7. Անցնում է մի երկու տարի, և 1851 թվին ձեռարանից ստացվում է մի պաշտոնական թուղթ, որով ծանուցվում է, որ տված խնդիրքը հարգված է, և Սարիբեկն ընդունված է ձեռարան, իբրև «Տեսրց Լազարեանց սան»: Հովակիմն շտապում է Աշտարակ, ուրախալի լուրն ավետում է մորը և պատրաստություն է տեսնում ուղարկելու Սարիբեկին. բայց սա կամակորում է, չի ուզում գնալ և մինչև իսկ տանից փախչում, գնում է Կարբի գյուղը, որով չափազանց վշտացնում է մորն ու հղբորը: Սմբատը տեսնելով ընդհանուր վիշտը և կամենալով ուրախացնել իր սիրած մեծ եղբորը և մորը, առաջ է ընկնում և ասում, թե ինքը Մոսկով կերթա, թող Սարիբեկի տեղն իրեն ուղարկեն:

8. Սմբատը մի ժիր, կայտառ, թուվան և սրամիտ մանուկ էր. նա ընտանիքի սիրելին էր. նրան սիրում էր մայրը, Հովակիմը և մյուս եղբայրները: Ամենքը նրան երես էին տալիս, մանավանդ մայրը և մեծ եղբայր Հովակիմը, որոնք երբեք նրս «խաթրին» չէին կպչում. նա վերջինս էր, ընտանիքի մեջ ամենափոքրիկը... Եվ որովհետև նա շրջապատված էր ամենքի սի-

րով ու գզվանքով, ազատ էր մեծերի կոշտ ու կոպիտ վարմունքից, ընտանեկան ճնշումից, ուստի նրա մեջ զարգացել էր վստահությունը, համարձակությունը: Ով որ էլ լիներ, ինչ դիրքի և աստիճանի մարդ էլ որ լիներ իր առաջ կանգնած, նա չէր քաշվում, այլ ճակատը բաց, համարձակ պատասխան էր տալիս նրա հարցմունքներին: «Պե՞ծ էր փոքրիկ Սմբատը,—ասում է Պոռշյանը նրա մասին,—ինքը գես չէր կարդում, դեռ, յուր ասելով, տերտերն եկող տարին պետք է գնար էջմիածին, որ իրենց Գևորգ վարդապետից մի տեսր ուզեր, բերեր իրան դաս տար, բայց այդ լղար-մղար, շեկլիկ ու կենդանի երեխան ամենքիս դասերից մի մի կտոր անդէր գիտեր: Հենց որ մենք չոքում էինք տերտերի առաջին և դասերս սկսում, մեկ էլ՝ բակի մյուս ծայրից վաղելով գալիս էր ու բերաններիցս խլում հետևյալ բառն ասում: Այբ, ժե, ձե, ու, կարգում էր մի երեսխա. բեն, ինի, մեն, սե, շարունակում էր Սմբատը: Բեն, այիբ, բա, սկսում էր դողալով մի երեսխա. բեն, հչ, բէ, վրա էր բերում Սմբատը: Դե, հերիք է, Սմբատ ջան, գնա մորդ ասա, թող քիչ հաց ու պանիր տա, թող էս ծուլը դասն ասի, տեսնենք սովորե՞լ է: Եվ Տեր-Սիմոնը կիսաժպիտ ճանապարհ էր ցույց տալիս իր չար Սմբատին»: (Տես՝ «Ղարաբաղ» թերթ, 1912 թ. № 13—Պերճ Պոռշյանի «Մանկական հուշատետրից»):

9. Երբ ամեն բան պատրաստ է լինում Սմբատին ճանապարհելու, մայրը նրան տանում է էջմիածին, որ ներկայանա կաթողիկոսին, իր շնորհակալությունը հայտնի նրա միջնորդության առթիվ և նրա օրհնությունն առնի երեսայի համար: Վեհափառը սիրով ընդունում է Խոսրով-նանին, օրհնում է երեսային և ճանապարհ է դնում նրանց, հրամայելով տալ երեսային մի բուռը չամիչ: Վեհաբանից դուրս գալուն պես, Սմբատը հենց այդտեղ էլ դառն առաջ թափում, շաղ է տալիս չամիչը, ասելով մորը, թե այդ պառավ մարդը կարող էր իրեն չամիչի ավելի լավ բան տալ: Հովակիմն ինքը եղբորը տանում է Թիֆլիս, որտեղից Սմբատը Շիրվերի շնորհալի թարգմանիչ Գևորգ Բարխուդարյանի հետ ուղևորվում է Մոսկվա:

10. Այդ ճանապարհորդության մասին Գևորգ Բարխուդարյանի գրած հիշողություններից (տես «Իմ հիշողություններից», «Արձագանք», 1894 թ. № 3, 5 և 7) մենք խմանում ենք, որ Թիֆլիսից նրանք ֆուրգոնով դուրս կն եկել 1851 թվի սեպտեմբերի վերջերին և չորս օրում անցնելով Կովկասյան

լեռները, հասել են Վլադիկավկազ, ուր մնացել են 10 օր, որովհետև Ռուսաստան գնացող կառք իսկույն չի ճարվել: Ծանապարհորդները հինգ հողի էին՝ ինքը Բարխուդարյանը, որ թեև այդ ժամանակները դեռ 16 տարեկան մի պատանի էր, բայց խմբի գլխավորն էր և առաջնորդը. նա գնում էր Գորպատ. 11 տարեկան Սմբատը, որին հանձնել էին Բարխուդարյանին տանելու Մոսկվա և հանձնելու Լազարյան ձեմարան, մի 45 տարեկան ուսուցիչը, Ալեքսանդր անունով, վերագառնում էր հայրենիք, մի 65 տարեկան պառավ ասորի կին, որ իր թոռան, 12 տարեկան Մարիամին Պարսկաստանի Ռեշտ քաղաքից տանում էր Պետերբուրգ՝ նրա հոր մոտ: Նոյեմբերի 20—25-ին, վերջապես, ճանապարհորդները հասնում են Մոսկվա, ուր խմբից բաժանվում է Ալեքսանդրը, որ գնում է իր գյուղը, և Սմբատը, որին Բարխուդարյանը տանում է ձեմարան, իսկ մյուսները գնում են իրենց տեղերը—Բարխուդարյանը՝ Պետերբուրգի վրայով Գորպատ և ասորի կինն իր թոռան հետ՝ Պետերբուրգ:

11. Այդ երկար ուղևորության միջոցին նրանց գլխով շատ բաներ են անցնում, նրանք շատ արկածների են հանդիպում: Կովկասյան լեռների Լարս իջևանում, օրինակի համար, նրանք տեսնում են պատրաստած մի կախաղան, որից մյուս օրը պիտի կախնին նոր միայն ձերբակալված հաշակավոր Գալի-Մուրատ ավագակին, որ իր ասպատակություններով սարսափ էր տարածել այդ կողմերում: Վլադիկավկազում նրանք տեղանառես են լինում հենց իրենց իջևանած հյուրանոցի առաջ, Թերեքի կամուրջի գլխին, մի ուրիշ սակավի, արյունահեղ տեսարանի: Մի օր Բարխուդարյանը Սմբատի հետ իջնելով հյուրանոցից, գնալիս են լինում հայոց եկեղեցին պատարագի: Դեռ իրենց իջևանատեղից չհեռացած՝ նրանք լսում են իրենց հետևից շղթայի ձայնը: Դրանք մի խումբ չերքեզ կալանավորներ են լինում, որոնք, շրջապատված պահակ զազախներով, քշվելիս են լինում Միբիր: Հյուրանոցի առաջ հասնելուն պես, կալանավորներից մեկը, օգտվելով այն հանգամանքից, որ այդտեղ խմբված են լինում շատ ուրիշ չերքեզներ և, գուցե, նրանցից օղնուխյուն սասնալու հույսով, խլում է իր մոտ գտնված զազախի տեղը և տեղն ու տեղը խոցոտում նրան: Իրարանցում է ընկնում պահակների մեջ և, մինչև որ նրանք սթափվում են, կարծնավորը կարողանում է սպանել և մի ուրիշին, վրա է հասնում, վերջապես, զազախներից մեկը և իր տեղով գետին տապալում նրան: Այս

և սրա նման տեսարանները ծանր տպավորություն են թողնում փոքր Սմբատի վրա, որ մի ուրախ, զվարթ մանուկ է լինում և ճանապարհին շարունակ վազվզում, խաղում է Մարիամի հետ:

12. 1894 թվի ապրիլի 11-ին Գեորգ Բարխուդարյանն իր լուսանկարն ուղարկելով Սմբատ Շահազիզին և նրանից փոխադարձաբար նրա լուսանկարը խնդրելով, լուսանկարի հետևը գրել է մի ոտանավոր, որի մեջ նա վերստին համառոտաբար հիշում է նրա հետ միասին դեպի հյուսիս կատարած իր ճանապարհորդությունը.—

Ազնիվ բարեկամ, Սմբատ Շահազիզ,  
Ավելի քան թե չորս տասնյակ տարի  
Անցավ այն օրից, երբ մեզ երկուսիս  
Հարկ եղավ դիմել երկիրն օտարի,  
Որ հագեցնենք մեր ուսման փափազը,  
Զարգացնենք մեր միտքն ու ճաշակը,  
Եվ ձեռք բերելով գիտություն զանձը,  
Պիտանի անհնք ազգին մեր անձը:

Այն ժամանակ մենք, թե դու և թե ես  
Մատաղահաս էինք—մանուկներ անփորձ,  
Բայց վստահ էինք, չեն վախեցնի մեզ  
Ապագայումը աշխատանքն ու գործ:  
Այնտեղ իրարից մենք բաժանվեցանք,  
Եվ այնուհետև, թեև ունեցանք  
Զանազան վիճակ, բայց մեկ ասպարեզ  
Եվ էլ չտեսանք իրարու երես:

Այժմ երկուսս էլ ալեգարդվելով,  
Նորոգում ենք մեր բարեկամություն,—  
Եվ իմ պատկերը քեզ ուղարկելով,  
Քոնն ունենալու ունիմ ցանկություն:<sup>1</sup>

<sup>1</sup> Շահազիզն ուղարկելով իր լուսանկարը, ստանում է հետևյալ ընդհանրապատկան նամակը.—

1894 թ. դեկտեմբերի 7-ին, Քիֆլիդ:  
Իմ թանկազին ու ազնիվ բարեկամ  
Սմբատ Շահազիզ:

Վերջապես ստացա Ձեր լուսանկար պատկերը, ասում եմ վերջապես, որովհետև տարույս մայիսի 20-ին ուղարկած պատկերը հազիվ միայն երեկ հասավ ինձ: Երեկ երեկոյան տուն գալով, գտա սեղանիս վրա մի ծրար: Հարցնում եմ. ի՞նչ է այս, կամ ձի բերեց, ինչ պատասխանում են, թե ծառան

Իրար պատկերի դիմացը կանգնած,  
Ոսկի մանկութունն հիշենք, որ գնաց,  
Եվ մխիթարվինք, որ մեր ասպարեզ  
Մենք կատարել ենք խղճով, պարզերես:

13. Սմբատը ասելով իր եղբորը, թե ինքը Սարոյի տեղ Մոսկով կերթա, իհարկե, իբրև երեխա, չէր կարող գիտակցել իր ասածը, իր արածը. նա միայն տեսնելով ու զգալով, որ իր եղբայրն ուզում է մի լավ բան անել Սարոյի համար, և սա չի ուզում կատարել նրա ցանկութունը, կամեցել էր ինքն ստանալ այդ լավ բանը, ինքը կատարած լինել եղբոր ցանկութունը: Նա, հայտնի բան է, չէր էլ կարող երևակայել, թե որտեղ է Մոսկովը և որքան երկար ժամանակ պիտի հեռանա իր մորից, իր հարազատներից և որքան նեղութուն պիտի կրի օտարության մեջ, քաշելով իրենց կանաչագորգ ալյուրների, իրենց գետի անուշակ ջրերի, իրենց սիրուն գյուղի կարոտը: Բայց երբ գալիս է հրաժեշտի ժամը և մայրը կարոտագին սեղմում է նրան իր կրծքին, նա փղձկում է և դժվարությամբ դուրս գալիս իր ծնողի գրկից, կարծես զգալով, որ այլևս շուտով չպիտի վերադառնա. նա գնում է, տանելով իր հետ իր ծննդյան տեղի քաղցր հիշատակը ու պահելով այն սրբի խորքում իր ամբողջ կյանքի ընթացքում: Ահա այդ քաղցր հիշատակն է, իր այդ վերջին հրաժեշտի տպավորութուններն են, որ նա արտահայտել է իր աշակերտության օրերում գրած անպաճուճ տղայական ոտանավորի մեջ—«Ողջունյն հրաժարական Աշտարակի հետ» խորագրով, նվիրված իր հայրենակից, Մոսկովայի համալսարանի ուսանող Կ. Սաթունյանցին.—

Վերջին անգամ ես ճեմում եմ

Քո ծաղկազարդ ափերում,

Վերջին անգամ ես շրջում եմ

Քո բարետես վայրերում, և այլն:

(Տես «Ազատության ժամեր», էջ 19):

բերեց, ասելով թե մի պարոն ավից, բայց թե ով էր այդ պարոնը, ծառան ինձ ոչինչ չկարողացավ ասել: Բաց եմ անում ծրարը և միջից հանում Ձեր լուսանկարը: Պե՞տ է ասեմ Ձեզ, սիրելի բարեկամ, որ ես բոլորովին հիացա, տեսնելով Ձեր պատկերը, հիացա, սրովհետև տեսածս այն չէր, ինչ որ սպասում էի, և իսկույն հիշեցի, թե որքան սխալվել եմ ասելով. «Այժմ երկուս էլ ալեզարդվելով», քանի որ Ձեզ վերս նշմարվում է ալեզրության դեռևս միայն աղվամաղը: Ես տեսնում եմ մի առույգ, ծաղկափթիթ տղամարդու պատկեր, մի տղամարդու, որի դեմքը արտահայտում է առողջութուն, ուժ ու եռանդ: Անչափ ուրախ եմ, որ իմ ճանաչած փոքր Սմբատը այժմ ներկայանում է մի

Սմբատն իր Մոսկվա գնալու և Լազարյան ձեմարան մըտնելու ժամանակ թեև արդեն 11 տարեկան տղա է լինում, բայց ոչ մի մտավոր զարգացում չի ունենում. նա մինչև իսկ այնքան քիչ գրաճանաչ է լինում, որ առաջին ժամանակները չի էլ կարողանում իր ձեռքով մի երկու տող գրել եղբորը, որ աչքը ճանապարհին սպասում էր. նրա նամակներն առաջին տարին գրելիս է հղել աշտարակեցի Տեր-Հովսեփյանց Ստեփանի որդի Նիկողայոսը (ձեմարանի 1857—1858-ի շրջանավարտ), որ նրանից տարիներ առաջ էր ուղարկվել ձեմարան: Սմբատը տանը կյանքի նպաստավոր պայմաններ չէր ունեցել սովորելու: Հոր մահվան ժամանակ, ինչպես տեսանք, նա 6—7 տարեկան երեխա էր, իսկ հոր մահից հետո, նրա ընտանիքն այնպիսի կացության մեջ է ընկել, որ ոչ մի միջոց չի եղել ղրադվելու նրան սովորեցնելու, նրան կրթելու գործով, քանի որ նրանից մեծերը կային, որոնց պետք էր սոքի կանգնեցնել, տեղավորել: Բայց եթե գրագիտութուն, մտավոր պաշար նա չէր տարել իր հետ, գրափառներն նա տարել էր ընական խելք, ընդունակութուն, սրամտութուն, վառ երևակայութուն, հայկական կյանքի պարզ, մաքուր տպավորութուններ, հայրենի բնության գեղեցկության տպավորութուններ, որոնք խորին հետքեր էին թողել նրա ժանկական սրտում, անջնջելի մնալով նրա մեջ և իբրև ոգևորության անսպառ աղբյուր ծառայելով նրա ամբողջ կյանքում: Նա հայ ժողովրդի, հայ նահապետական գյուղի, հայ բնության իսկական, հարազատ զավակն էր. նա իր մանկության տարիներն անց էր կացրել թափառելով կանաչագորգ ալյուրներում, ականջ գնելով Քասախ դետի ականակիտ ջրերի խշխշոցին, զմայլելով, «եբբ օղեղեն օվկիանում փայլում էին անթիվ աստղեր, երբ կենարար ցողը իջնում էր երկնքից ու զովացնում բնությունը և երբ ամբողջական վառ ծաղիկները բուրում էին անուշահոտութուն»: (Տես նրա «Գիրք» բանաստեղծութունը):

գեղեցիկ ու ամենքից հարգված անձնավորութուն, և ես զգում եմ այդ բանի վերա մի առանձին ինքնաբերականութուն ու հպարտութուն, կարծես թե այդ բոլորը իմ հոգացողության արդյունքն է: Ուրեմն ընդունեցե՛ք, թանկագին բարեկամ, իմ ջերմ շնորհակալութունը Ձեր գեղեցիկ նվերի համար, որ զարդարելով իմ գրասեղանը, միշտ կլինի աչքիս առաջ և կհիշեցնե ինձ իմ սիրելի փոքր Սմբատին, որ այժմ կատարյալ տղամարդ է: Բայց սրտով ցանկանալով Ձեզ անսասան առողջութուն և երկար ու երջանիկ կյանք, մնում եմ Ձեզ միշտ անկեղծ սիրով բարեկամ

Գ. ԲԱՐՈՈՒԴԱՐՅԱՆ

14. Լաղարջան ձեմարանն շայդ ժամանակներն ունեցել է վեց գլխազիտնական դասարան, արևելագիտութեան երկու մասնազիտական դասարան (լիկեոն) և մի նորարաց նախակրթարան՝ հատկապես հայ անպատրաստ մանուկների համար: Սմբատն ընդունվել է այդ նախակրթարանը, որովհետև բոլորովին անպատրաստ է եղել և ուսուցիչներն էլ իսպառ չի իմացել: Ուստի և, բնականաբար, շատ դժվարութեամբ է քաշել, մինչև որ կարողացել է ընտելանալ նոր, անծանոթ կյանքին, սովորել անծանոթ լեզուն և իր հասակին համապատասխան դարգացում ու գիտութեամբ ձեռք բերել: Այնուհետև արդեն նա կարողացել է իր տուկուն աշխատասիրութեամբ ոչ միայն անսայթաք առաջ գնալ, այլև առաջադեմ աշակերտ լինել: Հատկապես նա առաջադեմ է եղել հայոց լեզվի գիտութեան մեջ և այդ ոչ շնորհիվ իր ուսուցիչներին՝ Մկրտիչ էմինի ու Մսերի, որոնց նա երբեք չի հավանել և միշտ էլ սքոլաստիկ է անվանել, այլ միայն և միայն իր անձնական աշխատասիրութեամբ և հայ նախնի մատենագիրների ուսումնասիրութեամբ ու հարատև ընթերցանութեամբ շնորհիվ:

Մկրտիչ էմինի և Մսեր Մազիստրոսի մասին, որոնց հետ նա, իբրև հայկական աւարկանների սիրող և մասնագիտորեն պարագող, բնականաբար ամենաշատ շփուսմ է ունեցել, քաղցր հիշողութեաններ չէր պահպանել. նրա կարծիքով, նրանք, բացի այն, որ հմուտ դասատուներ չեն եղել, այլև իրենց մտածելակերպով և ուղղութեամբ սքոլաստիկութեան կատարյալ ներկայացուցիչ ու տիպար են հանդիսացել: Շահագրիզն իր եղբորորդուն գրած նամակներից մեկում խոսելով էմինի մասին, իբրև մարդու, իբրև տեսչի, մանկավարժի և գիտնականի, հետևյալ կերպով է բնորոշում նրան. «էմինը մի պաղարյուն և սառնասիրտ մարդ էր. նա կարծես թե ծանոթ չէր զգացմունքների աշխարհի հետ. նա, կարելի է ասել, ավելի զգում էր խելքով, քան թե սրտով: Այս պատճառով նա միշտ ծանրաբար և անողորմ երևելով, յուր աշակերտներին ահ ու երկյուղ էր ազդում, քան թե սեր և համակրութեամբ, մի հատկութեամբ, որ մանկավարժութեան ասպարեզում չի կարող լինել այնքան բեղմնավոր ու նպատակահարմար էմինի մասին առհասարակ ասում են, որ նա յուր տեսչութեան ժամանակ եղել է բյուրոկրատ և ֆորմալիստ, բայց այդ ուղիղ չէ. մի այդպիսի կարծիք առաջացել է նորա բնավորութեան հիշյալ զանգվածից, որ ամեն տեղ ու ամենից

գիտե խստիվ պահանջել կարգապահութեան և մի չնչին դանձառութեամբ, որ այնքան սեփական է մանուկ սերնդի հարափոփոխ հոգեկան երևույթներին, ենթարկվում է երբեմն անարժան պատիժների: Այսպիսի դեպքեր շատ են պատահել էմինի վարչութեան շրջաններում: Էմինը ապրել է մի այնպիսի ժամանակ, որ և բարի խառնվածքով մարդը պիտի լիներ խստապահանջ և անագորույն, ինչպես և ներշնչում էր նիկոլայան ուժիմը: Հանգուցյալ էմինի աշխարհատեսութեանը, անմարդաճանաչութեանը յուր մահից հետո և այսօր զգալի է. բոլոր նորա ֆավորիտները խավար սովեր են ձգում նորա աշխարհագիտութեան վերա, և այստեղ շատ ախուր խորհրդածութեաններ են առաջ դալիս, որ արգելում են ինձ վերլուծել այն ուսումնականի անունը խնայելով: Մարդիկ հետին, սինլքոր, ձրիակեր, թափուր ամենայն բարեմասնութեանից, այսօր նույն մարդու շնորհիվ զիծեցնում են մեր խիզճը և զզվանք են հարուցանում և ավելի ոչինչ. էմինը հայոց համար եղել է մեծութեամբ կամ զաղափար մեծութեամբ: Էմինի գրական արժանավորութեանը ես տեսնում եմ նորա սուղաբան ուսու թարգմանութեաններին՝ մեջ, որոնց հավասարը դժվար է գտնել ուրիշներին մեջ: Այս մտքով, կարելի է ասել, որ էմինը լեզվագետ, ֆիլոլոգ չէր, այլ հմուտ թարգմանիչ»:

Ինչ վերաբերում է Մսեր Մազիստրոսին,—նա իր նույն անավելում գրում է. «Ի՞նչ բանում էր նորա մեծութեանը—որ նա երևելի հայկարան է եղել, այսինքն գրոց լեզվի ձևերը մեքենայապես բերան գիտեր: Եվ իրավի է այդ. նա ինքն էլ այդ մեծութեանը չի պահանջել»:

Ձեմարանի իր ժամանակի հայ ուսուցիչներից նա միայն և միայն հավանել է Նալբանդյանին, որի ուսուցչութեանը թեև կարճատև է եղել, բայց նրա ցանած սերմերը ատոթ պտուղներ են տվել, և նրա խոսքերը՝ «հայերին մտածել պետք է սովորել» — Ձեմարանի աշակերտութեան մեջ ավանդաբար անցել են սերնդե-սերունդ: Որքան մեք գիտենք, նրա այս կարճատև ուսուցչութեան ժամանակ Ձեմարանում Շահագրիզը չի աշակերտել նրան, բայց ընդունել է նրա թողած ավանդը և նույնը հետագայում, իր ուսուցչութեան տարիներին, քարոզել իր աշակերտներին: Իրա հետևանքով և ընդհանրապես հավանելով նրա գործունեութեան, նա հետագայում, իր «Լևոնի վշտի» մեջ հանելով նրան «ազատ արվեստի դավաճանների դասից», առանց

անունը տալու, նվիրել է նրան հետևյալ հոգեբուխ, արտառուչ տողերը.—

Բայց քեզ հանում եմ այս տխուր դասից,  
Ո՛վ նոր հայախոս և ազնիվ մըշակ.  
Քեզ կարող էի անմահ փուշերից  
Քաջ մարտիրոսի բուրեղ պսակ:

Քնարիդ լարերն ազատ շարժվում են,  
Երբ ազատ քո կամք, ազատ քո հոգին.—  
Այդպես սոխակներ ներդաշնակում են,  
Հեռու վանդակից, թփերի միջին:

Սրտիդ կսկիծը, կսկիծ է ազգին,  
Եվ ոչ մի դիմակ կեղծավորութան.  
Գրչիդ վաստակը—մեծութուն Հայի,—  
Թեև հայասերք են քո դավաճան:

Ո՛վ ազգի անդամ, հավերժ հարգելի,  
Թող մխիթարե կուրծքիս հառաչանք  
Պայծառ ճակատըդ Հայրենասիրի,  
Որի վարձն հղավ ապերախտ զրկանք:

(Տես «Լևոնի վիշտը», էջ 162)

15. Անցնում են տարիներ, աշակերտական պարապմունքներ, դասերի, քննութիւնների հոգսերով առցված մերթ ուրախութիւն, մերթ արամութիւն միալար, միատեսակ տարիներ, և համնում է 1857 թիվը, երբ նա մեր հաշիվով պիտի լինել հինգերորդ դասարանի 16—17 տարեկան աշակերտ, և նա ստանում է իր սիրելի եղբոր՝ Հովակիմի մահվան լուրը, մի չարագուշակ բռթ, որ ծանր ապավորութուն է թողնում նրա վրա: Առանց այն էլ նրա վիճակը ծանր էր: Նա այն հեռավոր օտարութիւն մեջ չունէր մեկը, որ մխիթարեր, փաղաքշեր նրան, ամեն բան օտար, ամեն բան հեռու էր նրա որտից: Նա իր այդ կացութիւնումը նմանել է մի վայրի թռչունի, որ սովոր էր աղատ ճախրել, աղատ երգել և հանկարծ բռնվել, թակարդվել էր վանդակի մեջ և խեղճացել, պապանձվել, գլուխը ծռել, մի կացութիւն, որ նա նկարագրել է ընկերներին նվիրած իր «Իմ վիճակը» խորագրով աշակերտական ոտանավորի մեջ: (Տես «Ազատութիւն ժամեր», էջ 29).

Չորս պատի մեջ փակված եմ ես  
Ամբողջ տարին, պարոններ,  
Գլուխս ծռած, լուիկ ու հեզ  
Անկած եմ այստեղ անտեր:  
Անկած եմ ես անհայր, անմայր, անծանոթ,  
Աստված, ծագիր ինձ նոր, պայծառ առավոտ... և այլն:

Նրա միակ մխիթարութիւնը և սփոփանքը այդ վիճակի մեջ հանդիսացել են այն նամակները, որ նա հաճախ ստանալիս է եղել իր եղբորից, նամակներ, որոնց մեջ նա գտնում էր սեր ու զգովանք և սրանցից առնում իր մոր, իր հարազատներին, իր հայրենիքի կարոտը: Եվ ահա այդ նամակներն ևս դադարում են: Հովակիմը նրա համար եղել էր ոչ միայն բարի, սրտացավ եղբայր, այլև մի կատարյալ հոգացող, սիրող հայր. նրա համար նա եղել էր բարեբար, հանդիսացել էր մեկենաս, առանց նրա օգնութիւն նա պիտի լիներ «հովիվ, որ սևատես թափառում է խղճալի»: Եթե նա չլիներ, ո՞վ պիտի հոգար, որ նա ընդունվեր ձեմարան, ո՞վ պետք է իր ազքատիկ միջոցներից այնքան նյութական դոնորութիւն աներ՝ պատրաստելու, հարդարելու և ուղարկելու նրան Մոսկվա, ո՞վ պետք է իր նամակներով այնքան սեր ու զգովանք ցույց տար նրան, քաջալերեր, սիրտ ու հոգի տար նրան՝ տոկայուս նեղութիւններին, հաղթահարելու "ղժվարութիւնները: Ահա այսպիսի մտքեր, այսպիսի հույզեր է հարուցել նրա մեջ եղբոր մահը, որ նա արտահայտել է իր աշակերտութիւն տարիներում զբած և եղբոր հիշատակին նվիրած ոտանավորի մեջ, որ կրում է «Ամենախոնարհ ներողութիւն» խորագիրը («Ազատութիւն ժամեր», էջ 25).

Ես քեզ երբեք չեմ մոռանալ,  
Ո՛վ իմ եղբայր թանկագին,  
Քեզ փառք, պատիվ պայծառափայլ,  
Քեզ, մեկենաս, իմ անգին:

Միտք քո բացված մեծ է եղել,  
Մեծ ես եղել, Հովակիմ,  
Բայց չիմացա ես գնահատել,  
Ներքի, ներքի, եղբայր իմ:

Մանուկ էի, տըզեա էի,  
Անվարժ, անկիրթ գլխովին.




напишем инструкцию, нужно только узнать их положение". —

Ասում են, որ կոմիտեեր  
Ճանապարհից են ծովել,  
Արեան ու Յուպիտերը  
Պատերազմ են բաց արել:  
Այսպես երևույթի հետ  
Կարծեմ, որ քաջ ծանոթ ես,  
Չի՞ կարելի, Աստղագետ,  
Նոցա մի նոր կարգ գրես:  
Փիլիսոփա, իմաստուն,  
Պոչով աստղերի մեկնիչ.—  
Սոքա են քո մականուն  
Bravo! Չախար Իսայիչ:

17. 1860 թվականին Շահազիզն ավարտում է Լազարյան ձեմարանի գիմնազիտնական ընթացքը և մտնում է Լիկեոն, որ բաղկացած էր երկու դասարանից և կազմում էր ձեմարանի վեց դասարանի շարունակությունը, արևելագիտություն մասնագիտական յոթերորդ և ութերորդ բարձր դասարանները: Այստեղ էլ նա իր գլխավոր ուշադրությունը դարձնում է հայերենի վրա, անդադար կարդալով, անդադար կատարելագործվելով գրաբարագիտություն մեջ և հետզհետե կոկեղով, մշակելով իր աշխարհաբար լեզուն, և նախապատրաստվելով ու տալով նրան այն ձևն ու գույնը, որ մենք հետո տեսնում ենք «Լեոնի վշտի» մեջ: Սեզրակ

հանգեաւ առ տէր հանգուցեալ Յովակիմ Տէր-Սիմոնեան Շահազիզեանց ի յաստիճանի դուրերնսկի սեկրետարութեան: Ասում են, որ նա իր հոգևարքի ծանր ընթացքին խնդրել է, որ իր կրթքի վրա գնեն Սմբատի վերջին նամակը, որ նա հեշտությունը հոգին տա: Նա սիրել է իր այդ կրթուհի եղբորը և ցանկացել է, որ նա իր բաղձանքների կատարողը հանդիսանա, այսինքն՝ բարձր ուսում ստանա և իր սոհմի, իր ընտանիքի պարծանքը դառնա, ուստի և ավել է նրան այն ըտրը, ինչից ինքը զրկված է եղել՝ բարոյական և նյութական օգնություն:

Սույն աշխտանքի առաջաբանից մեզ հայտնի է, որ Սմբատը երախտամուտ չի եղել. հետագայում, երբ նա ավարտել է իր ուսման ընթացքը և արդեն ձեմարանի հարգված ուսուցիչներից մեկն է հանդիսացել, հիշելով իր մեկենաս եղբորը, նույն չափով և ավելի ևս երախտահատույց է եղել նրա հիշատակին, հեղհետե բերել տալով նրա երեք որդիներին Մոսկվա և նրանց որպես գիշերօթիկ սան ընդունել տալով ձեմարանում:



Ս. Շահազիզը 1862 թվին:

Մանգինյանը, որ ձեռնարանի այդ ժամանակվա աշակերտներից է եղել, վկայում է, որ աշակերտները սիրելիս են եղել լսել նրա սահուն և «ուռճացած» աշխարհաբար լեզուն, որ իր կանոնավորութամբ, իր ճկունութամբ և քաղցրահնչյունութամբ, իբրև մի նոր չլաված ու չտեսնված բան, տարբեր եղածներից, գրավում, հմայում էր ամենքին: (Տես՝ Սեդրակ Մանգինյանի հորեյանական նամակը՝ «Սմբատ Շահադիզյանի երեսնամյա հորեյանը» գրքի մեջ):

18. 1862 թվականին Շահադիզն ավարտել է Լիկեոնի դասընթացը և մտել կյանք: Նրա անունը, իբրև առաջադեմ աշակերտի և ուսանողի, գրվել է ոսկե տախտակի վրա՝ նախկին առաջադեմ աշակերտների և ուսանողների շարքում: ձեռնարանի վարչությունը նկատի առնելով նրա առաջադիմությունն ու ընդունակությունները, և առաջնորդվելով ձեռնարանի կանոնադրութամբ, որի գործությամբ Լազարյան թոշակավորները, շրջանավարտ լինելուց հետո, պարտական էին վեց տարի ծառայելու ձեռնարանում, միջնորդել է հոգաբարձուի առաջ և նրան թողել ձեռնարանում, իբրև վերակացու և նախակրթարանի ուսուցիչ, որ և սիրով ընդունել ու հաստատել է հոգաբարձուն:

19. Իբրև նախակրթարանի ուսուցիչ, Շահադիզը եղել է օրինակելի: Աշակերտները սիրել են նրան և նրա խոսքը պատվերները կատարել են անպայման: Նա իր փոքրահասակ ունկնդիրներին իմացել է գրավել, հարցասիրության ընտելացնել: Նա այդ դասարանի պարզ, փոքրիկ ընթացքը, լինել դա կարգալ, գրել, համարել—բոլորը, բոլորն էլ ավանդել է երեխաների ըմբռնողութանը մատչելի եղանակով, հաճախ իր խոսակցությունն ու զրույցները համեմելով զվարճարանութամբ և կատակներով, հաճախ նա նրանց խրատական, զվարճալի պատմություններ է արել, լավ-լավ հեքիաթներ է պատմել և ուրախացրել նրանց ու ինքն էլ ուրախացել նրանց հետ: Ասում են, որ նա մի անգամ դասարան է տարել մի փոքրիկ երաժշտական գործիք և պահել ամբիոնի մեջ: Դասի ժամանակ նկատելով, որ աշակերտներն սկսում են հորանջել, ձանձրանալ և անուշադիր դառնալ, նա ծածուկ լարել է գործիքը, և հանկարծ լսվել է մի քաղցր, անուշ մեղեդի, որ գրավելով փոքրիկների ուշադրությունը, փարատել է նրանց ձանձրությունը, որով և նա միջոց է ստացել հաջողութամբ շարունակելու իր ընդհատած դասը: Եւ այդպիսի դասատվության հետևանքը եղել է կատարյալ հաղթություն:

Երբեք և ոչ մի անբավականություն, դժգոհություն չի պատահել. ամենքն էլ, սակավ բացառությամբ, բավարար առաջադիմութամբ փոխադրվել են առաջին դասարանը և այնքան պատրաստություն են ունեցել, որ այնուհետև հեշտություն կարողացել են շարունակել ու առաջ դնալ, և հաջորդ դասարաններում նա պատմել է, որ ինքն իր դասավանդության գործում ոչ մի դասարանում այնքան բավականություն չի ստացել, որքան փոքրիկների մեջ, նախակրթարանում, որտեղ ինքը հանդիսացել է և՛ դաստիարակ, և՛ դասատու, և՛ դասագիրք: Նա ինքը հենց նախապատրաստված է եղել այդ դասարանում և քաջ ծանոթ է եղել դասարանի բոլոր հանգամանքներին. պաշտոնն էլ ըստ ամենայնի համապատասխանել է նրա ներքին հակումներին ու խառնվածքին: ձեռնարանի համար նա հայ աշակերտների կոնտինգենտ պետք է պատրաստեր: Գործելու ասպարեզը լայն էր և բարոյապես շահավետ: Փռվթ չէ, որ այդ ճանապարհը դժվար էր ու վշտա. աշխատավոր մշակին ցնացել է մշակել խոպան անդաստանը, որ աղագայում պիտի բեղմնավորեր ու վաստակավորի ճակատը զարգարեր դասին պատկով: Շահադիզը չի տատանվել, չի երկրայել. նա վստահ է եղել իր ուժերին. նա ոգևորվել է իր կատարելիք, ըստ երկրվույթին, փոքր, բայց, ըստ էության, շատ կարևոր, շատ խոշոր գործով. անհուն եռանդը մղել է նրան դեպի սիրած աշխարհը, և նա սիրով կպել է դժվար, պատասխանատու գործին:

Նա, իբրև վերակացու, թեև եղել է չափազանց խիստ և պահանջող, այնպես որ նրա և ոչ մի խոսքը գետին չպետք է ընկներ, և աշակերտներից ոչ ոք, լինել նա մեծ թի փոքր, անհնազանդ չպիտի գտնվեր նրան, բայց եղել է վերին աստիճանի սիրող, արգարամիտ և ճշտապահ, որով և գրավել է ամենքի սերն ու համակրանքը:

20. 1867 թվի օգոստոսի 11-ին նա նշանակվել է հայոց լեզվի կրտսեր ուսուցիչ՝ ձեռնարանի առաջին երեք դասարաններում. դրա համար և նա ստիպված է լինում նույն ամսին գնալ Պետերբուրգ և համալսարանի արևելյան բաժնում, Քերով-բե Պատկանյանի պրոֆեսորության օրով, թեկնածուական քննություն ենթարկվել, որովհետև Լազարյան Լիկեոնն այդ ժամանակները իր շրջանավարտներին միջնակարգ դպրոցներում ուսուցիչ լինելու ցենզ կամ արտոնություն դեռ չէր տալիս: Նրա քննությունները լինում են քերականացի և գրավոր, բերանացի հար-

ցաքննվել է հայ-վիրական ճյուղին պատկանած բոլոր առարկաներից ու գիտություններից և ներկայացրել է առանձին գիտական շարադրություն (գիտերտացիա) իր մասնագիտությունից, հայերենից, որ արժանացել է համալսարանի խորհրդի հավանություն, և նույն 1867 թվի սեպտեմբերի 4-ին ստացել է «Արևելյան լեզվաց կանգիդատի» գիտական աստիճան: Պահանջվում էր և լատիներենի գիտությունը, բայց քանի որ ձեռնարանում նրա աշակերտություն ժամանակ այդ լեզուն չէր ավանդվել, ուստի նրանից էլ չեն պահանջել:

21. 1873 թվին վախճանվել է Մսեր Մագիստրոսը, որ ձեմարանի կրօնուսուցչն էր և բարձր դասարանների հայոց լեզվի ուսուցիչը, և նա ստացել է հայոց լեզվի նրա դասերը, նշանակվել նույն առարկայի ավագ ուսուցիչ, իր ձեռքում կենտրոնացնելով բարձր դասարանների հայոց լեզվի բոլոր դասերը՝ սկսած երրորդ դասարանից: Դասավանդվում էր գրաբարը, ուստի և Շահազիզն էլ ստիպված է լինում շարունակել նույնը: Սակայն նա ստիպված լինելով թողնել գրաբարը, իբրև պաշտոնապես ընդունված և կայսերահաստատ ծրագրով ևս սահմանված դասատվություն առարկա, աշխատում է նրա բովանդակությունը, ըստ հնարավորության, ամենալայն չափերով աշխարհաբարացնել, ավելի թարմություն և կենդանություն մտցնել մեռած լեզվի դասատվության եղանակի մեջ, որով և միանգամայն հակապատկեր է հանդիսանում իր նախորդներին՝ Սալլանթյանին, Էմինին և Մսերին, որոնք, կարծես դիտմամբ, այնպես էին վարվել, որ փոշոտածն ավելի փոշոտվի, հնացածն ավելի հնանա և մեռածն իսպառ հույս չունենա հարություն առնելու: Նախ և առաջ նա դեն է շարտել «Ճարտասանությունը», որ անցնում էին Միքայել Սալլանթյանի՝ 1836 թվին Մոսկվայում տպագրված գրքով և Մսերի «Հրահանգ ճարտասանութեան ի պէտս աշակերտաց» ձեռագիր տետրակով: Նա գործածությունից հանում է նույն Սալլանթյանի և Էմինի քերականություններն իրենց պատմական, պարառական, նախդրիվ տրական հոլովներով և բազմաթիվ հոլովմունքներով, որոնցից առաջինը տպագրված էր 1827 թվին, իսկ երկրորդը՝ 1846 թվին: Իբրև դասարանական ընթերցանություն գիրք, երրորդ-չորրորդ դասարանների համար նա պահում է Էմինի «Ընտիր հատվածքը», իսկ մյուս դասարաններում կարդում է հայոց մատենագիրներին, հաշվի առնելով դասարանի գիտություն ու պատրաստություն և աշակերտների

զարգացման աստիճանը, իսկ իբրև քերականության ձեռնարկ՝ նա պատրաստում է իր սեփական ձեռագիր տետրակը, որի մեջ ամփոփված էին միայն լեզվի գլխավոր կանոնները և ընդհանրապես քերականությունը շատ համառոտած ու պարզեցրած էր: Այդ քերականության ձեռագիրը, որ պատրաստված է եղել տպագրության և թույլատրված գրաքննիչ Քերովբե Պատկանյանի կողմից, ներկայումս զտնվում է ՀՍՍՌ Գրական թանգարանում՝ նրա թղթերի մեջ: Բացի այս բոլորից, որ գլխավորն է, նա մըացնում է աշխարհաբարի շարադրությունը:

22. 1880 թվի օգոստոսի 15-ին լրանում է Շահազիզի ուսուցչություն 18 տարին և, ձեռնարանի կանոնադրության հիման վրա, նա սկսում է ստանալ բարձր գասագին—1250 ուռըլի՝ 12 դասի համար: 1887 թվի օգոստոսի 1-ին լրանում է նրա ծառայության 25-ամյակը, և այդ առթիվ նրան տրվում է, բացի ոտճիկից, թոշակ 750 ուռըլի և արտոնություն այլևս ծառայելու մի հնգամյակ: 1892 թվին, նրա ծառայության 30-ամյակը լրանալու պատճառով, նրա թոշակն ավելանում է 150 ուռըլիով և նրան արտոնություն է տրվում ծառայելու այլևս մի հնգամյակ ծառայելու: Իր դիմումի համաձայն, արձակվում է պաշտոնից՝ 1050 ուռըլի կենսաթոշակով: Այդ 35 տարվա ծառայության ընթացքում նա միշտ հարգված և գնահատված է լինում իր իշխանավորներից, սերված է լինում ծառայակիցներից և աշակերտներից, որի հետևանքը լինում է այն, որ նա հաճախ պարգևատրվում էր պետական ծառայության աստիճաններով ու շքանշաններով և մինչև իսկ պարսից արեզական և առյուծի երկրորդ աստիճանի սերհենզություն պատվանշանով՝ թավրիզի Հովսեփի խանի որդի Ռաֆայել խանի և ուրիշ պարսկահայատակներին զավակների դաստիարակության ու կրթության համար, որին, իբրև մի հավաստի վկայություն, կցված է լինում նասր-է-գորին, իբրև մի հավաստի վկայություն, կցված է լինում նասր-է-գորին շահի ոսկեգոծ ֆիրմանը: Այդ ֆիրմանն առյուծի շքանշանի հետ միասին ներկայումս պահվում է ՀՍՍՌ Գրական թանգարանում:


23. 1897 թվին ձեմարանի վերատեսուչ Գևորգ Քանանյանը, ղեռ ուսման տարին չվերջացած, սկսում է զանազան ակնարկներով հասկացնել նրան, թե ձեմարանի վարչությունը, այսինքն՝ ինքը, այլևս տրամադիր չէ միջնորդելու նրա ծառայության հա-



թյունը, և ոչ նույնիսկ երկինքը: Հավատա ինձ, որ այս տողերս գրում եմ և արատաւը հեղեղի պէս թափվում է աչքերիցս: Ներքիւ ինձ, Երվանդ, որ և դու պիտի շարժվիս ինձ հետ, սորա համար և կտրում եմ խոսքս:—Եվ ինձ այլ մի հիշիր սորա մասին: Կշոված է և որոշված, այլևս Սմբատդ ձեմարանում չէ: Ուրիշ շատ բաներ կամենում էի գրել, բայց այժմ անկարող եմ...» և այլն:

Նա 46 տարի շարունակ ապրած լինելով ձեմարանում՝ առաջ իբրև աշակերտ և Լիկեոնի ուսանող, հետո իբրև վերակացու-դաստիարակ, որոնց բնակարան էր հատկացվում ձեմարանում և հետագայում էլ իբրև բացառություն, ոչ օրինակ այլոց, նա ազատ է եղել բնակարանի հոգսից և միանգամայն անընտել Մոսկվայի վարձու բնակարանների դժվար պայմաններին: Եվ սկզբվել է նրա թափառական կյանքը քաղաքում մի բնակարանից մյուսը—մի տեղ բնակարան է անհարմար եղել, մյուս տեղ աղախինն է նրան կողոպտել, մի այլ տեղ մի ուրիշ պատճառով, և այսպես միշտ ու շարունակ, և ոչ մի տեղ հանգիստ և դադար՝ մինչև որ, վերջապես, նա խարխախ է ձգել Մյասնիցկի քաղաքամասում, Կուզնեցովի տանը, «Շվեյցարիա» կոչված հյուրանոցի երկու օթևանից բաղկացած № 65 սենյակում, որտեղ նա գտել է իր համար համեմատական հարմարություն:

25. Շահազիզն իր ծառայակիցներից միայն մեկի հետ չի կարողանում կորեկտ և լավ հարաբերություն պահպանել— «Գամառ-Քաթիպա» գրական ընկերության անդամ, ձեմարանի տեսուչ, ղզլարցի Գևորգ Քանանյանի հետ, որ էմինից հետո նշանակվել էր տեսուչ (1861 թ.), իսկ այնուհետև, Նիկողայոս Դիլանյանի մահից հետո, ստանձնել էր և ձեմարանի վերատեսչի պաշտոնը: ձեմարանի երկու հայ պաշտոնյաների միջև թշնամական այդ հարաբերությունը հին բան էր. դա սկսվել էր 1865 թվից և հետզհետե զորանալով, սուր բնավորություն էր ստացել և շարունակվել մինչև վերջը, անընդհատ արյուն պղտորելու պատճառ լինելով երկուսի համար էլ, անընդհատ լարված վիճակի մեջ պահելով երկուսին էլ, երկուսի մաղձն էլ խառնելով: Դրա, այդ թշնամության սկզբնապատճառը եղել էր այն բողոքագիրը, որ խմբագրվել ուղարկվել էր ձեմարանի հոգաբարձու Սաչիկ աղա Լազարյանին Շահազիզի մասին, երբ նա դեռ երբորդ տարին էր, որ ծառայում էր ձեմարանում: Բողոքը նոր լույս տեսած (1865 թ.) «Լևոնի վշտի» առթիվ է եղել, որ իր բովանդակությամբ, իր ընդհանուր ուղղությամբ ու ոգով, իր պարունակած



Ս. Շահազիզը 1865 թվին:

կծու ակնարկներով դուր չէր եկել Մսերին, Էմինին, Քանանյանին և զրանց պես մտածողներին, որոնք զրա մեջ տեսել էին իրենց հարազատ պատկերը, հանձին Սմբատ Շահազիզի տեսել էին իրենց մի նոր հակառակորդ, Նազարյանց-Նալբանդյանի մի նոր եռանդուն կուսակից, Նազարյանց-Նալբանդյանի, որոնց նրանք համարել են իրենց անձնական թշնամի, իսկ նրանց հրատարակած «Հյուսիսսփայլ»-ի ուղղութիւնը՝ ազգի համար փասակար, և տարածած գաղափարները՝ բոլորովին ներհակ իրենց համոզմունքներին: Խաչիկ աղան ինքն էլ հին հայացքների տեր լինելով՝ բնականաբար զայրացել է: Բողոքին ընթացք է տրվել և ուղարկվել ձեռնարանի այն ժամանակվա վերատեսուչ Իվան Կոնդրատիչ Բարստին՝ քննելու և հետևանքի մասին զեկուցելու: Թե ինչ պատիժ է սպառնացել Շահազիզին, կարելի էր եղբակացնել վերատեսչի պաշտպանական պատասխանի վերջին խոսքերից. «Он любим всем заведением, энергичен, честен. Возможно-ли его уволить?» (Տես այդ մասին «Հոբելյանի տարեգրածը», էջ 45):

26. Շահազիզը, բացի նրանից, որ միշտ հարգված է եղել իր իշխանավորներից և սիրված իր ծառայակիցներից, շքապատված է եղել և լավ մտերիմ ընկերներով ու սրտակից բարեկամներով, որոնց մեջ առաջին տեղը բռնում էին Ս. Նազարյանցը, ձեռնարանի վերակացու Կարապետ Արղանդուլյանը, Միքայել Միանասարյանը, Մանուկ Սաղաթյանը, Հովհաննես Տեր-Հակոբյանը, Մոսկվայի եկեղեցու երկարամյա երեցփոխ Մելքոն Փանյանը, մոսկվարնակ Միքայել Ստեփանյանը և մյուսները: Նազարյանցին հաճախ մենք պատահել ենք նրա տանը, այն ժամանակ, երբ նա պատրաստութիւն էր տեսնում «Լապտերը» հրատարակելու, և իր մահից առաջ, երբ նրա գլխին բրդի էր մի դժբախտ, չարագուշակ ընտանեկան փոթորիկ և երբ, այդ պատճառով, նա իր սեփական օջախից դուրս գալով, ապրում էր հյուրանոցում: Մանուկ Սաղաթյանին և Շահազիզին միմյանց հետ կապողը հանդիսացել է այն հոգեկան միութիւնը, ներքին աշխարհի այն համանմանութիւնը, որ եղել է նրանց խառնվածքի մեջ: Սաղաթյանն էլ բանաստեղծ էր: Լեւոնտովի «Դեկ» հրաշալի թարգմանութիւնը ցույց է տալիս, որ եթե բնութիւնն ավելի երկար կյանք պարգևած լիներ նրան, մեր աշխարհաբար գրականութիւնը մի զորեղ բանաստեղծ ևս կունենար: Դժբախտաբար, թոքերի անգութ հիվանդութիւնը զեռ մանուկ հասակից բուն զրած լինելով նրա մեջ և տարիների հետ հետզհետե

աճելով ու դարգանալով, մահվան դուռն է հասցրել նրան: 1865 թվին բժիշկների խորհրդով նա ստիպված է եղել թողնել Մոսկվան և փոխադրվել Երևան, որտեղ և վախճանվել է հաջորդ՝ 1866 թ. փետրվարին: Շահազիզն այնքան մոտ է եղել ու սիրել Սաղաթյանին, որ նրա Երևան գնալու ճանապարհածախսը և այնտեղ ապրելու զրամն էլ, 600 ռուբլի, ինքն է հողացել, փոխառնելով այն տոկոսով մի հայ վաճառականից և, նրա մահից հետո, ինքը հետզհետե շատ նեղութիւններ հատուցել: Այդ տեսակետից ուշադրութեան արժանի պիտի լինեն այն սրտառուչ տողերը, որ Շահազիզը նվիրել է նրան իր «Հոբելյանի տարեգրածը» գրքուկում: Շահազիզը պատմում էր, որ «Դեկ» թարգմանութիւնը և «Լեոնի վշտի» գրութիւնը կատարվել է միաժամանակ. մի սենյակում Սաղաթյանը թարգմանել է իր «Դեկը», մյուսում Շահազիզը նույն ժամանակ գրելիս է եղել իր «Լեոնի վշտը», որ, ասում են, Նալբանդյանը կարդալով, բացականչել է, թե «Լեոնի վշտը յուր վիշտն է»:

27. Շահազիզի հոբելյանը կատարվել է երեք անգամ առաջին անգամ, նրա 25-ամյակի առթիվ՝ 1887 թ., երկրորդ անգամ, 30-ամյակի առթիվ՝ 1892 թ. ապրիլի 9-ին, ընդհանուր կերպով, Մոսկվայի հայ հասարակութեան նախաձեռնութեամբ, երրորդ անգամ 35-ամյակի առթիվ՝ 1897 թ., մասնավոր կերպով, նրա աշակերտների ձեռքով: Ձեռնարանի աշակերտութիւնն ընդհանրապես սիրել և հարգել է նրան, իբրև իրենց մայրենի լեզուն իրենց սիրել տվող ուսուցչի և աղնիվ ու շիտակ մարդու, և ինքը Շահազիզն էլ փոխադարձաբար սիրել է իր աշակերտներին, ինչպես այդ երևում է նրա նամակներից: Ընդհանուր կերպով կազմակերպված նրա 30-ամյակի հոբելյանը կատարվել է վայելուչ հանդիսավորութեամբ, որի հետևանքը եղել է Շահազիզի «Հոբելյանի տարեգրածը» խորագիրը կրող շքեղ հրատարակութիւնը հոբելյարի նոր ութ ոտանավորով (1893 թ.) լե «Արուլյան-Նազարյան Փոնդ»-ի կազմակերպումն այն գումարով, որ Մոսկվայի հայ հասարակութիւնն իր մեջ հավաքելով, դրել էր նրա տրամադրութեան ներքո ի հիշատակ այդ հոբելյանի Ֆոնդի սկզբնական գումարը եղել է 5705 ռուբլի, որ հետո, մինչև 1900 թ. աճել դարձել է 10,138 ռուբլի, որի տոկոսները և մասնավոր կերպով, մինչև պետութեան կողմից Ֆոնդի հաստատվելը, բանաստեղծի ձեռքով բաժանվել է չքավոր գրականագետներին: Այս հանդիսավոր հոբելյանի գլխավոր դարդը կազմել են

Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Ներսես Ներսիսյանի<sup>1</sup> ընդար-  
ձակ հատը, որի մեջ մանրամասնաբար նա քննել, վեր է հանել հո-

<sup>1</sup> Մոսկվայի համալսարանի ասուրի իրավունքի պրոֆ. Ներսես Հովսեփի  
Ներսիսյանը Շահազիզի լավ և համակրելի բարեկամներից մեկն է եղել:  
Շահազիզը նրա մահվան առթիվ իր եղբորորդուն 1894 թվի մարտի 20-ին  
գրած նամակում նվիրել է նրան հետեյալ շերտ համակրական տոգերը. «Արդեն  
հեռագրներից ու օրագրներից իմացած կլինես այն զգալի կորուստի մասին,  
որ ունեցավ տեղիս հասարակութունը, այդ է Ներսիսյանի մահը: Բնությունից  
զարդարված զեղեցիկ հատկություններով և զլիավորապես մտավոր կարողու-  
թյամբ, հանգուցյալը գրավել էր շատերիս համակրությունը: Նա յուր մասնա-  
զիտությամբ պատկանելով օտար շրջանի ու ինտերեսների, պահել էր կեն-  
դանի և յուր բնածին ֆիզիոլոգիական ծագումը, և շատ գերազանց էր յուր  
կարգի հայերից, որոնց համար չկար հայրենիք ու ազգություն: Սակայն Ներ-  
սիսյանը յուր բնական ձիրքերի հետ չէր ստացել և մի հաստատուն ու վճռողա-  
կան կամք, սորա համար նա հաճախակի կամեմայով երկու ևս ներհակ կողմերը  
շահել, վերջիվերջո ընկնում էր երկու աթոռի արանքը, և սկսած գործը մնում  
էր անորոշ: Ինչևիցե, ցավալի է, որ մի այդպիսի մարդ տակավին անժամա-  
նակ զնայ այս աշխարհից»:

Այս մի քանի համակրելի տողերով նա բնորոշելով իր բարեկամ Ներսի-  
սյանին, գրանով կամեցել է հերքած լինել նրա վերաբերյալ մեր մամուլում մինչև  
այդ լուս տեսած սուտ ու սխալ տեղեկությունները, որոնց մասին նա հիշել  
էր իր եղբորորդուն 1903 թվի ապրիլի 27-ին գրած նամակում: «Ճարպալի»  
վերջին համարում զրված է հանգուցյալ Ներսիսյանի պատկերը մի քանի  
ծանոթություններով, գրել էր նա այդ նամակում,—և, ի միջի այտոց, գրած  
էր, որ իբրև թե Ներսիսյանի զլիավոր գործունեությունը հայրենասիրական  
ժողովներն էին Մոսկվայի գողութի մեջ, մանավանդ Թյուրքիայի որբերի  
մասին, որոնք սովորաբար լինում էին ժամհարյանների աներում, ուր դիմում  
էին հայերը, որոնց հետ շփվում էր և Ս. Շահ-Ալիզը: Անհեթեթ տղայական  
թոթովանք:—Առաջինը ասեմ, որ Ներսիսյանի օրերին բնավ որբերի խնդիր  
չի եղել, եղել է միայն կոտորածների խնդիր, որով զրազված էր զլիավորա-  
բար Լեոնդոմի Կովիտեմ: Մոսկվայի հայերս էլ շատ ժողովներ ենք ունեցել  
այդ մասին, որոնց նախագահ առաջնորդը ևս եմ եղել և ըստ իմ կարողու-  
թյան միշտ ավելի եմ տվել ուրիշներից և առաջինը ստորագրել, որ մյուսներն  
էլ հետևեն ինձ: Եթե ես իմ վարքը գրեի և իմ եռանդը և իմ անհայտ ու զաղտնի  
զոհաբերութունները կից գնեի, այդ փառքուս պարոնները պետք է գետին  
մտնեին, եթե միայն ամբ զգային իրանց սրտում, վայ այդ տեսակ հայրենա-  
սերներին, որոնց հայրենասիրությունը իրենց թոքերի և ուղեղի բորբոքումն է:

Այս, մեր կարծիքով, շատ ստույգ հերքման վրա մենք պետք է ավելաց-  
նենք և այն, որ Մոսկվայի որբախնամ հանձնաժողովը կազմակերպվել է Հով-  
հանես Ժամհարյանի ասանը՝ Շահազիզի հրավերքով և, ինչպես երևում է  
ընասանեղծի այդ առթիվ իր եղբորորդուն գրած մի անթվական նամակից,  
նախագահ ու շահնդապետ ընտրվել է ինքը Շահազիզը և անդամներ—Ս.  
Մամիկոնյանը, Ս. Հովհաննիսյանը, Ե. Պոպովյանը, Ն. Խրամյանը և Մ. Սա-  
հարբեկյանը: Եթե Ներսիսյանը որբերին խնամելու գործում մի առանձին դեր



Մանուկ Սաղաթյան:

բելլարի արժանավորութիւնը, և Աղեքսանդր Մատուրյանի՝ հորե-  
լլարին նվիրած «Հզոր երգեր» խորագրով սիրուն ոտանավորը<sup>1</sup>.

Դառն է մեր կյանքը, տխուր մեր օրեր,  
Զկա մեզ հանդիստ, չկա խնդութիւն.  
Միայն տառապանք և անվերջ վշտեր  
Մեր հեզ սրտերից քամում են արյուն...  
Նայում ենք վերև—ամպամած երկինք,  
Նայում ենք ներքև—շիրիմ ոտքի տակ,  
Նայում ենք մեր շուրջ—խռովահուշ մրբիկ,  
Իսկ մեր ձեռքերին—շղթա ու կապանք.  
Եվ որպես խավար, մռայլված գիշեր,  
Անդր ողորում են մեր սիրուն ու հոգին.  
Եվ քանի՜ ըղձեր, քանի՜ խորհուրդներ  
Ճնշված նիրհում են մեր կրծքի տակին...  
Դառն է մեր կյանքը, տխուր մեր օրեր,  
Մեզ կաշկանդել է թմրութեան շղթան.  
Օ՛, երգիչ, երգիր մեզ հզոր երգեր,

կատարած լինել, անվաղն պետք է, եթե ոչ նախագահ, գոնե անգամ ընտրե-  
լած լինել, որ չի եղել

<sup>1</sup> Բանաստեղծ Աղեքսանդր Մատուրյանն իր Մոսկվա դալու օրերից սկսած  
այնքան մոտ հարաբերութիւն է ունեցել Շահազիզի հետ և այնքան շահ-  
ված ու պատվասիրված է եղել նրանից, որ ընկալանքաբար մենք հարկավոր  
ենք համարել և անհրաժեշտ աւիթ ունեցել քանիցս հիշել նրա անունը կեն-  
սադրականիս մեջ, բայց մի պատահական դեպքի պատճառով, որի մեջ, մեր  
կարծիքով, Մատուրյանն այնքան էլ մեղավոր չի եղել, Շահազիզը վշտա-  
ցած լինելով նրանից, խզել է իր հարաբերութիւնը նրա հետ: Ինքը Շահա-  
զիզն իր 1902 թվի դեկտեմբերի 30-ի նամակում հետևյալ կերպով է բա-  
ցատրում այդ դեպքը և մինչև այդ նրա հետ ունեցած իր հարաբերութիւնը:

«Մատուրյանի անունը հիշելով քո նամակի մեջ,—գրում է նա,—ինձ  
աւիթ ես տալի մի քանի խոք ասելու նորա մասին: Գեղ պետք է ասել, որ  
այդ պարոնը, կարծեմ 16—17 տարի առաջ դալով Մոսկվա, ամենից առաջ  
վայելել է իմ բարեկամութիւնը և իմ անկեղծ սերը: Թե նա ինչ անհեթեթ  
զազափարոնեքով էր եկել, ես ավելորդ եմ համարում խոսել բայց որ բոլոր  
մասնագետութեան եղանակը փոխվել է այն օրերից հետո, այդ ուղիղ է: Կարծիք-  
ների փոփոխութիւնն առաջ է եկել նրա ընթերցասիրութիւնից, այլ և  
շփվելով դանդաղ գրական շրջանների հետ, մանավանդ Վեսելովսկու ընտա-  
նիքի հետ, բայց կարծում եմ, որ իմ կենդանի և անընդհատ խոսքն ու զբոսը  
նույնպես ազդել են նորա վերաբերյալ այս ու այն հայկական գրական երևույթ-  
ներին: Հիշյալ պարոնը հազորդելով յուր կյանքի բոլոր տեղի և անտեղի  
մանրամասնութիւնները, միանգամայն մոռացութեան է առել յուր կրթ-  
կան հանգամանքները երեւի, այն նեղ շրջանի ճնշման ենթարկվելով, որի հետ

Բոցավառ երգեր ոգևորութեան.

Երգիր մեզ անահ, կորովի ձայնով  
Փառք ու հաղթանակ փայլուն գործերի,  
Երգիր, որ ազատ քնարիդ լարերով  
Ցնցես թելերը թմրած սրտերի...  
Երգիր մեզ այն հին երգը դարևոր,  
Որ մի ժամանակ թնդալով ուժգին  
Կովի փոթորկում՝ վսեմ, փառավոր  
Դափնիք էր ձոնում մեր քաջ պապերին...  
Երգիր... Թող քո երգն անկեղծ, ոգելից,  
Որպես ջերմ աղոթք հայրենասերի,  
Ցրվե մռայլը վհատ սրտերից,  
Բանա մեզ աղբյուր ոսկի հույսերի...  
Թող քո հոգեշունչ, կարող երգերով  
Մովի պես հուզվի հայրենի աշխարհ.  
Թող նոքա մեր ծանր ուղին հարթելով,  
Պատրաստեն մեզ մի նոր կյանքի համար...  
Դառն է մեր կյանքը, տխուր մեր օրեր,  
Մեզ կաշկանդել է թմրութեան շղթան.  
Օ՛, երգիչ, երգիր մեզ հզոր երգեր,  
Բոցավառ երգեր ոգևորութեան...<sup>1</sup>

ինչպես կոտաններ, նա միացել է վերջին ժամանակները: Այնուամենայնիվ  
ես մեծ վեհանձնութեամբ նայեցի այդ ապերախտութեան վերա և ձայն էլ չհա-  
նեցի: Բայց նրա վերջին վարժուցը, վերջապես, շարժեց իմ արդարացի բար-  
կութիւնը:

«Ինչպես քեզ հայտնի է, անցյալ տարին մի կաթնակեր մանուկ Վեսելով-  
սկու «Армянский поэт» գրքի աւիթով յուր հուշարարի հետ միասին «Но-  
вости дня» լրագրում գետեղց մի պատգամով, որի մասին Պ. Մատուրյանը մի  
քանի անգամ եկավ ինձ մոտ և հայտնեց յուր զգվածքը: Բայց ինչ մեծ դար-  
մանք ինձ պատճառեց այն հանգամանքը, երբ այն կաթնակեր մանուկները մի  
բրոշուր կամ հավաքածու հրատարակելով Վերխտատարը հայ բանաստեղծ-  
ներից, նրանց հետ տեսա և զգվածք քարոզողին Այս պատարակելի գործո-  
ղութեան եղանակը ես առաջ բերի այստեղ, որ դու քո հորեղբորը թեթևամիտ  
մարդ չկարծես, եթե ասե, որ այժմ նա հովացել է Մատուրյանից և յուր հա-  
րաբերութիւնները կտրել:

Բարեբախտաբար այդ մի թյուրիմացութիւն է եղել, որ հետագայում  
պարզվել է և նախկին սիրալի հարաբերութիւնը նրանց մեջ վերականգնվել:

<sup>1</sup> Հորելյանի թե՛ բուն ցերեկվա հանդեսի նկարագրութիւնը Հովհաննես  
Տեր-Հակոբյանի տանը և թե՛ երեկոյան «Հորելյանական հացկերութիւնը»

28. Ս. Շահազիզի թղթերի մեջ նրա մահից հետո գտնու-  
վել է նրա մի փոքրադիր սև մոմաշորակազմ ծոցատետրը, որի  
մեջ նրա ձեռքով գրված է Արուսյան-Նազարյան գրական ֆոնդի  
մի շատ համառոտ պատմութիւնը «Արուսյան-Նազարյան գրական  
ֆոնդ» խորագրով (սկիզբը 1892 թ.):

«Արուսյան-Նազարյան գրական ֆոնդը» հիմնված է 1892 թ.  
Ս. Շահազիզի 30-ամյա մանկավարժական և բանաստեղծա-  
կան հորեյանի առիթով և նվիրված նույն իսկ հորեյարին: Բայց  
հորեյարը նախապատիվ համարելով հայոց կուլտուրական ա-  
ռաճորդներին, որ են Արուսյան և Նազարյանց, հավաքած գու-  
մարն ընծայել է սրանց անուններին, կոչելով «Արուսյան-Նազար-  
յան գրական ֆոնդ»:

Ֆոնդի գումարը, 10,138 ո., սկզբում հանձնված է եղել  
Թիֆլիսի Բարեգործական Ընկերութեան, բայց հետո, 1900 թ.  
Ընկերութեան ծրագիրը փոփոխվելով, վերստին ստացավ հիմնա-  
դիրը Ս. Շահազիզ, որը տարին հինգ տոկոս տալով, այսինքն  
505 ուրբի, բաժանում է նյութապես պահասավոր հայ գրա-  
կաններին:<sup>1</sup>

«Էքսթրա» հյուրանոցի շքեղ դահլիճում տես «Միբառ Շահազիզյանի երեսնա-  
մյա հորեյանը (1862—1892)» գրքուկը, խմբագրված բանաստեղծ Ալ. Մառու-  
րյանի ձեռքով և տպագրված Մոսկվայում 1893 թվին:

Դեռ 1892 թվից առաջ ձեռարանի ուսուցչական խումբն է կամեցել  
տանել նրա 30-ամյակը վայելուչ հանդիսավորութեամբ և նվիրել նրան ձեռար-  
անի կողմից մի «Ոսկի ժետոն», իբրև հավերժական հիշատակ, բայց դրա հա-  
մար հարկավոր թույլտվութիւնն ստացված չի եղել ձեռարանի վերահասուչ  
Քեռրգ Քանայանից անձնական պատճառներով, և ուսուցիչների այդ բարե-  
ցանկութիւնը մնացել է անկատար:

<sup>1</sup> Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան ծրագիրը Գուրգենի  
կարգադրութեամբ փոփոխվելու հետևանքով, այդ նույն Ընկերութեան գործու-  
նեութիւնն այն աստիճան սահմանափակվել է, որ նա իրավունք չի ունեցել  
«Արուսյան-Նազարյան» ֆոնդի գումարը անգամ իր ձեռքին պահել ու նրա առ-  
կտանքը բաժանել կարեքաժոր գրականագետներին, ուստի և ստիպված է եղել  
գումարը վերագործնել իր տիրոջ՝ Շահազիզին: Այդ մասին Շահազի-  
զը 1899 թվի հուլիսի 8-ին գրում է իր եղբորորդուն. «Թիֆլիսի Բարեգոր-  
ծական Ընկերութեանից ստացա մի գումար, որով գեկուցանում է ընդ,  
խորհրդի միջոց սեպտեմբերին հետ դարձնել «Արուսյան-Նազարյան» ֆոնդի  
գումարը: Այդ գումարը ես մտադիր եմ եղբ. Ժամհարյանց կոնտրոլում ընթա-  
ցիկ հաշվով շահեցուցանելու և խորհրդակցութեամբ բաժանելու կարոտյալ գրա-  
կաններին: Դրա մանրամասնութիւնները հետո:

«Է՛հ, սիրելիս, հուսահատութեան ամպեր են կուտակվել մեր գլխին. ա-  
մենայն ինչ որ աղնիվ է և գեղեցիկ, միանգամայն լուել է մեր օրերում. դայիք  
ու արջեր գոժաբեր ձայներ են հանում մեր կողքին, այնպես որ կտառ-

Այս համառոտ պատմութեանը կցված՝ նպաստ ստացած ան-  
ձերի անվանացանկից երևում է, որ ամեն տարի բաշխվել է  
500 ո., ուրեմն, յոթ տարվա մեջ (մինչև հիմնադրի մահը) 3,500 ո.  
նպաստ ստացել են 14 հոգի, որոնցից մի քանիսը 2—3 տարի  
շարունակ, մի քանիսն էլ 5—6 տարի (Հովհ. Թումանյան և Պերճ  
Պոռչյան): Նպաստի ամենամեծ քանակը եղել է 200 ո., ամենա-  
փոքրը՝ 50 ո.:

Հիշյալ գումարը իր մահից առաջ հիմնադիրը տվել է մի  
վաճառականի՝ շահեցնելու և մուրհակները, ամփոփած մի ծրարի  
մեջ, հանձնել է նիկ. Ժամհարյանին ի պահպանութիւն, չհայտ-  
նած լինելով նրան, թե ինչ է ծրարի մեջ, ուստի և նրա մահից  
հետո դա բացվել է, դրամը ստացվել ու խառնվել է նրա կա-  
րողութեան, որ նույնպես պահվելիս է եղել «Ժամհարյանների  
բանկային կանտորում», և հետագայում, ժառանգութեան գործն  
ավարտվելուց հետո, բաժանվել է ժառանգների մեջ:

Ժառանգներից երեք եղբայր՝ Արմենակ, Սիմեոն և Երվանդ  
Շահազիզյաններն իրենց հորեղբոր դուստր Օլջաննայի հետ միա-  
սին հասկանալով, որ իրենց ձեռքն օրինական ժառանգութեան  
հետ միասին անցել է և գրական ֆոնդի մի որոշ մասը, 1902 թվի  
փետր. 11-ին հանձնել են Կովկասի Հայոց Բարեգործական Ըն-  
կերութեան 6,666 ո. 67 կ., իբրև ֆոնդի դրամից իրենց բաժին  
ընկած մի գումար, և ստացել են պատշաճ ստացական 1911 թվի  
մայիսի 16-ի թվով և 377 համարով: Դրա հետ միասին ժառանգ-  
ները պայման են դրած եղել, որ գումարը գործադրվի իր նպա-  
տակին:

29. Շահազիզը միակն է եղել մեր նոր հեղինակներ  
մեջ, որ ունեցել է իր սեփական կարողութիւնը, ապրել է իր  
ցանկացածի պիս և չի կարոտել ոչ ոքի օգնութեան, այլ, ընդհա-  
կառակը, նա ինքն է օգնել ուրիշներին: Նա իր ունեցածը կտա-  
կել է ոչ իր ազգականներին, այլ ազգին, որովհետև ազգակա-  
նութիւնն սովորական մտքով նա չի ճանաչել, այլ իրեն ժա-  
բակական ասպարիզում այդ իսկ կենդանիներին է մնացել գործելու և տնօրե-  
նելու...:

«Այն գեղեցիկ միտքը, որ մենք տածում էինք գրականներին օգնելու  
հարցում, կամաց-կամաց թուլանում է մեր մեջ, որովհետև ոտքի տակ հաստա-  
տութեան նեցուկ չունի ապագայում, և մենք ոչ մի կերպ չենք կարող հաճո-  
ղել բարեգործներին, որ նվիրաբեր լինեն բարի գործի համար... Ազնոյ թը-  
վառութեանս: Այստեղ դնում եմ վերջակետ, որ և ջո գգայուն սիրտը չմոր-  
մորվի, մանուկանդ որ քեզ հարկավոր է կազուրդել և ոչ հուսահատվել:

աւանդ է համարել ազգը: Ի այց նա որքան հաջողութեամբ առաջ շահել է իր կարողութիւնը, այնքան էլ ձախորդութեամբ վերջերում կորցրել է այդ կարողութեան մի խոշոր մասը, որի հետեւանքով էլ ստիպված փոխել է իր կտակը, և երբ հինը ոչնչացրած է եղել և նորն էլ գրած, բայց դեռ չհաստատած, հանկարծամահ է եղել: Այդ չհաստատված կտակով նա իր կարողութիւնը թողած է եղել Կեդրեան Ճեմարանին և մեր նախկին Թեմական դպրոցներին՝ յուրաքանչյուրին 20 հազար ռուբլի:

Շահագրկելի մահից հետո նրա թղթերի մեջ գտնվել է և բանաստեղծի ինքնաձեռագիր գրվածքը՝ «Կտակիս շարժառիթը» խորագրով, որ անտեղի չենք համարում այստեղ մեջ բերել— «Իմ առաջին ազգականը իմ ազգն է, որովհետև ազգը, ինչպես հավաքական միութիւն, ավելի երկար կյանք ունի, քան թե առանձին անհատը, այս պատճառով ես էլ իմ գույքիս մեծ մասը կտակել եմ իմ ազգիս: Եթե մի ինտելիգենտ կամ առհասարակ մի կրթված մարդ յուր հարստութիւնը կտակում է միայն յուր ազգականներին և մոռանում է հասարակութիւնը, այդ ասել է, որ նրա կրթութիւնը դեռ խոր արմատ չի արձակել նրա մեջ, այդպես է վարվում և ամեն մի անկիրթ կամ հսական կյանքով ապրող մարդ, թեև երբեմն և այդ անկիրթների մեջ էլ տեսնում ենք այնպիսի անհատներ, որոնք իրենց բնական բարեսիրութեամբ մեծամեծ գումարներ են թողել ազգի զարգացման համար:

«Եթե իմ ազգակից ժառանգներն անբավական փնտն ինձանից, որ քիչ եմ կտակել նրանց, կամ թե ոչինչ չեմ կտակել, փույթ չէ, ես ինքս շատ բավական եմ ինձանից, որ այս տեսակ կտակ եմ արել:

«Ինձ հարկավոր չէ ոչ մի նյութական արձան կամ պսակ, ես ինչպես իմ կենդանութեամբ փախել եմ այդ ժամանակավոր ցուցերից, այնպես էլ փախչում եմ դրանից և մահից հետո, միակ արձան, որ կարող էր ընծայել ինձ հասարակութիւնը, այդ այն է, որ բարի մարդիկ հետեւն իմ օրինակին և զոհաբեր լինեն՝ իրենց զժբախտ ազգի վիճակը թեթևացնելու:

«Ես, ինչպես իմ կենդանութեան ժամանակ, այնպես էլ իմ մահիցս հետո, ավանդում եմ իմ բազմաթիւ աշակերտներին այն համերաշխութեան պատվերը, որով մենք շողկապված ենք եղել Ճեմարանի հարկի տակ, աղաչում եմ անմոռաց հիշել մարդասիրութեան սկզբունքը և աջակցել հասարակաց պահանջներին»:

30. Շահագրկելի մանուկ հասակում զուրս եկած լինելով

Աշտարակից, իր ամբողջ կյանքն անց է կացրել Մոսկվայում և միայն մի անգամ, 1873 թվին, նա այցելել է իր ծննդավայրը, և այդ էլ ձերբացած մորը տեսնելու համար: Այդ հանգամանքը, սակայն, չպետք է մեկնվի այն մտքով, որ նա չի ուզեցել, չի սիրել իր ծննդավայրը և բնիկ երկիրը, այլ զուտ ընտանեկան հանգամանքներով: Նա ջերմ սիրով սիրել է Աշտարակն ու իր երկիրը և միշտ էլ հեռու հյուսիսից ուրախակից է եղել նրա ուրախութեան ու վշտակից նրա վշտերին. նա սիրել է իր Աշտարակը և նվիրել նրան իր «Աշտարակ» ոտանավորը, իսկ իր մորը, հատկապես, նվիրել է իր լավագույն «Երագ» ոտանավորը և «Վերջին հրաժեշտը»: Թե ինչպես է եղել նրա մուտքն Աշտարակ նրա այդ առաջին և վերջին այցելութեան ժամանակ, կարելի է տեսնել իր բարեկամ Մելքոն Փանյանին 1873 թվի հուլիսի 17-ին Երևանից գրած նրա մի սրտաշարժ նամակից:

«Թե ինչպես եղավ իմ մուտքը մեր մայրենի աշխարհը,— գըրում է նա,— փնտն է պատմել ինձ երես առ երես, երբ աստված կհաջողի հասնել այդտեղ, միայն այսքան ունիմ ասել քեզ, որ իմ մուտքը Աշտարակ այնքան տխրական և սրտաշարժ էր, որ շունչս սպառած դարձել էի ես մի արտասուքի ծով:

«Ո՞չ մեծ է սերը հայրենյաց, թեև տնանկութեան և թշվառութեան մեջ:

«Բոլոր ճանապարհը Երևանից մինչև Աշտարակ լցված էին ձիավորներով, աջ ու ահյակ կտրելով առաջս և աշխատելով մի աջողակաշարժ ձիախաղութեամբ ցուցանել յուրյանց արվեստը: Բոլոր Աշտարակի քուչաները և կտուրները լի էր կանանցով, երիտաններով և մարդերով, և զոքա բոլորեքյան մի նաղելի գլխաշարժութեամբ, ասես, աշխատում էին մեղմացնել սրտիս կակիժը, որ արդեն արտասովախառն հոտում էր աչքերիցս:

«Բայց, ո՞հ, բարեկամ, իմ մեջքս ու հոգիս բնավին կոտրվեցան, երբ տեսա իմ ալիզարդ պառավ ու հալումաշ եղած մայրս ի մեջ բազմամբոխ գյուղացի կանանց, զրկված երեք վաղամեծ թագավորի պես որդիներից: Ձիս ուղղեցի մորս կողմը և կալա ձեռից բոլոր հանդիսակիցքը զարմացած մտառութեանս, ազաղակեցի միաբերան. «օրհնյալ դավակ և որդի»:

«Տխրական է պատմութիւնս, տոհմը յալ սիրտս, թառամյալ հոգիս, ողբալով և արտասովելով արտասովեցի իմ երեք եղբարց գերեզմանքը և ահա նամակս գրելիս տակավին գնում են այդ արտասուքը ողորմելի աչքերից... Այսպես մեծ է կորուստը և

անդառնալի: Սիրեցին ինձ իմ դուրսացիքս և մասնակից եղան իմ նվիրական արաստվաց»:

Որ նա սիրել է իր ծննդավայր Աշտարակը և ուրախացել նրա առաջադիմութեամբ, այդ երևում է այն հանգամանքից, որ, երբ նա իմացել է, թե այնտեղ բացվել է «Մանր վարկի փոխառու դանձարկը», իսկույն շտապել է շնորհավորական հեռագիր ուղարկել և դանձարկդին իր կողմից նվիր փոխադրել 200 ռ.<sup>1</sup> Իսկ թե ինչ տնային հանգամանք է եղել, այդ էլ մասամբ պարզվում է իր եղբորորդուն գրած նրա մի նամակից, որ հրավիրած է եղել նրան ամառը գնալու միասին Աշտարակ և հանգստանալու այնտեղ. «Հայրենիքի հողն ու ջուրը,—գրել է նա,—ամենակարող միջոցներն են, այն և գրողներ բանաստեղծական գույներն և բազմազան հեղհեղման: Բայց քո հրավերքը—միասին ապրել ամառը մեր հայրենիքում—հազիվ թե կարող եմ ընդունել. որքան նազելի և քաղցր է այդ ըստ իդեալի, այնքան դժվար ու անիրագործելի ըստ էության: Դու ինձ ասա, մեր քաղցր բնագավառում մինք կարճո՞ղ ենք հանգիստ գտնել այն մերկ ու տկուր աղքատութեանը, որ տչքով պիտի տեսնենք, կարճո՞ղ ենք նպաստ մատուցանել: Եթե ասածիս բավարար պատասխան տաս, համեցեք,—երթանք»:

31. Սմբատ Շահազիզի ընորոշ գիծն այն է եղել, որ նա խուսափել է մեծ հասարակութունների մեջ երևալուց, խուսափել է պաշտոնական հացկերույթներից, ձոխ հանդեսներից, մեծ սալոնների ընդունելություններից. նա չի սիրել ոչ պատգամավոր ընտրվել, ոչ ներկայացուցիչ լինել, ոչ ձուռոձ առախոսություններ անել, ոչ ընկերությունների մեջ նախագահի պաշտոն ստանձնել, ոչ էլ ընդհանրապես գահերեցություն ձգտել, թեև մասնակցել է գաղութի հասարակական բոլոր գործերին և

<sup>1</sup> Իր նամակներից մեկում նա այդ մասին գրում է. «Այս օրերս Աշտարակից ստացա մի միթարական տեղեկություն, որ ֆինանսների մինիստրի թույլությունով այնտեղ բացվել է «Փոխառու-խնայողական ընկերություն» փոխադարձորեն օգնելու համար միմյանց և այսպես վաշխառուների ձեռքից ազատվելու, ինձ էլ ընտրել են պատվավոր հոգաբարձու և խնդրել իմ համաձայնությունը: Ես հեռագրեցի. «Согласен, благодарю за честь. Сердечно приветствую родную ниву полезнейшим учреждением, отныне спасающим честный труд от сильных мира сего. Примите мою лепту в 200 руб». Ստացա պատասխան. «Родная нива сердечно благодарит за внимание своего достойного и отзывчивого сына. Аштарак». Ես շատ և շատ ուրախացա այսպիսի օգտավետ հաստատության կազմակերպության առթիվ»:

հարկավոր դեպքում իր առատ լուծման տվել: Բայց երբ 1898—99 թվերին առաջարկվել է նրան որբախնամի նախագահությունը, նա ինքն է ընդառաջ գնացել և սիրով ընդունել, որովհետև այդ գործը շատ մոտ է ընդունել իր սրտին, շատ հարկավոր, էական և անհրաժեշտ պարտականություն համարել թե մարդասիրութեան և թե ազդի օգտի տեսակետից: Եվ մի անգամ որ ընդունել է այդ պարտականությունը, ջանք է արել ամենայն խնամքով և սրտացավությամբ կատարել: Այնուհետև նա այլևս հանգիստ ու դադար չի ունեցել, «ցերեկները ես ու զեռ, զիշերները կիսաքուն». նա օրական մի քանի նամակ է գրել, ցուցակներ է կազմել, հաշիվներ տեսել, պաշտոնական գրագրություններ արել Պոլսի պատրիարքարանի հետ, ուրախացել հաջողության դեպքերում, տխրել, վշտացել և զայրացել անհաջողության դեպքերում:

Նա գանգատվել է, որ պոլսեցիք ընդհանրապես սիրում են գրամ գանձել, բայց խուսափում են գանձվածի հաշվետվությունից, և բծախնդիր է եղել որբերի համար գանձված գումարների հաշվետվության գործում, թեև պատրիարք Օրմանյանը, որի ձեռքին է գտնվել որբախնամի ամբողջ գործը, ոչ մի թերություն, ոչ մի անկանոնություն չի գործել այնքան բարդ դրամական հաշիվների մեջ և ամենայն հոգացողությամբ իր ժամանակին ներկայացրել է յուրաքանչյուր կուպեի գործադրության հաշիվը, այնպես որ, վերջիվերջո, բծախնդիր բանաստեղծն ստիպված է եղել խոստովանել պատրիարքարանի բոլորամասն անրիժ ընթացքը դրամների ծախսման և որբերի պահպանության ու խնամակալության գործում, և այդ սուլթանական կառավարության մեքենայի այնքան դանդաղ, «յավաշ-յավաշ» գործելու հանգամանքներում:

Նա գանգատվել է, որ հարկավոր դրամն այն թափով և այն չափով չի գանձվում, որ չափով պահանջում էր գործի կարևորությունը, որ այնքան ունևոր հայերի մեջ չէր գտնվում մեկը, որ մի խոշոր գումար նվիրաբերեր այդպիսի էական ու հարկավոր գործի համար: Բայց և այնպես հավաքվել է այնքան, որ չորստարվա ընթացքում անպակաս լրացվել է մայրաքաղաքի հասարակության հանձն առած երկու մեծ որբանոցների կարիքը—Սերաստիայի և Մալաթիայի:

Մոսկվայի հասարակությունը մինչև իսկ կամեցել է նրան որբերի և այլ հարակից գործերով ուղարկել Պոլս և Բաքու, բայց նա իր հիվանդագին վիճակում դժվարացել է հանձնառու

լինել. դրա փոխարեն, նա 1898 թ. դեկ. 25-ին գրել է մի սրտա-  
ռուչ ոտանավոր՝ «Օգնեցեք» խորագրով, ըստ ամենայնի համա-  
պատասխան ընթերցողներին ըմբռնողութեան ու հասկացողութեան  
էր լեզվի, արտահայտութեաննների ու ոճի տեսակետից. նա  
այդ տպել է իր նամակներին թղթերի վրա և բազմաթիվ օրինակ-  
ներով տարածել ժողովրդի մեջ: Այդ, իհարկե, այն չի եղել, ինչ  
որ կլիներ, եթե ինքը հանձն առած լիներ կատարել հասարակու-  
թեան ցանկութունը և անձամբ գնար, օրինակ, Պոլիս, որ հար-  
կավոր է եղել ոչ միայն որբերի գործի համար: Այս մասին նա  
իր եղբորորդուն ուղղած նամակներից մեկում գրել է. «Գալով որ-  
բերի հարցին և նրանց օգնութեան, պետք է ասենք, որ մենք  
գեո շատ հեռու ենք գիտակից միջոցներից: Այնքան հարուստ-  
ներից մեկն էլ չեղավ, որ մի շոշափելի զոհարերութուն աներ  
ահագին աղետի առաջն առնելու համար...: Ես երկար մտածեցի,  
թե ինչ տապանազիր պատրաստեմ այս կենդանի մեռածներին  
կամ մեռած կենդանիներին: Միտս ընկավ ավետարանի հանդի-  
մանութունը, ես էլ այդպես կազմեցի տապանազիրս.

Ես սրանց էլ մարդ կարծեցի,  
Մարդ կոչելով ողջունեցի.  
Բայց ասի՛րս, որ մարգարիտներ  
«Շանց ու խոզից» ընծայեցի:

32. Խրիմյան Մկրտիչ կաթողիկոսի շքեղ ընդունելութեան  
գործի կազմակերպումը Մոսկվայում տեղի հայ գաղութի կողմից՝  
Շահագրիզը նույնպես կարևոր գործ է համարել, իբրև մի  
ցույց ընդդեմ ցարական կառավարութեան, որ երեք ամիս շա-  
բունակ բռնել, պահել էր կաթողիկոսին՝ Նոր-Նախիջևանում,  
թույլ չտալով նրան գնալու Պետերբուրգ՝ ներկայանալու ցարին  
և երես առ երես խոսելու նրա հետ զանազան կնճռոտ ազգային  
խնդիրների մասին: Ուստի և, երբ կազմվել է ընդունելութեան  
հանձնաժողով, նա ոչ միայն ցանկացել և ընտրվել է հանձնա-  
ժողովի անդամ, այլև հանձն է առել երկաթուղու. կայսրանում  
ընդունել Հայդապետին և մինչև իսկ գաղութի կողմից ողջունի  
ձառ ասել, մի բան, որից նա մինչև այդ միշտ խուսափել էր:  
Ասում են, որ երբ պարթև, երկարահասակ Հայրիկը, ձառախոսու-  
թյունից հետո, առաջին անգամ ծանոթացել է նրա հետ, իրեն  
հատուկ կատակաբանելու սովորութեամբ բաձագանչել է. «Մո՛,  
հեռվեն համբավդ լսած լինելով, ես քեզի վիթխարի, հաղթան-

դամ մարդ կկարծեի, բայց դուն այդպես պատիկ եղեր ես: Եվ,  
հիրավի, Շահագրիզը ջղուտ, բարակ, նուրբ կազմվածքի տեք  
էր և համեմատաբար կարճահասակ: Այդ ընդունելութեան օրից  
նրանց միջև սկսվում է մտերմական սիրավիր հարաբերութուն,  
որ արտահայտվում է մի շատ շահեկան նամակագրութեամբ, որ  
սեռում է մինչև վերջը՝ Այդ նամակագրութեան զլխավոր նյութն

<sup>1</sup> Իբրև նույն այդ թղթակցութեան, բերում ենք Հայրիկի 1901 թվի  
հունվարի 29-ին գրած նամակը, որ պահպանվել է Շահագրիզի թղթերի մեջ.

Ազնիվ սիրելի իմ պ. Ս. Շահագրիզյան

Շատ վաղուց ժամանակին դու ղՀայրիկ մտցեր ես, բայց Հայրիկ գձեղ  
չի մոռցեր, անտ ձայն կուտամ քեզ, ուր հեղում ես, ուր հանդուցանես ձայն  
քո, լսելի արն ինձ:

Պ. Ջանուկյանի կտակ ուր մնաց, լսում ես. Պարսկաստան տաղարեզ  
բացված է կրթութեան. բարեսիրտ շահ Ասրպատականի ազգայնաց նոր հրո-  
վարտակ աված է և ընդարձակ արտոնութեաննը շնորհեր է հայոց ազատ կեր-  
պով դպրոցներ բանալու Եվ դու գիտես, Պարսկաստանի հայք այդ մասին ոչ  
շնորհք ունեն և ոչ փող. սոցա մեծ հույս Ռուսիո հայ կրեսուներու վերա է, և  
հայ կրեսուներ համոզելու համար քանի ղժվարին գործ է, և դու գիտես այս  
ես փորձեր պիտի անեմ, Թուամայանի անեն սկսելով: Միքեմ դքեզ, դու  
էլ քո բաժին ունիս Լիբերալ անելու: Բարի գործ աստված հաջողում է:

Բազմադիմի հոգացողութուն զիս անհնարին կերպով ճնշած է, ութ-  
սունամյա ծերութեանս մեջ միակ մի մխիթարութեան ունեմ, որ դեռ կարող  
եմ ձիւս վրա հեծնալ և ճանաչարհորդեր Միտեղ ես գրած եմ ծանրացող հոգա-  
ծութեանս. այն է՝ քառասուն տարի ես դառնալ, այսինքն այն թվական մինչ  
զՀրավիրակն Արարատյան երգելի, և այժմ սկսած եմ մանրիկ բաներ երգել ու  
գրել Մեք սիրելի Ջանշյանի հիշատակին մի բան գրեցի, որո մի օրինակ  
դրկեցի մեք մտերիմ ժամհարյան պ. Իսահակին, ահուշտ Ձեզ աված է կար-  
դալու, դու ի՞նչ կարծիք ունես, մի գուցե Հայրիկի մահվան օրեր մոտեցեր են,  
և նա կարող թուշտ նման սիրում է երգել: Ձէ՞ որ դու էլ երգասեր ես, գուցե,  
այդ սառուցյալ երկիր բնակելով ու միանգամայն ժամանակի սառնութուն  
ազդեր է ոգվույզ վերա: Բայց Վարդանանց տոնին առթիվ ոգևորված մի ձառ  
խոսած եք, որ «Մշակ» խժժեկով, բերխա՞ կոչեր է: Խնդրեմ մի օրինակ ինձ  
դրկելու շնորհ անեք:

Կղարմանամ, դուք այժմ ազատ կյանք ունիք, ընդեր մի անգամ չեք  
հիշում «Այրարատ», Ս. Էջմիածին: Միթե մոռցեր եք հայոց աշխարհ ու  
հայրենիք: Ընդունեցեք մի անգամ Հայրիկին հրավեր և այցելութուն անե-  
լով, ձեր նահապետ Հայրիկին օրհնութուն ասեք: Միթե դուք պանքա ունեք  
ժամհարյան եղբարց պես զբաղյալ ղմամոհայիվ:

Հույս ունեմ, որ իմ այս հրավեր հոժարամիտ ընդունելով, ձեր ուխտ  
կատարեք:

Աղոթարար Ձեզ Հայոց Հայրիկ

1901 թ. հունվարի 29.

ու բովանդակութիւնը կազմել են դանազան գրական ու ազգային խնդիրներ և հատկապես մոսկովաբնակ հաշտարխանցի ունեւոր Սարգիս Զանուսյանի անելիք կտակի խնդիրը, որ սկսվել էր դրա ջերմ ցանկութեամբ և պիտի գլուխ գար Շահադիզի ջանքերով, բայց որ վերջիվերջո չի իրագործվել: Մինչ ամեն բան կտակի համար ծրագրված ու պատրաստված էր, և Շահադիզն օրեցօր սպասում էր, որ այսօր-վաղը կտակն օրինական ձև կստանա, ինչպես գրած է եղել նրան կտակարարը. հանկարծ մի օր տուն վերադառնալով, նա իր սեղանի վրա գտել է մի երկտող նամակ, որով Զանուսյանը հայտնում էր նրան, թե ինքը դանազան պատճառներով չի կարող կատարել նրա առաջարկութիւնը, մի հանգամանք, որ շատ ճնշող և ծանր տպավորութիւն է գործել նրա վրա: Կտակելիք գումարով պետք է Տաճկահայաստանի մի հայաշատ կենտրոնական տեղում կառուցվեր մի մեծ տեխնիկական կամ արվեստագիտական դպրոց, ըստ ամենայնի եվրոպական սարք ու կարգով ու հաստատապես և ընդմիջ ապահովվեր նրա գոյութիւնը: Վերավորված՝ նա մի քաղաքավարի, բայց կարուկ պատասխան է գրում իր «Տնօրոյ ազնիվ բարեկամին», վերականգնում է կտակի մտքի ծագման ճշգրիտ պատմութիւնը և վերստին հորդորում է նրան չհրաժարվել չըզրկել իր անունը մի այդպիսի գեղեցիկ անմահական գործից, և վերջացնում իր նամակը հետևյալ խոսքերով. «Եվ եթե այս գործից հրաժարվեք, կարելի է հարցնել — արժանի՞ էր մեր բարեկամութեան, որ մենք վեհափառի և հասարակութեան առջ պատասխանատու մնանք: Եթե ձեր առաջվա միտքն այնքան հաստատ չէր, ապա ինչո՞ւ մենք բոլոր աշխարհն իրմք տվինք, ինչո՞ւ նամակներ գրեցի դանազան տեղեր և տեղեկութիւններ հավաքեցի ապագա դպրոցի մասին»:

33. Նա առողջակազմ մարդ է եղել և երկարատև ու ծանր հիվանդութիւններ իր կյանքում չի քաշել: Նա կանոնավոր կյանք է վարել, խուսափելով բոլոր չափազանցութիւններից: Ամառները նա միշտ ապրել է կամ Մոսկովայի շրջակա ամառանոցներում, կամ Բալթիկ ծովի ափին՝ Դուբելնոյում, կամ Կիսլավոդսկոյում և կամ Ղրիմի Յալթայում, Ալուպկայում ու Գուրզուֆում: Նրան անհանդիստ է արել միայն քրոնիկական փորկապութիւնը, որի դեմ նա իր ամբողջ կյանքում մաքառել է և միջոցներ գործ դրել: Եվ զարմանալին այն է, որ նա այդպիսի եռանդով մաքառել է այդ հիվանդութեան դեմ, որ նրա կյանքին

վտանգ չի սպառնացել, բայց, ընդհակառակը, չի նկատել, կամ լավ է ասել, մի առանձին ուշադրութիւն չի դարձրել իր մեջ հետզհետե գարգացող սրտի հիվանդութեան վրա, որ սպառնացել է նրա կյանքին և, վերջիվերջո էլ, գերեզման տարել նրան:

Սուաջին անգամ սրտի հիվանդութեանն իր բնորոշ նշաններով արտահայտվել է նրա մեջ 1902 թվի փետրվարին. վաճառականների ակումբում, որի անդամ է եղել նա և ուր հաճախել է ամեն երեկո, մնացել է մինչև ժամը 11-ը, ընթրել է և վերադարձել տուն: Գիշերը հանկարծ նա զգացել է ստամոքսի զորեղ ցավ, սրտի խառնոց և այլն: Ինքը կարծել է, թե թունավորվել է այն ձկնեղենից, որ կերել է ակումբում: Նրա բժիշկ Մկրտիչ Թանգյանը առավոտյան գտնելով նրան հիվանդագին կացութեան մեջ, իսկույն հասկացել է, որ դա կերած ձկնեղենի անբարեմասնութիւնից չէ, թունավորում չէ, այլ սրտի հիվանդութեան նոպա, որի մասին և զգուշութեամբ խոսել և հասկացրել է նրան: 1902 թվի փետրվարի 13-ին եղբորորդուն գրած նամակում նա այսպես է նկարագրել իր այդ հիվանդութիւնը. «Բայց սիրտդ չպիտի տխրի, եթե ասեմ, որ ես էլ կյանքումս առաջին անգամ հիվանդացա բավականին ծանր. կլուրում ընթրեցի ձկնեղեն, որ այնքան էլ բարեմասն չէր. գիշերը զգացի մի անտանելի ցավ ստամոքսիս մեջ և ապա սկսեց սիրտս խառնել, բայց չկարողացա փխել: Զղերս սաստիկ լարված, ինքս էլ կծկված, արյունս գլխիս խփեց և մարմինս ու ոտքերս թուլացան: Առավոտյան մարդ ուզարկեցի մեր մտերիմ Թանգյանի հետևից, որ իսկույն վրա հասավ և հարկավոր միջոցները գործ դրեց: Մկրտիչը մի եղբայրական փափկութեամբ ու հոգատարութեամբ և օրը երկու անգամ հաճախելով խիստ շարժեց ինձ և աչքերիցս արտասունք քամեց... Այժմ լավ եմ»: Այդ իր բժիշկ Մկրտիչ Թանգյանին նա հաճախ ստիպել է, որ իրեն «գու՞ ասե, և ոչ «Դուք», բայց նա համառոտ է, ուստի և նրան ձոնել է հետևյալ քառյակը. —

Դու ինձ «Դուք», ես քեզ «գու»,

Ասն, Մկրտիչ սիրելի,

Ո՞րն է ավելի ազդու,

Ընտանեկան, սիրալի:

Նա մի անգամ էլ ենթարկված է եղել վիրահատութեան, որի պատմութիւնն ու նկարագրութիւնը կարելի է տեսնել իր եղբորորդուն գրած մի նամակից, «Լինել, թե՛ չլինել» — Համլետի

զերի մեջ էի մինչև այսօր,—գրում է նա այդ մասին: Ահա բանը ընչի մեջ է: Դեռ Յալթայում նոյեմբեր ամսին նկատեցի ձախ ուսիս վերա մի ուսուցչի ատանց ցավի. ուշագրութեան մի բան չէր, մանավանդ որ բարեկամներս ասում էին, թե կանցնի: Եկա Մոսկվա, նույնպես ուշ չդարձրի: Մեկ օր պատահմամբ մտնելով տունս բժիշկ Շահինյանը [Մարիետա Շահինյանի հայրը], հայտնեցի ուսուցչու. և նա դիտելով հավատացրեց, որ դա է li-ponia—жировик (յուղադնդակ), ինչպես և պատահում է տեսնել շատերի վերա, մանավանդ վզի և թշերի վերա: Բժիշկը ինձ ասաց, որ եթե այդ ուսուցչը ուրիշ տեղ լիներ, վտանգ չկար, բայց իմ կարող է հետո և վտանգավոր լինել, որովհետև այդտեղից անցնում են բոլոր ջրային սխտեմները: Հրավերեցի մի հայտնի խի-րուրդ — Սառիչով, որ նույնպես հաստատեց օպերացիայի անհրա-ժեշտութեանը, միայն ասաց, լավ է ապրիլին, երբ կսկսեն տաք օրերը: Հայտնի բան է, որ կյանքումս առաջին անգամ լինելով «օպերացիա», ոչ սակավ անհանգստութեան զգացի: Եվ որովհետև այդ միտքը ինձ տանջում էր, խնդրեցի, որ որքան շուտ լինի, այնքան ևս լավ կլինի: Եվ անա 2-ը սույն ամսին գնացի в Старо-Екатерининскую больницу, ուր Սառիչովը գլխավոր բը-ժիշկ է և ուր ես ստացա առանձին սենյակ, և ահա 12 ժամին օպե-րացիայի սրահումն էի: Զարմանալի բան է, որ վերջին բույսին շատ ուրախ տրամադրութեան մեջ էի, ինքս պակեցի մահճակալի վերա և դառնալով դեպի բժիշկը, որի ձեռքին խորոֆորմի տոպ-րակն էր, ասացի, «Ну, валяйте»: Կես ժամից հետո կամ մի փոքր ավելի օպերացիան վերջացավ, և Սառիչովը յուղագունդը պնակի վրա դրած, ասաց՝ «Ահա ձեր ցավը»: — Շատ հաջող անց-կացավ. երկու օր մնացի հիվանդանոցում և ապա տեսա, որ ան-կարելի է այնտեղ ապրել, վեր կացա, եկա իմ բնակարանը և խնդրեցի, որ գլխավոր բժիշկը ինձ այցելի: Մի երկու շաբաթ կամ ավելի պետք է տանը նստել»:

34. Շահագիղը հանկարծամահ է եղել 1907 թ. դեկտեմ-բերի 24-ին, երեկոյան ժամը 9—10-ի մեջ, իր բնակարանում, 67 տարեկան հասակում:

Այդ օրը, դեկտեմբերի 24-ի երեկոյան, Շահագիղը գնա-ցած լինելով իր բարեկամ, Լազարյան ձեմարանի ուսուցիչ Թաշատուր Բուչուկ-Հովհաննիսյանի մոտ, շուտ վերադարձել է տուն, հանել մուշտակը և գնացել զուգարան, որտեղից և մի հինգ բույս չքաշած, լավ է ապակու ջարդվածքի զրնգոց, և

օթևանների սպասավորը վրա հասնելով, գտել է նրան ուշաթափ նստած դրութեան մեջ գլուխը թեքած, ընկած լուսամուտի գոգին: Իսկույն կանչվել է օթևանների կառավարիչը, և երկուսը միասին տարել են նրան իր սենյակը, որտեղ և հայտնվել է, որ նա մեռած է:

Հրավիրվել է Հով. Տեր-Հակոբյանի որդի Ներսես Տ.-Հա-կոբյանը, որին ճանաչելիս են եղել հյուրանոցում, թաղապետի ավագ օգնական հոստովսկին, որ ցուցակագրել է իրեղենը, և թաղամասի բժիշկ Սմիլոնովը, որ հետազոտել է դեպքը և կազ-մել հետևյալ արձանագրութեանը. — «Շվեյցարիայի» № 65 սենյա-կում, երկրորդ օթևանում պակեցած է մի հանգուցյալ, որի կոչումն է պետական խորհրդական (статский советник) Սմբատ Միսեոնի Շահագիղ, 67 տարեկան, հատակին, սենյակի մեջտեղը, մեջքի վրա, գլուխը դեպի դուռը, ոտքերը մեկնած հակառակ կողմը, գլուխը ծռած դեպի ձախ, աչքերը փակ, բերանը կիսաբաց, կիսով չափ հույս տված աջ ձեռքը մեկնած է ու փոքր ինչ հետ է ձգած մարմնից, իսկ ձախը, որ նույնպես հույս է տված, կի-սածռած է և կպած մարմնի ձախ կողքին:

Դիակի արտաքին հետազոտութեանից չի երևում բուն մահ-վան մի որևէ նշան, բացի քթի վրա գտնված թեթև ջարդված-քից ու դրանից գոյացած արյան մի շերտից և աջակողմյան ուղեղի արյունոտած լինելուց, որ հավանորեն առաջ եկած պիտի լինի ընկնելուց:

«Հանգուցյալին լավ ճանաչող պ. Տ.-Հակոբյանի ասելով, Շահագիղը տառապելիս է եղել սրտի հիվանդութեամբ և երբեմն բռնվելիս է եղել «Angina pectoralis»-ի զորեղ ցնցումներով»:

35. Դեկտեմբերի 29-ին, համալսարանի հերձարանին կից դատական-բժշկական ինստիտուտում թաղամասի բժիշկ Ն. Նեմ-ցովի ձեռքով կատարվել է դիակի հերձումը: Այդ մասին կազմ-ված արձանագրութեանից պարզվել է, որ Շահագիղի ուղեղի քաշը եղել է 1350 գրամ, սիրտը մեծացած է եղել. նրա երկայ-նութեանը եղել է 15, լայնութեանը 14 սանտիմետր, իսկ քաշը՝ 660 գրամ: Դիակի արտաքին և ներքին հետազոտութեանը երևան է հանել, որ մահն առաջ է եկել ոչ թունավորվելուց կամ մի այլ բուն պատճառից, այլ բնական ճանապարհով: Նրա սիրտը չափից ավելի մեծացած է եղել, պատերը հաստացած-սկլերոզա-ցած, և մայր-շնչերակի ներքին մակերևույթը խոցակալած ու կրակալած, և տեղ-տեղ էլ երակային անոթները խոցակալած ու

սկիւրոդացած, և այլն: Այս հիվանդագին փոփոխութիւնները, բժշկի կարծիքով, բավական են եղել, ըստ ամենայնի, առաջ բերելու նրա անակնկալ մահը:<sup>1</sup>

36. Դեկտեմբերի 30-ին փառավոր հանդիսավորութեամբ կատարվել է նրա հուղարկավորութիւնը և թաղումը, որի ամբողջ ծախսը հողացել է Մոսկվայի հայ հասարակութիւնը, հավաքելով իր մեջ 1636 ուրբլի մի գումար, որից, ի հիշատակ Շահազիզի, փոխադրվել է Թիֆլիսի սովյալների նպաստամատույց հանձնաժողովին 400 ուրբլի: Պատրաստվել է նրա մահվան դիմակը և մի շքեղ արծաթյա պսակ Մոսկվայի հասարակութեան կողմից, որ դրվել է նրա դագաղի վրա պատշաճ մակագրութեամբ և հետո ուղարկվել է Էջմիածնի թանգարանը ի պահպանութիւն: Մահվան դիմակը պատրաստող արվեստագետ Տարագրոս Վարդանյանն այդ դիմակը հետագայում նվիրել է Հայաստանի Պետական Գրական թանգարանին: Պսակի մակագրութիւնը.

Ծն. 5 դեկ. 1840 թ. Աշտարակ<sup>2</sup>

24 դեկ. 1907 թ. Մոսկվա

Եւ ուխտեցի լինել մշակ

հասարակաց պիտույքի

Ս. Շ.

Նախ քաղաքացի և ապա պոետ

Ս. Շ.

37. Շահազիզը չի սիրել շքեղ, բազմամարդ հանդեսներ և խուսափել է ամեն մի հավաքույթից, որ հանդեսի բնույթ է կրել, ուստի և կտակած է եղել իր բարեկամներին իրեն համեստ հուղարկավորութեամբ թաղել—ոչ պսակ, ոչ դամբանական, այլ լուռ և մունջ: Սակայն հուղարկավորութեան հանձնաժողովը չի

<sup>1</sup> Այստեղ ավելորդ չենք համարում մեջ բերել բժշկի հետազոտութեան և գրածի ուսերեն բնագիրը—«При исследовании трупа Сибата Семеновича Шах-Азиза обнаружены резко выраженные болезненные изменения сердца и кровеносных сосудов, состоящие в значительном увеличении сердца, утолщении его стенок, паренхиматозорном их изменении в склерозе, об извествлении и изъязвлении на внутренней поверхности аорты, а также—в склерозе и местами изъязвлении веночных сосудов; эти болезненные изменения вполне достоточны для того, чтобы обусловить внезапную смерть».

<sup>2</sup> Պետք է լինի՝ 5 սեպտեմբերի 1841 թ.

կամեցել կատարած լինել նրա կամքը և, ինչպես ասել ենք, կազմել է այնպեսի մի շքեղ հուղարկավորութիւն, որին նա արժանի է համարել նրան: Նրա վրա դրված են եղել շքեղ պսակներ, թե եկեղեցում և թե գերեզմանի վրա արտասանվել են բազմաթիվ դամբանականներ, որոնց մեջ աչքի է ընկել Գրիգոր Խալաթյանի դամբանականը եկեղեցում և Վեսելովսկու աչքերը լի արտասուքով արտասանած մի քանի տաք խոսքերը գերեզմանի վրա. բայց զբանցից էլ ավելի սրտառու է եղել Մատուրյանի՝ բանաստեղծի վերջին «Ջոհնը» ստանավորի ընթերցումը եկեղեցում, որով նա կամեցել է մի վերջին անգամ էլ խոսեցնել նրան: Նա թաղվել է իր մտերիմ բարեկամ և ուսուցիչ Ստեփանոս Նազարյանցի կողքին և հետագայում էլ ժառանգների հողատարութեամբ դրվել է նրա գերեզմանի վրա մի հայկական ոճով շինված մարմարիոնե նուրբ մահարձան, որ ներկայումս էլ զարդարում է նրա հողաթումբը Մոսկվայի Վագանկայում (հայոց գերեզմանոց):<sup>1</sup>

38. Սմբատ Շահազիզն իրենից հետո մեծ արխիվ չի թողել, այլ միայն մի քանի նամակներ և մի քանի հատուկտոր

<sup>1</sup> Մահարձանը հայկական կաթողիկէ ձև ունի և զարդանկարներ. նրա վերին և միջին մասերը, այսինքն բուն արձանը, շինված են իտալական երակավոր սպիտակ մարմարիոնից, իսկ ստորին մասը, այսինքն պատվանդանը, Փինլանդական կարմիր զրանիտի երեք սալերից: Թե բուն արձանը և թե պատվանդանը շորս կողմից մաքուր հղկված են և մարմարիոնի վրա փորագրված են բանաստեղծի ծննդյան ու մահվան թվականները և նրա գրվածքներից առնված հետևյալ մի քանի բնորոշ ստեղծ.

Սմբատ Շահազիզյանց

Ծնված 1841 թ., սեպտ. 5, վախճանած 1907 թ. դեկտ. 24:

1.

Եւ սիրել եմ իմ հայրենիք,  
Գնա և դու նույն շավղով:

2.

Հառնջ հայութիւն, հառնջ ազգութիւն,  
Լուսավոր դարուս գաղափարներով:

3.

Ժամանակակից գրում եմ լեզվով,  
Որ ամենայն մարդ կարող հասկանա

Մահարձանը և դրա շորս կողմը քաշված կռած երկաթի վանդակապատը կառուցված են Մոսկվայի «Գրանիտ» ակցիոներական ընկերութեան ձեռ-



39. Ս. Շահաղիզի գրական ժառանգությունը.

ա. Երեք գրաբար ոտանավոր, գրված 1857 և 1858 թվերին, տպագրված Մսեր Մագիստրոսի «Ճռաքաղի» 1859 թվի Բ. և ԺԲ. տետրակներում:

բ. «Աղատության ժամեր», Սմբատա Շահաղիզյանց, աշակերտի վեցերորդ դասատան Լազարյանց ձեմարանի արևելյան լեզվաց, հատոր երկրորդ, Մոսկվա, ի տպարանի Լազարյանց ձեմարանի, 1860 թ.:

գ. «Լևոնի վիշտը», ժամանակակից վեպը չորս գլխի բաժանված, և զանազան բանաստեղծություններ, Մոսկվա, ի տպարանի Լազարյան ձեմարանի, 1865 թ.:

դ. Երեք ոտանավոր, երկուսը տպագրված «Հյուսիսափայլ»-ի 1862 թվի մարտի («Աղգային վիճակ») և ապրիլի («Աղատ մարդ») տետրակներում և մեկը 1864 թվի հունիսի տետրակում («Պոետ»):

ե. «Հորելյանի տարեդարձ», տպագրված Գրխտինե Բարխուդարյանի տպարանում, Մոսկվա 1893 թ.:

զ. «Հրապարակախոս ձայն», Մոսկվա, Կուզրյավցևայի տպարան, 1881 թ.:

է. «Մի պատասխան», գրված 1884 թվի օգոստոսի 10-ին, տպագրված «Մշակի» նույն թվի №161-ի բանասիրականում:

ը. «Մի քանի խորհրդածություններ», տպագրված առանց ստորագրության «Մշակի» 1882 թվի օգոստոսի №26-ում:

թ. «Ամառնային նամակներ», տպագրված Մոսկվայում, Գրխտինե Բարխուդարյանի տպարանում, 1897 թ.:

ժ. «Հիշողություններ Վարդանանց տոնի առիթով», տպագրված Մոսկվայում, Գ. Բարխուդարյանի տպարանում, 1901 թ.:

ճա. «Մի քանի խոսք իմ ընթերցողներին», տպագրված Մոսկվայում, Գ. Բարխուդարյանի տպարանում, 1903 թ.:

40. Շահաղիզի առանձին գրքերով և գրքույկներով լույս տեսած բոլոր երկասիրությունները, որոնք տպագրված են մաքուր, թանկարժեք թղթի վրա, հրատարակված են իր ծախքով, բացի «Հրապարակախոս ձայն»-ից, որ հրատարակված է Բաքվի վաճառական Բ. Գ. Սարգսյանցի ծախքով: Նա շատ սիրում էր, որ իր գրքերը խնամքով տպագրված լինեին, և շատ վշտանում էր, երբ տպագրելուց հետո նկատում էր, որ նրանց մեջ այստեղ ու այնտեղ կետագրությունը խառնված է և սպրդած է այս ու այն վրիպակը: Դրա համար նա չէր խնա-

յում ոչ դրամ և ոչ աշխատանք, ուստի և հաճախ ինքն էր հանձն առնում կատարել սրբագրություն սրտամաշ աշխատանքը: Նա ուշ-ուշ էր գրում և երկար ընդհատումներով, բայց երբ սկսում էր մի բան գրել, կորցնում էր իր հանգիստն ու սրտի անդորրությունը, աշխատելով շարունակ և անընդհատ, որ, ինչպես ինքն էր ասում, չսասի և մտքի թելը չկորչի: Նա այդ ժամավանդի տպավորություն էր գործում անձանոթները վրա. նա անդադար խոսում էր իր գրվածքի մասին, հատվածներ էր բերում նրանից և զբաղեցնում էր խոսակցին իր գրվածքի նյութով ու բովանդակությամբ: Նրա այդպիսի անհանգստությունը մանավանդ սաստկանում էր, երբ գրվածքը վերջացնելուց հետո ուղարկում էր վրաքննչության. նա այդ ժամանակներն օրեցօր սպասում էր գրվածքի շուտ ետ ստացվելուն և, ուշանալու դեպքերում, նամակներ էր գրում, հեռադիրներ ուղարկում և շատ վախենում էր, որ վրաքննիչը կարող էր այս կամ այն հոտովածը գրվածքի մեջ ջնջած լինել և իր մտքերը խանդարած: Եվ երբ կարողանում էր անարատությամբ ետ ստանալ ձեռագիրը ու տպագրության հանձնել, պարծենալով ասում էր. «Ես գրել եմ այն, ինչ որ կարելի էր, և այն, ինչ որ կարելի չէր»:

Շահաղիզի այս գրվածքների գրություն թվականներից երևում է, որ նա առաջին անգամ սկսել է գրել ու տպագրել 1857—58 թվերին, երբ նա 5-րդ և 6-րդ դասարանների աշակերտ է եղել: Թե որն է եղել նրա առաջին գրվածքը, մենք չենք կարող ասել, որովհետև այդ մասին ոչ մի գրավոր տեղեկություն չի պահպանվել: Համենայն դեպս պետք է կարծել, որ նրա առաջին գրվածքը եղել է գրոց լեզվով և մտել է այն գրվածքի ներքին հատորը, որ ամբողջապես բաղկացած է եղել գրաբար ոտանավորներից. այդ մենք գիտենք իր հեղինակի այն հայտարարված հատորիկի շապիկի կողքին. «Աղատության ժամեր»-ի տպագրված հատորիկի շապիկի կողքին. «Առաջին հատորը (որ գրոց լեզվով է), եթե կհաջողի, մի քանի ժամանակից դուրս կգա»:<sup>1</sup>

<sup>1</sup> Շահաղիզի այս հայտարարությունից երևում է, որ «Աղատության ժամերը» բաղկացած է եղել երկու հատորներից, որոնցից նա առաջ տպագրել է երկրորդը, որ այժմ մեր ձեռքին է. իսկ առաջինը, որ գրոց լեզվով է եղել, նա չի կարողացել տպագրել և չէր էլ կարող տպագրել, որով-

41. Շահագրիցի ժամանակակից աշակերտներից մեկը ձե-  
մարանում, մեր հայտնի մանկավարժ Սեդրակ Մանգինյանը, իր  
աշակերտական հիշողութիւնների մեջ նրա մասին, ի միջի  
այլոց, ասում է և այն, որ նրա ձեռքով գրվել է հայկական  
բեմադրական արվեստի սկզբնավորութեան հիմնաքարերից մի  
քանիսը, մի նոր փաստ ու հանգամանք, որ մինչև օրս անհայտ  
է մնացել մեր թատրոնի պատմութեան մեջ:—«Հիշում եք հայկա-  
կան բեմական արվեստի սկզբնավորութեանը,— ասում է նա,—  
որի հիմնաքարերից ուսանք ձեր ձեռքով գրվեցան»:

Հայտնի է, որ ուսասանայրի թատրոնի սկզբնավորութեանը  
եղել է 1859 թվի հունվարի 27-ին, երբ Մոսկվայում, մի մաս-  
նավոր տան մեջ, ուսանողները 20՝ մարդու ներկայութեամբ  
առաջին անգամ բեմադրել են Ալադաթեանի «Վեյ իմ կորած 50  
ոսկին» կենցաղական ողբիլը, որի նկարագրութեանը թողել է  
մեզ Մ. Նալբանդյանը: Արդ, հենց այդ թվին էլ Լազարյան  
ձեմարանի մասնագրիտական դասարանների կամ Լիկեոնի առա-  
ջին կուրսի աշակերտ կամ ուսանող Ս. Շահագրիցը պրած ու  
ներկայացրած է եղել ձեմարանում աշակերտների ներկայու-  
թեամբ իր «Կովարար Կիրակոսը», ասել է թե, ճիշտ է, Շահա-  
գրիցն էլ ուսասանայ թատրոնի սկզբնավորութեան հիմնաքա-  
րերից մի քանիսի դնողն է հանդիսացել:

Շահագրիցի այդ «Կովարար Կիրակոս»-ից, որը ոտանա-  
վորով և երգերով գրված մի զավեշտ է եղել և որը նրա կենդա-  
նութեան օրով դեռ կորած է համարվել, նրա մտքում մնացել  
էր միայն մի երգ, որ նա կոչում էր «Հյուսիսն կլեկչու երգ»,  
և քեֆը տեղը եղած ժամանակ հաճախ ասում էր իր ծանոթ-  
ներին.

Այս աշխարհում ամեն բան  
Յուր կարգովը գնում է,  
Ողորմելի է մարդն այն,  
Որ իր կյանքից գոհ չէ:

Մինը հարուստ, մյուսն իշխան,  
Երբորդը փինաչի,

հետև այդ հատորիկն անակնկալորեն անհայտացած է եղել նրա աշակերտական  
գրասենյանի արկղից: Նա ինքն էլ չգիտեր, թե ով կարող էր վերցրած լինել  
բայց ենթադրում էր, որ վերցնողը Գաբուսյան աշակերտը պետք է լիներ,  
որովհետև հատորի մեջ մի զավեշտական ոտանավոր է եղել նրա մասին:

Մինը դալլաք, մյուսն չորան,—  
է՛հ, ես էլ կլեկչի:

Հարրաշիղրի պարկերը,  
Գիտեմ՝ ոսկով լի են,  
Բայց իմ քոնծոտ փուքսերը  
Նոցանից պակաս չեն:

Այժմ շտապիր, երջանիկ  
Դու Հյուսիսն կլեկչի,  
Մնաք բարով, պատվելիք,  
Թե չէ փլավըս կսառչի:

42. Նույն Մանգինյանի ասելով, Շահագրիցը ձեմարանի  
աշակերտութեան մեջ խոշոր դեր է կատարել. բարձր դասարան-  
ների աշակերտ եղած ժամանակները նա մի տեսակ հայոց պատ-  
մութեան (որ ձեմարանում չի դասավանդվել) ուսուցչի և հայու-  
թեանը սիրելու քարոզողի դեր է կատարել: Նա սովորութեան  
է ունեցել երեկոները, իր դասերը պատրաստելուց հետո, Չա-  
գրճյանի Հայոց Պատմութեանը ձեռքին, մտնել փոքր աշակերտ-  
ների սերտարանը և կարգալ աշակերտներին Հայոց Պատմու-  
թեանը, Սաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի»-ն և հասկաց-  
նել, թե պետք է պահպանել հայութեանը, բարձրացնել հայու-  
թեանը, սիրել հայութեանը»: Այս մասին Մանգինյանը իր վերոհի-  
շյալ աշակերտական հիշողութեանների մեջ ասում է. «Ես եկել  
էի ուսում ստանալու, այդ բանը դուք քիչ համարեցիք. հայու-  
թեանը չկորցնել, հայութեանը սիրել, հայութեանը բարձրաց-  
նել՝ այսպիսի ներշնչումներով ձգտում էինք լրացնել իմ և ուրիշ  
շատ շատերի պակասը... Հիշում եք դուք, որ վարժապետների պատ-  
վիրած դասերը պատրաստելուց հետո՝ կու գայիք մեր սերտա-  
րանը և Չագճյանը բաց անելով՝ հայոց պատմութեանը կսովոր-  
եինք, որը որ ձեմարանի ուսմունքների մեջ չէր նշանակված:  
Հիշում եք Աբովյանի «Վերք Հայաստանի» գրքից տեղած գարնա-  
նային անձրևը»:

Մանգինյանի այդ աշակերտական հիշողութեանների մա-  
սին տես «Սմբատ Շահագրիցի երեսնամյա հորեկյանը (1862—  
1892)» գիրքը, Մոսկվա, 1894 թ., էջ 103:

43. Շահագրիցը որքան որ խուսափում էր շքեղ հան-  
դեսներից, բազմամարդ խնջույքներից և սալոնական ընդունելու-

թյուններից, այնքան էլ սիրում էր լինել մտերմական ընկերությունների մեջ. նա այդ նեղ շրջաններում իրեն շատ լավ էր զգում—ասում, խոսում, ծիծաղում, զվարճանում և զվարճացնում էր և ուրիշներին, մի խոսքով, նա լավ զրուցընկեր էր և կատակարանող: Այդ գնպքերում նա սիրում էր հաճախ հանպատրաստից քառյակներ ասել, որոնցից շատերը մնում էին սրանրա բերանում, ասվում էին, հետո մոռացվում: Վերջին ժամանակները Կիսլավոգսկում, օրինակ, բերանից բերան էր անցնում նրա ուսերենն ասած մի քառյակը, որ նա ասել էր մի մեծատուն ուսու աիկնոջ (генеральша Барановская), որ նրան հրավիրելիս է եղել Սոչի՝ իր սմառանոցը.

Ваши блуждающие очи  
 Просят меня в Сочи.—  
 Ей, ей, мадам, ей, ей,  
 У меня нет мочи.<sup>1</sup>

44. Շահազիզն ամուսնացած չի եղել. նա իր վառ պատանեկության օրերում, երբ տակավին ձեմարանի բարձր դասարանների աշակերտ էր և նոր էր միայն սկսել զբիլ իր անմեղ պատանեկական ոտանավորները, իր մտքում կազմել էր երևակայական հրաշալի գեղեցկությամբ մի կույսի պատկեր, որին և սիրահարվել ունվիրել է իր պատրանքները, իր սիրտն ու հոգին: Զարմանալի գուգաղիպությամբ նա իր այդ անուրջների և ցնորքների առարկա եղած կույսի ճշգրիտ պատկերը տեսել էր եկեղեցում և սկսել էր հեռվից, դեռ անծանոթ, սիրել ու պաշտել նրան արդեն ոչ իբրև երևակայություն, այլ իբրև իսկական մարմնացյալ սիրո առարկա: Դա կույս Աննան է, որի գեղեցկությունը երգել ու զովել է նա իր ուսմաններում դանազան ձևերով, պես-պես զբուխյան մեջ: Աննան է եղել այդ աղջկա իսկական անունը,

<sup>1</sup> Այս մասին, այսինքն իր «дамский кавалер» գրքած լինելու մասին, Կիսլավոգսկում, նա գրում է իր եղբորորդուն. «Բայց իմանաք, որ ձեր գնալուց մինչև այսօր դառել եմ կատարյալ «дамский кавалер». Երկու Սերգեև օրիորդները (յուր զարնկեր հաշտարխանցի իբրավարան Իվան Գրիգորիչ Սերգեևի հորեղբոր աղջիկները) անդադար հետս են. հաճախ ճաշի եմ գնում նոցա տունը, ապա մազամ Բարանովսկի, որ շատ սիրել է ինձ, յուր առեն է հրավիրում և առաջարկում, փոխանակ իբրիմի, գնալ յուր հետ Սոչի, ուր գտնվում է նորա կալվածքը, բայց ես նորան երգում եմ. «Ехал казак за Дунай, сказал девчине прощай», մեկ օր էլ երգեցի «Ваши блуждающие очи» և այլն:



Ս. Շահազիզի վերջին լուսանկարը (1907 թ.):

Թե ոչ, մենք չգիտենք, բայց որ մի այսպիսի գեղեցիկ աղջիկ գոյութիւն է ունեցել, որին նա պատահել է եկեղեցում և դեռ չծանոթացած, սիրահարվել է նրա գեղեցկութան, այդ բոլորովին ճիշտ է: «Իսկ ինչ վերաբերում է իմ ուսմանսնեղիս», —ասում է նա իր «Ազատութեան ժամեր»-ի առաջաբանում, —ես միայն այն կասեմ, որ նոցա մեջ եղած կուսական անձինքն ամենևին ֆանատատիկական կամ իդեալական չեն, ինչպես ուսմանը կարծում են, այլ առած են ճշմարիտ աշխարհից. այն անունները, որ ես հիշում եմ իմ ուսմանսնեղում, իմ մեջ շատ ազնիվ և սրբազան զգացմունք են զարթեցրել: Ժամանակի մոսկովաբնակ սակավաթիվ ընտանիքներից մեկի զավակն է եղել այդ աղջիկը, որի հետ նա ծանոթացել է դեռ ձեռնարանի բարձր դասարաններում եղած ժամանակ, իսկ ավարտելուց հետո ավելի է մոտեցել նրան, գնալ-գալ է ունեցել նրա տունը, մտադրված լինելով ամուսնանալ նրա հետ: Աղջիկը համակրութիւն է ցույց տվել նրան, նրա ծնողները քաղցրութեամբ են վերաբերվել երիտասարդ բանաստեղծի այցելութիւններին և ամեն բանից պարզ է եղել, որ եթե առաջարկութիւն լիներ, ոչ աղջկա և ոչ ծնողների կողմից մերժում չէր լինիլ: Բայց մեղ անհայտ պատճառով, զուցե, աղջկան ավելի մոտ ծանոթանալու դիտավորութեամբ, Շահադիզը շարունակ դանդաղել է, շարունակ հետաձգել առաջարկութիւն անելը, ի դերև հանելով աղջկա ու ծնողների ակնկալած հուշերը: Ահա հենց այդ ժամանակները տեղի հարուստ վաճառական երիտասարդներից մեկը խնամախոսութիւն է արել ու ստացել թե աղջկա և թե նրա ծնողների հավանութիւնը: Շահաթահար է եղել բանաստեղծը, երբ լսել է իր սիրածի մի ուրիշին խոսք տալը. նա անհասպաղ առաջարկութիւն է արել, բայց պատասխան է ստացել, թե արդեն ուշ է, աղջիկն արդեն նշանված է:

Թուոված հոգով և բեկված սրտով բանաստեղծը փակվում է իր սենյակում. նա երկար ժամանակ մարդամեջ չի գուրս գալիս և միայնութեան ու առանձնութեան մեջ ողբում է իր կորած սերը, աշխատելով խեղդել իր մեջ այդ զգացմունքը, աշխատելով մոռանալ նրան, որ այնքան քաղցր երազանքի առարկա էր եղել, որ այնքան վառ հուշերի ու ոգևորութեան աղբյուր էր հանդիսացել նրա համար: Այդ մի փորձութիւն է եղել նրա համար, որից և նա, թեև հիասթափված է գուրս եկել, բայց հաղթած է եղել իր զգացմունքներին և կերպարանափոխ եղած, ուրիշ մարդ

զարձած: Նա ուխտում է այլևս ոչ ոքի չսիրել—մեռած համարել իր սերը, և մինչև վերջ հավատարիմ է մնում իր ուխտին: Այնուհետև նա շատ աղջիկներ է պատահում իր կյանքում, ավելի գեղեցիկ, ավելի կրթված և հարմար իր վիճակին ու կացութեան, որոնց նա կարող էր սիրել և սիրվել նրանցից և որոնց հետ նա հեշտութեամբ կարող էր ամուսնանալ, եթե ցանկանար. այնուհետև շատ բարեկեցիկ ընտանիքներից առաջարկութիւն է լինում նրան մեծամեծ օժիտների խոստումներով, բայց նա խուլ ու համբ է մնում այդ բոլորին, պահպանելով իր ուխտը և խո՛ր-խո՛ր թաղելով իր կրծքի խորքում իր նախկին քաղցր, երազկոտ, շոյող անուրջները: «Լևոնի վշտի» սիրուց հիասթափված Լևոնը մեր բանաստեղծի ճշգրիտ պատկերն է ու անսխալ նկարագիրը.—

Չքսիրեց Լևոն և ոչ իսկ մեկին,—  
Ապավինեցավ լուռ առանձնութեան.  
Փախավ ժպիտը, և խեղճի հոգին  
Չըզտավ կայծ մի մխիթարութեան:

Նա զուրկ չէր սերից. մի ժամանակ կար,  
Երբ սիրո անուշ խորհրդածութիւն,  
Որպես անձրևը զարնան զովաբար,  
Տալիս էր և՛ կյանք, և՛ նոր զրութիւն...

Եվ ես մի մարդ եմ ոչ առանց մեղքի,  
Եվ ես սիրել եմ առանց հանաքի.  
Սիրել եմ մենակ, և բախտն անարդար  
Չէ զարդարել իմ սիրո ճանապարհ:

Թեև Լևոնը սիրեց անհաջող,  
(Դուք այդ կիմանաք—այլևս երկու տուն)  
Բայց այս դիպվածից չկարժեա, ընթերցող,  
Որ Լևոն և ես նույն ենք, մի արյուն:

Լևոն սիրում էր մանկութեան օրին:  
Այն մի նաղելի պարկեշտ աղջիկ էր.  
Փոքրիկ փափկամորթ ուներ նա ձեռներ:  
Նորան շուտ թողուց հոգով վրդովված,—  
Երբ նախանձն ձգեց նորա մեջ կասկած,—  
Եվ այս է սիրո ընկեր անմեկին...

Շահագրի մի նամակից, գրված Երևանից 1873 թվի հուլիսի 17-ին Մոսկվայի եկեղեցու երեսփոխ Մելքոն Փանյանցին, մենք իմանում ենք, որ նա վերադարձին միտք է ունեցել մտնել Նախիջևան և առաջարկություն անել «Պոչյայանց օրիորդին»։ «Նախիջևան գնալիս,—գրում է նա,—կամիմ տեսանել Պոչյայանց օրիորդը, որո մասին շատ լավ բաներ եմ լսել. գուցե, սիրտս սիրե, հավանորեն աջը խնդրեմ։ Կրթյալ է, գեղեցիկ և արժաթ ապահովություն։ Այս մնա մեր մեջ գաղտնիք»։

Այս, իհարկե, միայն խոսքեր են եղել. նա ոչ միայն առաջարկություն չի արել, այլև Նախիջևան էլ չի մտել։

Սերը կորցրած, հիասթափված մեր բանաստեղծի ապրումները կարելի է գտնել մի քանի տեղ «Լևոնի վշտի» մեջ։ (Տես «Միբո կորուստը», էջ 170—171, «Լեւն մի սիրիբ», էջ 178)։

45. Շահագրից ապրում էր կուրորտում (Կիսլավոդսկում), բայց բոլորովին անմասն էր և անհաղորդ բուն կուրորտի կյանքին. նա ունկնդիր չէր լինում պարկուժ առավոտ-երեկո հնչող երաժշտություն, նա չէր այցելում «Կուրգալը», որտեղ լինում էր կուրորտի բոմոնդը, չէր գնում թատրոն, որտեղ խաղում ու երգում էին հայանի գերասաններն ու երգիչները, չէր երթևեկում մեկ կուրորտից մյուսը, որ անգործ կուրորտավորների սովորական ժամանցն էր համարվում, չէր այցելում «Ջիարշավը», որ գեպի ինքն էր գրավում որոշ օրերին ահագին բաղմունքուն բոլոր երեք կուրորտներից, չէր գնում-գալիս շրջակայքի անվանի տեղերը, որոնք կուրորտասեր հասարակության գլխավոր գրոսանքի և զվարճություն տեղերն էին։

Նա իր գլուխը կախ և աչքերը առաջ հառած՝ իր սովորական անշտապ քայլերով, մտազբաղ զբոսնում էր պարկի մենավոր ծառուղիներում, բարձրանում էր բլուրները, խուսափելով ուրախ, զվարթ, կեր ու խումով, ֆլերտով տարված ու հափշտակված ամբոխից, որ իրեն պահելու չափազանց համարձակ և սանձարձակ ձևերով ու եղանակով և իր զգեստեղենի արտառոց խայտաբղետ սեթևեթներով հուզում, գրգռում էր նրա ջղերը։ Նրա այդպիսի հուզված կացություն մեջ գտնվելու արգասիք պետք է համարել հետևյալ տողերը, որ նա գրել է իր եղբորորդուն 1902 թ. օգոստոսի 9-ին. «Մինչև այսօր բան չկա քեզ գրելու։ Կուրորտների կյանքը նման է դետի հոսանքի, որ միակերպ գնդչալով, միակերպ էլ տպավորություն է թողնում մարդու վերա, և որովհետև մեր փոքրիկ գետակը համարյա պղտոր է, զանազան

օրգանական մնացորդներով համեմած, մեր թթու ջրերի բազմալեզու և խառնիճաղանճ հասարակությունն էլ չի ուզում դրանից հետ մնալ։ Մեր մեծ մասամբ բաղակայան մելոման կանայք լպստած ալֆոնսների երամակներով շրջապատված, օրը տասն անգամ իրանց լաթերն են փոխում, տասն անգամ քսվում։ Ահա հինց այս բողբոսի մի կին, ըստ երևույթին, մոտ քառասուն տարեկան, շորերը մինչև ծունկը քշաած, և ստալի կարմիր, կանաչ կրունկներով աքլորի մահմուդի պես սրածայր, «դափր հատան է ի հրապարակիս», որով սաստիկ ցնցում են մաղձոտ բանաստեղծի ջղերը։ Բարեկամներս այս տարի ավելի շատ են «իբրև դաւաղ առ ավին ծովու», բայց ոչ «որպէս զգտեղս երկնից», որովհետև դրանցից շատերը աստղերի պայծառությունը չունին։ Պոչյայան այստեղ էր, որ այս օրերս գնաց էջմիածին քահանա ձեռնադրվելու նպատակով, և եթե այս չաջողվի, մտադիր է տեղափոխվել Մոսկվա, հույս զնելով հարուստների վերա, մի անձնախաբուություն, որի մասին ես նրան զգուշացրի»։<sup>1</sup>

Այդտեղ նա սովորաբար ապրում էր պարկը շրջապատող նարզանից ոչ հեռու գտնված հյուրանոցներից և կահավորված ընակարաններից մեկում, վարձելով մի կամ երկու վայելուչ սենյակ։ Իր կյանքի սովորական կանոնավորությունը նա այստեղ հասցնում էր կատարյալ պեղանտիզմի, մոլություն. նա անպատճառ պետք է վեր կենար առավոտը ժամը 5—6-ին, առավոտ-երեկո զբոսանք կատարեր գեպի «կարմիր ու գորշ» ժայռերը, ժամը 11-ին

<sup>1</sup> Շահագրից իր ձախորդության օրերին անձնական փորձով ճաշակած է եղել այդպիսի անձնախաբուության զսուս պտուղները։ Այդ մասին նա 1907 թվի օգոստոսի 22-ին գրել է իր եղբորորդուն. «Ե՛րվանդ, ես մարդկանց հարաբերությունների կամ մտերմական սիրո փոփոխականությունը նկատելով, այս օրերս երկու տող գրեցի. կարծեմ որ դու էլ հավանես, որովհետև գուցե դու էլ փորձած լինես այդ տեսակ մտամոռիփողները։—Այսպես—

1. Իմ բարեկամներս, քանի որ փոքր էին, այսինքն քիչ ունեին, ինչ ասում էին լիբերան.

«Մեղը ու կարագ կեր, հոգի ջան,

Սմբատ ջան».

Բայց երբ այս բարեկամներս մեծացան, այսինքն հարաբերությունների կամ համարում են.

Պարոն Սմբատ, ուզում ես կեր բաղրիջան».

Ահա քեզ բարեկամություն...

Բանաստեղծի այս տողերը մի ակնաբերություն էր ունենում իր ժամանակի հասցեին.

Նարդանի լողաբան ընդունելը, ճամբ 1—2-ին ճաշեր և 9—10-ին անկողին մտնելը: Նրա նստելու, հանգստանալու սովորական տեղերն էին կամ «արքայական հրապարակի» շատրվանի մոտ գրված նստարաններից մեկը, կամ Նարդանի ծաղկոցը և կամ «Գրանդ-օտելի» տակ, Օչակովի խանութի մոտ դրած նստարանը: Ամենքն էլ գիտեին, որ այդ տեղերից մեկում որոշ ժամերի կարելի էր գտնել բանաստեղծին, և գալիս հավաքվում էին ծանոթները, բարեկամները և կազմվում էր, ինչպես նա ասում էր, հայկական «Յունգլի-յամենը»:

Նա շատ էր համակրում չինացիներին, համարելով նրանց մի խաղաղ, աշխատասեր, հին, առանձնահատուկ քաղաքակրթությամբ ապրող ազգ, բախտավոր ու երջանիկ իր հայացքով, իր հասկացողությամբ ստեղծված կյանքի պայմաններում և կատարյալ բարբարոսության նմանեցնելով եվրոպական լուսավոր ազգերի ձեռնարկած արշավանքը նրանց դեմ և դրանից առաջացած ավերն ու սրածությունը Չինաստանում: «Չինացիների մեծ բուռնցքը,—գրում է նա իր եղբորորդուն Չինաց պատերազմի ժամանակ,—մեզ էլ ոչ փոքր բուռնցք պատճառեց դրամական տեսակետից: Թեև այս այսպես է, բայց ես շատ ուրախ եմ, որ արդարության գավազանը բարձրացավ մեղավորի գլխին—եվրոպայի: Այնքան արհամարհանք, որ Մաքիավելի եվրոպան հասցրեց խաղաղասեր խեղճերին, հարկավոր էր, վերջապես, վրեժխնդրություն: Այժմ, կարծեմ, չինացիների մեծ փիլիսոփա Մինցզին էլ չի կարող կրկնել յուր մի անգամ ասածը. «Ես, հերավի, լսել եմ, որ բարբարոսները էլի մի բան սովորել են չինացիներից, բայց ես երբեք չեմ լսել, որ Չինաստանը մի բան սովորած լինի բարբարոսներից»:

Հայկական «Յունգլի-յամենի» անդամները հաճախ փոփոխվում էին, նայելով, թե ջրերի սեղոնին ո՞վ էր գալիս և ո՞վ գնում—Պերճ Պոռյանց, բժ. Ավետիք Բաբայանց, Աղ. Բալանթարյան («Մշակի» խմբ.), Ազեքսանդր Քիշմիշյան, բժշկապետ Տեր-Գրիգորյան և մյուսները, բայց նրա բնավորությունը, գույնը միշտ միևնույնն էր մնում—խոսակցություն մեր առօրյա կյանքի չար ու բարիքի մասին, հասարակաց խնդիրների քննադատություն, վիճաբանություն, սրաբանություններ, կատակ և առհասարակ անձանձրույթ ժամանց: Ինչ ասել կուզի, որ «Յամենի» կենտրոնն ու նախագահը հենց ինքը Շահաղիզն էր, որ հավաքում, միացնում էր ամենքին իր հաճելի ըն-

կերակցությամբ, սրամիտ զատողություններով, քաղցր զրույցով և անվերջ, անհատնում սրաբանություններով: Երբեմն էլ նա հանկարծ կտրում էր զրույցը, վեր կենում տեղից ու զիմում դեպի աղբյուրը, ասելով.

Երթանք, խմենք Նարդան,  
Որ չլինի ապահարզան:

Եվ ընկերները քրքջալով հետևում էին նրան:

46. Չ. Լեսնոյը, «Тифлисский листок»-ի թղթակիցը, թերթի 1909 թ. հոկտեմբերի № 24-ում այսպես է նկարագրում բանաստեղծի կյանքը Կիսլավոդսկում նրա կյանքի վերջին տարին:— «Իր կյանքի վերջին տարիները,—ասում է նա,—Սմբատ Շահաղիզն ամեն ամառ անց էր կացնում Կիսլավոդսկում: Ամառները Կիսլավոդսկը կենդանություն է ստանում, և կյանքը նրա մեջ, ինչպես սովորաբար ասում են, աղբյուրի պես քլքլում, եռում է: Կուրորտավորների ուրախ, պճնված ամբոխը խառնրվում, լցնում է պարկը, Նարդանի սրահը, Կուրդալը, փողոցները, և ամենուրեք լավում է խոսակցություն, հոհուոց...»

«Եվ այսպիսի աղմկալից, ուրախ ժխորի և իրարանցումի մեջ թվում էր ինձ, թե Շահաղիզն իրեն մենակ էր զգում, մենմենակ: Ահա նա կենդանի կանգնած է իմ առաջ պարկի խորքում, ահա ստվերախիտ ծառուղիներից մեկի միջով մտազբաղ, անշտապ քայլերով անցնում է բանաստեղծը, ահա նա մենակ նստած է սարի գլխին, կարմիր ժայռերի մոտ, իր մելամաղձոտ, մտածկոտ հայացքը հառած դեպի արևմուտք, որտեղ հեռավոր լեռների հետևում մեզմ ու անդորը պլպլում, հանգչում է երեկոյան վերջալույսը: Արդյոք իրո՞ք նա իրեն մենակ էր զգում, թե՞ պիտակցաբար խուսափում էր ժխորից, կյանքի այդ սին ու նանիլը ժխորից, կամենալով մեկուսացած, մենակ մնացած լինել բնության հետ, որ նա այնքան սիրում էր:

«Ինձ թվում է, թե սարալանջի մայրերից, դառամյալ կաղնիները, սրոնք կախել, հովանի էին արել ծառուղու վրա իրենց հաղթ ոստերը, գետի մեզմ քչքչոցը, քամու մեզմ սոսափյունը, որ փչում, անցնում էր ձորով, կեռնեխի կանչյունը թավուտի մեջ, պայծառ արևը, դաշտի պարզ, սիրուն ծաղիկներին ավելի մոտ էին բանաստեղծի սրտին, քան այդ պճնված ազմկանույղ ամբոխը, որ ետ ու առաջ էր գնում-գալիս Նարդանի սրահում և պարկի գլխավոր ծառուղում: Եվ հաճախ նա մենմենակ թա-

փառում էր պարկի մեկուսի ծառուղիներում, սարերի վրա, ուր չէր հասնում ամբոխի պղծելի աղտուկը:

«Բայց նա, ինչպես ինքը կատակով ասում էր, ուներ մի քարեկամ: Առավոտը, մոտավորապես ժամը 9-ին, երբ բանաստեղծը դուրս էր դալիս իր բնակարանից, նրա առաջն էր ընկնում ուրախ ֆլոգիլոսով և հաջելով մի փոքրիկ, բրդոտագի, շիկամազ շնիկ, նա քաղաքում տեր չուներ, նա մի աստանդական շնիկ էր, կոչվում էր «Կուտկա» և մոտենում էր միշտ բանաստեղծին, պոչը խաղացնելով և ուրախ կաղկանձելով:

«Դե՛հ, բարե, Կուտկա, ասում էր ժպտալով բանաստեղծը. — ուղճւմ ես ուտել: Երթանք, կկերակրեմ, միայն թե մի ցատկը տիր, մի աշխատիր ցույց տալ ինձ քո սերը, գիտեմ, որ դու ինձ սիրում ես:— Եվ առանց շտապելու գիմում էր դեպի խանութ, Կուտկան էլ պոչը խաղացնելով, խելոք-խելոք հետևում էր նրան: Խանութում նա հաց էր դնում, նստում էր Օչակովի վաճառանոցի առաջ դրած նստարանի վրա և սկսում էր կերակրել Կուտկային: Մոտից անցնողները ժպտալով նայում էին, ոմանք էլ շարժում էին գլուխները: Երբ որ Կուտկան ուտում, վերջացնում էր վերջին կտորը, բանաստեղծը լրջորեն ասում էր նրան. «Դե՛հ, այժմ կարող ես գնալ կամ քնել, կամ վազվզել, ինչպես որ կուզես... Կուտկան նայում էր նրան իր խելացի աչքերով, հետո անհայտանում էր, իսկ մյուս առավոտ դարձյալ կանգնած սպասում էր նրան հյուրանոցի մոտ...»

«Առհասարակ նա ոչ ոքի չէր մերժում օգնելու, որի համար նրա ծանոթներից ոմանք հանդիմանում էին նրան, թե ինչու նա փող է բաժանում արկածախնդիրներին, արբեցողներին, միևնույն է պիտի խմեն, հարբեն: Այո, բայց չէ՞ որ նրանք անբախտ են, պատասխանում էր բանաստեղծը, քաղցած են, հիվանդ... Պետք է մեղքանալ և նրանց, շատ պետք է: Այն ամառը Կիսլովոդսկում հաճախ էին պատահում փողոցներում կողոպտելու դեպքեր: Ինչ որ «եբիտասարգ պարոններ» երեկոները հարձակվում էին այս կամ այն անցնող-գնացողի վրա և, ատրճանազարկ անելու սպառնալիքով, խլում էին փող, ժամացույց և փախչում թաքնվում: Մի այդպիսի հարձակման ենթարկվում է և բանաստեղծը: Մեկ անգամ երեկոյան, մոտավորապես ժամը 9-ին, նա վերադառնալիս է լինում Նարզանից իր բնակարանը: Նրան արագորեն մոտենում են երկու անծանոթ մարդ: Խնդրում ենք չկանչեք, ապա թե ոչ մենք ձեզ կսպանենք, ասում է մեկը նրանցից,

իսկ մյուսը այդ ժամանակ հանում է բանաստեղծի ոսկե ժամացույցը: Կողոպտողները փախչում են: Բանաստեղծն օգնություն չի կանչում և ոստիկանության էլ չի հայտնում: Երբ նա այդ դեպքի մասին պատմում էր ծանոթներին, ավելացնում էր, թե այդ ամառը նրա բանը չի հաջողել, երկաթուղու գնացքում, մոտտովում հանել էին նրա դրպանից դրամապանակը, իսկ այժմ ահա կողոպտեցին, տարան ժամացույցը: «Վատ նշան է,— ասում էր նա,— առաջ այդպիսի բան ինձ չէր պատահում: Այո, այո, վատ նշան է, երևի, հասել է ժամանակը Շահազիզին հանգրոտանալու... Է՛հ, ժամանակն էլ է. նախկին կրակը չկա, իսկ ինչպես կարելի է ապրել առանց կրակի»:

«Եվ թափառում էր նա մեն-մենակ պարկի մենավոր ծառուղիներում, բարձրանում էր կարմիր ժայռերը և երկար ու բարակ դիտում էր, թե ինչպես մայր էր մտնում արևը, ինչպես կամաց-կամաց մթնում էր օրը, վերջալույսը բոցավառվում էր, հետո հանգչում, քարանձավները մոռյվում էին, խավարում: Գիշերը վրա էր հասնում, վառվում էին աստղերը, իսկ բանաստեղծը, նստած կարմիր ժայռերից մեկի վրա, նայում ու դիտում էր: Յածը, քաղաքում փայլվում էին ճրագները, լսելի էր լինում շների հեռավոր հաջոցը, սարալանջում մայրիների մեջ սոսափում էր քամին: Բանաստեղծը նայում, նայում էր աստղերին... Նա, կարծես, միաս բարե էր ասում, կարծես հրաժեշտ էր տալիս աշխարհին: Իսկ աշնանը (ձմեռը) հեռագիրը գուժեց Կիսլովոդսկ բանաստեղծի մահվան ըոթը»:

47. Շահազիզն ազատ հայացքների, ազատ մտածողության տեր է եղել. դրան ապացույց կարող են լինել նրա բոլոր թե՛ չափածո և թե՛ արձակ գրվածքները: Նրան ժամանակակից մեր հեղինակներից, բացի Նալբանդյանից, և ոչ մեկի դրվածքներում մենք չենք գտնում այնքան հակաառավարական, հակացարական ելույթներ, որքան նրա «Լևոնի վշտի» մեջ, և այդ տեսակետից բոլորովին ճիշտ պետք է համարել «Լևոնի վշտի» առթիվ նրա վրա արված ցարական ներքին գործոց միևնույն վալուսին հայտնի մատնությունը, որի մեջ հատուկ շեշտված է հենց այդ կետը. ճիշտ պետք է համարել մատնության թղթի և այն կետը, թե Շահազիզը նալբանդյանական է և թե նա, նալբանդյանը, կարդալով «Լևոնի վշտը», բացականչել է, թե «Լևոնի վշտը յուր վիշտն է»: Շահազիզը դեռ իր ուսանողության օրերին Լազարյան Լիկեոնում, մտած է եղել «Նյուսի-

սափալակահաններէ՝ Մոսկվայի փոքրիկ, սեղմ խմբակի մեջ և մտտեցած է եղել Նաղարչյանցին և Նալբանդյանին, որոնցից առաջինին նա իր ուսուցիչն է համարել, երկրորդին հաղորդակից ու հետևող է հանդիսացել իր մտածելակերպով: Նա 1861 թվին գրել է և տպել «Հյուսիսափայլ»-ում իր լավագույն ոտանավորներից մեկը—«Ազգային վիճակը», որի մեջ ակներև է «Ազատն աստված»-ի ազդեցութունը, շունչն ու ոգին. Նալբանդյանի շունչն ու ոգին կարելի է գտնել և նրա հաջորդ—1862 թ. «Ազատ մարզ» և հետո, 1864 թ. «Պոետ» ոտանավորների մեջ, էլ չենք խոսում «Էլեոնի վշտի» մասին, որի մեջ նա նվիրել է նրան մեր արդեն մեջ բերած այնքան հոգեբուխ, այնքան սրտառուչ քառյակները, որոնք ցույց են տալիս այն հոգեկան զուգակցութունը, որ նա ունեցել է նրա հետ:

Այս բոլորից, կարծում ենք, որ ուրիշ եղբակացութեան չի կարելի հանգել, բայց միայն, որ նա պատկանել է «Հյուսիսափայլակահաններէ» ձախ թևին, որ գլխավորել է Նալբանդյանը, և որ նա նալբանդյանական է եղել կատարելապես: Այստեղ, համեմատութեան համար «Ազատն աստված»-ի հետ, անտեղի չենք համարում մեջ բերել մի քանի տող «Ազգային վիճակը» ոտանավորից.—

Ո՞վ ազատութուն, սճւրբ քստորական,  
 Զոհելու եմ քեզ իմ անձս հավիտյան:  
 Թող ստրկացած դարերով մարդիկ  
 Դնեն իմ վերս նզովքի կնիք:  
 Թող սրե չար լեզուն անզոր թշնամին,  
 Թափելով վերաս թունավոր սլաքներ:  
 Ես պիտի խնդրեմ, ազգ իմ, լալազին:  
 Ոտնակոխ եղած քո իրավունքներ:  
 Ոչ ոք չէ կարող հոգուս նպատակ  
 Ընշել, խորտակել բռնութեան զենքով,  
 Ոչ սուր, ոչ արյուն, ոչ բանտ, ոչ կայծակ,  
 Ոչ նույնիսկ գեհեն մշտապառ բոցով», և այլն:

48. Շահազիզը ծանոթ է եղել մեր նոր գրականութեան առաջին մեծ բանաստեղծ Ռափայել Պատկանյանի հետ, բայց բարեկամութուն չի արել, իրեն հեռու է պահել նրանից: Նա, սակայն, ճանաչել է նրա բանաստեղծական մեծ շնորհքն ու արժանիքը և դեռ իր աշակերտութեան օրերից սիրել է կարգալ «Գամառ Բաթիպայի» սեպրակները: Նա իր «Ազատութեան ժամեր»-ում

տպագրված «Հրեշտակ պահպանիչ» ոտանավորի մոտիվը փոխ է առել նրա «Հայոց աղջիկ» սիրուն ոտանավորից, նրա «Արաքսի արտասուքը» ոտանավորի եղանակով երգելու համար գրել ու տպագրել է նույն «Ազատութեան ժամեր»-ում իր «Երկիր ու երկինք» երգը: Նա 1892 թվի օգոստոսին, երբ տեղեկութուն է ստացել Պատկանյանի մահվան մասին, Դրիմի Այուպկայից անմիջապես մի ջերմ ցավակցական հեռագիր է ուղարկել նրա ընտանիքին. այդ հեռագրի մեջ համառոտակի ամփոփված է եղել նրա լուրջ գնահատականը բանաստեղծի՝ ազգին թողած գրական մեծ ժառանգութեան մասին: Նա, վերջապես, համակրանքով չի մի հեռագիր է ուղարկել Նոր-Նախիջևան՝ նրա արձանի բացման առթիվ: Պատկանյանը նույնպես չի որոնել նրա բարեկամութունը, բայց ճանաչել է նրա արժանավորութունը, և 1887 թվին, երբ նրա աշակերտները Մոսկվայում մասնավոր կերպով տոնախմբելիս են եղել նրա 25-ամյակը, շտապել է և ինքը մի շնորհավորական հեռագիր ուղարկել իր ընկեր Գևորգ Քանանյանին, լինողելով հասցնել նույնը հորեկարին տոնախմբութեան օրը, որ և նա կատարել է ճշտութեամբ: Սակայն, Քանանյանը հեռագիրը տեղ հասցնելու հետ միասին և մի մեղադրական նամակ է գրել իր հին ընկերոջը, որ այդպիսի հեռագիր է ուղարկել Շահազիզին: «Այս ինչ հորեկաններ են,—գրել է նա: На безрыбье и рак рыба. ուրախ եմ, որ մեր ուսանողական դասը կամենում է Շահազիզյանների առիթով պատվել յուր մայրենի լեզուն, ուրիշ ներելի խորհուրդ չկա այդպիսի 25-ամյա աննշան ծառայութունը տոնելու... Մոլորյան, կարճատես պատանիներ. եթե դոքա ունենային հասկացողութուն, թե ո՞վ է եղել մայրենի լեզվի պահպանողը այս կենտրոնական հայ ուսումնարանի մեջ սոսկալի ալեկոծութեան ժամանակ, եթե իմանային ո՞ւր պետք է ոտից մինչև գլուխ ընկղմած և անհետացած լինեն Շահազիզյանները... բայց թող միամտութեամբ տոնեն, փառավորվեն... վրաս չկա»: (Տես այդ մասին «Իմ հիշողութունները» Թ. Պատկանյանի մասին», «Տարազ» 1901 թ., էջ 274):

Պատկանյանը չի սիրել Շահազիզին իրրև «Հյուսիսափայլ»-ի Մոսկվայի սեղմ խմբակի կրտսեր անդամի և Նաղարչյանցի սերը ու Նալբանդյանի համակրութունը վայելողի. ինչպես որ չի սիրել և Նաղարչյանցին ու Նալբանդյանին, որոնց համարել է հակառակորդ ու անբարյացակամ իրեն և իր հիմնած «Գամառ Բաթիպա» ընկերութեան: Նրա և Փիլիպպոս Վարդա-

նյա նի նամակագրութեան մեջ գտնվել են նրա ձեռքով գրված երկու ոտանավոր, որոնց վրա Վարդանյանը կարմիր մատիտով նշանակել է, թե դրանք վերաբերում են Սմբատ Շահազիզին, և եթե նշանակված էլ չլինեին, դրանց բովանդակությունից էլ կարելի էր հեշտութեամբ հասկանալ, որ դրանք վերաբերում են «Առնի վշտի» հեղինակին: Դրանց մեջ նա ճշմեղ է ազատուց տալ, թե Շահազիզը բանաստեղծ չէ, այլ «գրչի ֆոնդը» կրծելով ոտանավոր գրող, և այլն:

49. Շահազիզին իր ծառայությունը Լազարյան ձեմարանում թողնելուց հետո, այլևս ոչ մի ծառայություն և կամ կողմնակի գործ չի ունեցել և, բնականաբար, ազատ ժամանակ շատ է ունեցել, ուրեմն և հնարավորություն ցանկացածի պես օգտագործելու իր այդ ազատությունը: Նրա այն կարճատև ծառայությունը, որ 1900 թ. ձեմարանում ձրիաբար արել է տնտեսական խորհրդի անդամի պաշտոնով, Քանանյանից հետո, Վսեվոլոդ Միլլերի ղեկավարությամբ օրով և նրա հատուկ ցանկությունով ու հրավերով, իհարկե, ծառայություն չի կարելի համարել, քանի որ այն սակավօրյան լինելով, ոչ մի հետք էլ չի թողել նրա կյանքում: Նա իր կյանքի այդ տարիներին շատ է կարգացել, բայց գրքերի խիստ ընտրությունով, և այն ոչ երեկոները և գիշերները, այլ միայն ցերեկները, որովհետև ճրագի լույսը փաստակարգ է համարել աչքերի համար: Նա հետևել է ցարական կառավարության վարած քաղաքականությանը Ռուսաստանում սպրոդ մյուս ազգերի և հատկապես հայերի վերաբերմամբ, որի համար և նա ամեն օր կարդացել է հայահալած համարված պարբերականները—Սուվորինի «Новое время»-ն, Կատկովի «Московские ведомости»-ն և մյուսները՝ իր սիրած «Русские ведомости»-ի հետ միասին: Դրա հետևանքով նրա մեջ հետզհետե այնքան թուլն է հավաքվել, որ չի կարողացել խոսել նրանց մասին սառնասրտությամբ, այլ համարյա միշտ իրեն հատուկ սրբաբանություններով և ոչ բարի որակումներով: Այդ մասին, օրինակ, նա իր եղբորորդուն 1904 թ. նոյեմբերի 12-ին գրում է. «Այն, ես էլ կարգում եմ համեմատաբար ազատ մամուլի թերթերը, բայց մշտափոփոխ և բազմերեսանի Սուվորինի ազատամիտ հոսանքին չեմ հավատում. ես նրա թերթը ամենավատագույնը եմ համարում համայն կայսերություն մեջ. նրա երեսին պետք էր թխել ֆրանսիացի... [անընթեհանելի] ծեփած երկու շամարը կամ սիլան ու չափալախը: Ավելի հետաքրքրվում եմ «Русские ведомости» թերթով:

Նրա առաջնորդողներով, ուր ամփոփված են կուլտուրական-արդյունաբարական և ժողովրդի հողին և ժխաքը զարգացնող տեսություններ, — այն, որոնց հոսանքը արգելված է Ռուսաստանում: Ռուս մեծավորները, որպիսի են ֆոն-թեյններ (Ֆոն-Պլեյել—Ե. Շ.) և գայլաձիներ (Գոլիցիններ—Ե. Շ.), կարծելով, որ հպատակները քանի լուսավորված լինեն, այնքան էլ կարող են վրդովել աշխարհի բարօրությունը, ամեն արգելքներ գործ են գրել, որ այդ հպատակները խավարում նստեն:

Երբ կովկասի կառավարչապետ Գոլիցինը, Կովկասի ուսումնական շրջանի նոգաբարձու Յանովսկին և «Кавказ» պաշտոնական թերթի խմբագրի, բանաստեղծ Վելիչկոն հասնելով ծայրահեղություն, մոլեգնել են իրենց հայահալածական գործողությունների մեջ, նա գրել է իր «Հիշողությունները Վարդանանց պատերազմի տոնի առթիվ» և երկու տարուց հետո իր «Մի քանի խոսք իմ ընթերցողներին» վերջին գրվածքը, երկուսն էլ ուղղված ցարական կառավարության դեմ, բայց այնպիսի վարպետությամբ վարագուրած, որ գրաքննչությունը գլխի չի ընկել: Առաջին գրվածքի մասին նա գրել է իր եղբորորդուն. «Բարեկենդանի հինգշաբթին, Վարդանանց տոնին, ուսանողները մի քանի պարոնների հետ կամեցան, ըստ սովորության, Վարդանանց տոնը կատարել, ինձ էլ ի միջի այլոց, հրավիրել էին որպես հյուր: Ես էլ ցանկացա մի երկու խոսք ասել տոնի առթիվ. նշանակեցի մի քանի կետեր, որպես խոսքիս նյութ: Տոնը չկայացավ, և որովհետև ճառիս հիմքը կամ հիմնաքարն արդեն դրած էր, չկամեցա հետ քաշվել, ձեռնթափ լինել, կամաց-կամաց, ինչպես մի տեսակ հանաք, սկսեցի պատրաստել կիր ու ատաղձ, շաղախ ու գլղոններ, որպեսզի կարողանամ մյուս շինվածքը ավարտել: Սկսած մի երեսից դուրս եկավ մի լուրիկարար հիմնավորված գործ, թեև համառոտ և սահմանափակ, մոտավորապես երկու-երեք տպագրական թերթ: Գործը շաղկերտի, Միհրնեսեսի և պարսիկների անունով հարմարացրած է ներկա կարևոր եզրակացությունների հետ, և կարծում եմ բավական հետաքրքրական պիտի լինի հասկացողների համար: 25 կամ 15 մայիսի (միտա չի) ուղարկեցի ոչուփուչ Յենզուրայի Կոմիտեին, բայց մինչև այսօր պատասխան չկա, թեև մի չորս-հինգ հեռագիր եմ տվել: Ահա գլխավորաբար այդ եղավ իմ հեռանալու պատճառը: Կամենում էի, որ իմ ներկայությամբ տպագրվի գրությունը խառն լինելով, առանց ինձ անհնա-

րին կլինեն տպագրել: Այժմ եթե ստացվի, պետք է ուղարկեն այստեղ, որ նորից արտադրեմ և հետ ուղարկեմ: Այս հանգամանքը ինձ շատ ծանր պիտի լինի, որովհետև գրելու ժամանակ անդադար ծխում եմ չափից դուրս, մինչև անգամ գլուխս պտտվում է: Ծարազրուծյան խորագիրն է: «Հիշողութուններ Վարդանանց տոնի առիթով»: Առաջ գրել էի «Կարևոր խորհրդածութուններ», բայց վախեցա...», և այլն:

Բացի այն գրքերից, որ նա ընտրությամբ կարգացել է իր համար, նա հաճախ ստիպված է եղել կարգալ և ուրիշ գրքեր, որ ուղարկել են նրան հայ գրողները և, տիրապես, սկսնակ գրողները: Կարելի է կարծել, թե դա մի պատիվ է եղել, որ մատուցել են նորերը հին գրողին, բայց իրոք այդպես չի եղել: նրանք ուղարկելով նրան իրենց երկերը, զրա հետ միասին խնդրել են, որ նա իր կարծիքը հայտնի այդ երկերի մասին, մի բան, որ նա դժվարացել է կատարել, որով և երբեմն դժգոհութուն է հարուցել իր դեմ:

Նա ոտքից գլուխ աշխարհաբարյան է եղել, գուրգուրացել մեր նորածիլ աշխարհաբար գրականության վրա և սրտանց սիրել զրա չարքաշ մշակներին ու միջոցներ որոնել ապահովելու նրանց անապահով նյութական կացությունը: Եվ երբ 1891 թվին Մոսկվայի հայ գաղութի մեջ խնդիր է հարուցվել տոնելու նրա 30-ամյա հոբելյանը և զրա համար հասարակության կողմից եկել են նրա մոտ պրոֆ. Ներսիսյանը, Գրիգոր Զանդիսյանը և Նիկողայոս Ժամհարյանը նրա համաձայնությունն առնելու, նա իր համաձայնությունը տալու մի անհրաժեշտ պայման է առաջարկել, որ լինելիք հոբելյանն ուսելխմելով չվերջանա, այլ հավերժացվի մի հանրօգուտ և ազգօգուտ գործով: Եվ սկիզբն է առել, ինչպես արդեն մենք իր տեղում ասել ենք, մեր գրականության մշակների նյութական կացությունը բարվոքելու համար կազմված գրական ֆոնդը, որի կազմողը և հիմնադիրը, այսպիսով, հանդիսացել է Սմբատ Ծահաղիզը:

Նա 1901 թվի ապրիլի 3-ին իր եղբորորդուն գրած նամակներից մեկում, ի միջի այլոց, հայ հեղինակների և հայ լեզվի վիճակի մասին գրել է հետևյալ տողերը. «Իրավի. ո՞վ է հետաքրքրվում հայ հեղինակի գործով: Հայերս մի վայրենի հասկացողութուն ունենք հայերին գրքերի և հարազատ լեզվի մասին. մենք բոլոր ժամանակը օտար լեզուներով ենք կոտրատում, որովհետև այդ օգտակար է մեզ: Եթե երբեմն մի քանի

հայերին խոսքեր ենք արտասանում, այդ միայն նրա համար է, որ լսողին հիշեցնենք, որ մենք էլ հայ ենք ծագումով»:

Իր մի ուրիշ նամակում էլ, գրված նույն թվի սեպտեմբերի 30-ին Պատկանյանի արձանի բացման առիթով, նա դարձյալ գրել է նույն նյութի մասին. «23 սեպտեմբերի Նախիջևանը, հետևաբար և հայոց ազգը տոնախմբեց մի խաղաղ մտավոր հաղթանակ, որ տարի է հանգուցյալ բանաստեղծ Պատկանյանը: Խեղճ հայ մշակներ, որոնք կենդանության ժամանակ ենթարկվում են հազար ու մի զրկանքների, իսկ մահից հետո արժանանում են այդ տեսակ հանգեանների և փառաբանության: Բայց հազար երանի գնացողներին, քան թե մնացողներին. ժամանակիս վտանգը տեսնելով և ազգիս սպանման ականատես լինելով, մնում է զառն հառաչանքով ողբալ մեր դիակների վերա, որոնցով այսօր էլ լցված են Փոքր Ասիայի ոչ միայն խոր ու խուփ տեղերը, այլ և հայտնի ու մարդաշատ քաղաքներում մեծամեծ պետությունների ներկայացուցիչների առաջև: Վայ քեզ, եվրոպական քաղաքակրթություն, որ վարակված ես բարձր կուլտուրական ցինիզմով—Իրավի, խիստ հուսահատական է մեր գրությունը, և ես չեմ տեսնում, թե որտեղից պետք է լինի մեր փրկության միջոցը: Ահա թե սրբախի խորհրդածութուններ ծագեցին իմ մեջ, երբ մենք ցնծալից կեցցեներով տոնախմբեցինք երեկվա հանդեսը»:

50. Մեր նոր գրականության մշակներից նա առանձնապես սիրել ու հավանել է, բացի Ստեփաննոս Նաղարյանից և Միքայիլ Նալբանդյանից, Բաֆֆուն, Ղաղարոս Աղայանին, Պերճ Պոռոյանին և Հովհաննես Թումանյանին: Իր հոբելնական ճառում նա կոչ է արել օգնության հասնելու մեր բոլոր հեղինակներին և հատկապես Պոռոյանին. նա արձայնախոսատուի է ուղարկել Աղայանին. նա Բաֆֆուն համար ստորագրություն է բաց արել, կամենալով նոր տարուն ուղարկել նրան արձայնի թանաքաման ու ոսկի զրիչ և արձայնի պատվանդան: Նա, կրթ ֆոնդի գումարն աճած է եղել և հասած 10 հազար ուրլու, զրա տեղումները բաժանելիս, առաջին հերթին բաժին է հանել Պոռոյանին, Աղայանին ու Թումանյանին և այնուհետև էլ մինչև իր կյանքի վերջը ամեն տարի աչքի առաջ է ունեցել նրանց և բաժին հանել: Հ. Թումանյանն հաճախ է հիշում այդ մասին իր նամակներում: Բաֆֆուն մահվան

անթիվ են գրել է իր եզրորոշումն. «Բաֆֆին մահը մեծ բարոյական հարված պատճառեց ինձ որպես նորա վաստակ-ները սիրողի և նորա վարկը խոստովանողի»:

Սրանից հետո հասկանալի պիտի լինի, որ նա շատ գայրա-նում և հուզվում է, երբ լսում է, թե ուսանողները պատրաս-տութուն են տեսնում տոնելու, Մոսկվայի ուսանողական ժողովի հիմնադրության քառասնամյակը լրանալու առթիվ, Գևորգ Քանանյանի հորելյանը իբրև թե այդ ժողովի հիմնադրի, Քա-նանյանի, որ նրա աչքի առաջ նստած-վերկացած տեղը հայհո-յում էր և՛ Նաղարյանին, և՛ Նալբանդյանին, և՛ Բաֆֆուն և ան-պատվում նրանց մաքուր հիշատակը: Այդ մասին նա իր եզրորո-շումն ուղղած նամակներից մեկում, ի միջի այլոց, գրել է հետևյալը. «Մի հետաքրքիր բան ևս: Այստեղի ուսանողները, այսինքն Տ. Հովհ. (հետագայում երևանցի իրավաբան Տիգրան Հովհան-նիսյանը—Յ. Ծ.) և մոլորանդ կուսակիցները (հացակեր հաց-կատակները) կամենում են առաջիկա ամսին տոնախմբել ուսանող-ների ժողովների քառասնամյակը, ոչ ուրիշ նպատակով, այլ միայն խնկարկել իբր թե դրանց հիմնադիր Կորչանին (Քանա-նյանին—Յ. Ծ.), նրան, որ Նալբանդյանին ասում է авантюрист, шарлатан, նաղարյանցին—գող և խարերա, Բաֆֆին—бесталан-ный писака, բայց որ սիրում է «Մշակը» և սորա հիմնադիր Գր. Արծրունին: Արդյոք անբան հայվաններ չ'են, եթե այսպես բան պատահի: Ես ավելի իմ ձեռս կկտրեմ, քան թե կհավա-տամ, բայց մյուս կողմից իմանալով մերայինների թուլու-թյունը ու բարոյական անհաստատությունը, կարող է և այդ-պես պատահել: Ուրեմն ուսանողները պիտի ապացուցանեն, որ յուրյանց անցյալ սերունդները սխալվել են մեր պարոնի մասին. «որ երեկ յուր խորք աղջիկը ծախեց շատ կծան գնով և հագարա-վար ռեփրմեր գործեց,

—կեցցե գաղափարական կյանքը!»

Ինչի հետևանք է եղել Քանանյանի այդպիսի անպատկառ վերաբերմունքը Նաղարյանցի, Նալբանդյանի և Բաֆֆու հան-դեպ, որոնք այնքան խոշոր դեր են խաղացել մեր մտավոր կուլտուրական կյանքում: Այդ մի վրեժխնդրութուն է եղել այն ծաղրանքի փոխարեն, որին նա ենթարկվել է 1859 թվին «Հյուսիսափայլի» էջերում տպագրված «Հայոց ազգի լուսավո-րիչք» խորագրով պիեսի մեջ, որ Անանիա Սուլթանյանը հանե-

լով «Современник» օրագրից, թարգմանել է հայերեն և Նալ-բանդյանի գործակցությամբ հարմարեցրել հայ կյանքին, առանց հիշելու զրա բուն հեղինակ С. Н. Феодоров-ի անունը: Քանա-նյանն այդ պիեսի մեջ դուրս է բերված մի պճնասեր դատար-կախոս և ծակ փիլիսոփա երիտասարդի պատկերով և «Մագամ-յան» ազգանունով, որովհետև, ինչպես հայտնի է, զղարցիք (Քանանյանը զղարցի է եղել) իրենց բարբառի մեջ հաճախ են գործածում «մագամ» բառը:

51. Յուրի Վեսելովսկու գրվածքներից մեկում՝ «Русское влияние в современной армянской литературе», 1909 թ., մեջ է բերված Շահազիզի մի նամակը, որ պատասխան է գրված-քի հեղինակի նրան ուղարկած հարցաթերթի, թե նա իր ուսա-նողության օրերում ուսական ի՞նչ ազդեցութունների է են-թարկված եղել: «Ոոսք չի կարող լինել, որ իմ վրա, ինչպես և ամբողջ սերնդի վրա,—պատասխանել է նա,—ուժեղ ազդեցութուն են գործել ռեֆորմների դարաշրջանը և նրա անդրադարձումը ուսական կյանքում: «Լևոնի վիշտը», որտեղ մերկացվում են հայ իրականության մութ երևույթները, զգալի չափով ստեղծ-վել է այն ոգևորության շնորհիվ, որ առաջ էր հեղել գյուղացի-ների ազատության հետևանքով: Հիշում եմ, թե սրբան սրտիս մոտ էի ընդունում այդ անցքը...»

«Ընկերներիս շրջանում ես պատկանում էի այն երիտա-սարդների թվին, որոնք ամենից ավելի եռանդով էին հետևում ուս սամագրերին, օրինակ, «Современник»-ին և նրանց մեջ արծարծվող խնդիրներին... 1859 թվի «Современник»-ից է առնված «Լևոնի վիշտի» երգերից մեկի բնաբանը: Գործը լուրովի «Милый друг, я умираю» բանաստեղծության ընթերցումը ներշնչեց ինձ սեփական մի բանաստեղծութուն գրելու իզնան, որն սկսվում է համարյա այնպես, ինչպես Գործը լուրովի բա-նաստեղծութունը, բայց կրում է այլ ընդլիճ և վերաբերում է հայերի վիճակին»:

Շահազիզի այդ խոսքերից մենք պարզված ենք համա-րում, թե իր ժամանակ նա ի՞նչ ուսական հոսանքների ազդե-ցության է ենթարկված եղել: Դա 60-ական թվականներին Ռու-սաստանում իշխող հոսանքն է, որ առաջ էր եկել Ղրիմի պատերազ-մից հետո, «ճորտերի ազատագրության» հարցի զորեղ ազդեցու-թյան ներքո, հոսանք, որ տիրապես արծարծվել է «Современник»

ամասարում, դրան գլխավորող ներկայացուցիչ, Չերնիշևսկու և Դոր-  
բուլուբուլի կարող գրեցներով:

Ռուս բանաստեղծներից Շահազիզը հատկապես սիրելի է  
Պուշկինին և Լերմոնտովին, որոնց գրվածքները նա միշտ կար-  
դացել է և տեղ-տեղ էլ իր բանաստեղծությունների մեջ նրան-  
ցից մատավոր նմանություններ փոխառություններ արել: Շահա-  
զիզի մահից հետո, նրա գրքերի մեջ գտնվել է մի գիրք,  
որի առաջին բաց էջերից մեկի վրա նրա ձեռքով 1872 թվին  
գրված է Պուշկինին նվիրված հետևյալ քառյակը.

Իմ սրտիս սիրած պոետ դու անգին,  
Որ գլուխի ևս ինձ սիրո գգվանքով,  
Տածել ևս հոգիս ոսկե քնարով.—  
Կեցցես հավիտյան, կեցցես դու, Պուշկին:

Նրա ուսանողության օրերում և «Լևոնի վիշաք» ստեղ-  
ծագործելու ժամանակները նրա ընթերցանության և ուսուս-  
նասիրության սիրած գրքերը եղել են՝ Հայնե բանաստեղծի եր-  
գերը, Դյոսթի «Փառուսը», Բայրոնի «Չայլդ-Հարոլդը», որի օրի-  
նակով և եղանակով նա շարահյուսել է իր «Լևոնի վիշաք»,  
Հոբեմալի երգիծանիչ գործը, Բերանժեի երգերը, Բեռկլի «Անգ-  
լիայի քաղաքակրթության պատմությունը», Շեքսպիրի ող-  
բերողությունները, Հարություն Սվաճյանի «Մեղուն» (Պոլիս),  
Կոմս Էմմանուելի (Նալբանդյանի) մի քանի հայտնի երգերը, և  
այլն: (Տես այս մասին «Լևոնի վշտի» 2-րդ գլուխը, էջ 63):

52. Շահազիզի՝ իր կղերգորդուն գրած նամակներից  
երևում է, որ բանաստեղծի կյանքի վերջին տարիներում նրա  
մաղձը շատ են խառնել և այն աննպաստ քննադատություն-  
ները, որոնք գրվել են նրա գրական գործունեության մասին  
հայ և ուսուս մամուլի էջերում: Դրանցից մի քանիսը գրվել են  
այնպիսի վիրավորական եղանակով, որ առիթ են տվել նրան  
կարծելու, թե ժամանակի ընթացքում Մոսկվայում իր դեմ  
կազմված է եղել մի «գավազիք» խմբակ, որ իրեն հատուկ նպա-  
տակ է դրել նրան և նրա գրական գործունեությունն անվա-  
նարկելու, վարկաբեկելու հասարակության աչքին, և որ զրանց  
հեղինակները, որոնց նա կոչել է «Փասքուս պարոններ» և «Մոսկ-  
վայի ցեցեր», իր վաղեմի հակառակորդ, Լազարյան Շեմարանի  
վերատեսուչ Դևորդ Բանանյանի օջախի մարդկանցից են, և այդ  
անում են ի հաճույս իրենց մեծավորի: Այդ քննադատությու-  
ն

ներքի մեջ մի տեղ նրա «Լևոնի վիշաք» կոչվել է «հին հագուստ»,  
մի այլ տեղ նրա «Հիշողությունները» որակվել են «բոխա-  
բառով, մի երրորդ տեղ «Առաքել դարվիշ» ծածկանունով հոդ-  
վածագիրը նրա մասին խոսել է իբրև մի մեռյալի մասին, և  
այլն և այլն:

Ուշադրության արժանի պիտի համարվի բանաստեղծի իր  
խսկ կարծիքն իր «Լևոնի վշտի» և դրա այդ քննադատների վե-  
րաբերմամբ: 1901 թվի մարտի 17-ին նա այդ մասին իր եղ-  
բորորդուն գրել է. «Թող այդ խնկրը մեղ էլ «Լևոնի վշտի» հետ  
միասին հայնոյեն. կզա ժամանակ, երբ անաչառ դատավորները,  
հայտնի բան է, չհետևելով Տիգրանների (Տիգրան Հովհաննիս-  
սյանը—Ն. Շ.)՝, կտան «Լևոնի վշտին» յուր տեղը հայ գրակա-

1 Տիգրան Հովհաննիսյանի հոդվածը գրված է եղել «Մուրճ»-ում  
Շահազիզի «Մի քանի խոսք իմ ընթերցողներին» գրվածքի մասին, Լ.  
Սարգսյանի և Ջ. Սպենդրյանցի խմբագիր եղած ժամանակ:

Այդ հանգամանքները պարզաբանելու համար, մենք անհրաժեշտ ենք  
համարում այստեղ մեջ բերել այդ առթիվ Լևոն Սարգսյանի Շահազիզին  
գրած նամակը, որ գտնված է նրա մահից հետո, նրա թղթերի մեջ.—

Նոյեմբերի 14, 1904 թ.

Հարգելի ուսուցիչ

Սմբատ Սիմեոնիչ:

Ինձ ցավ պատճառեց, երբ այս օրերս ինձ Հ. Սպենդրյանցը հայանեց,  
որ Դուք նեղացել եք «Մուրճ»-ում Տ. Հ. մատենախոսականից Չեր  
գրվածքի  
առիթով: Ես իբրև իրական խմբագրող ամառգրի, իսկապես մեղավոր եմ,  
որ հավատ ընձայնելով Տ. Հ., առանց կարգալու և շահելու նրա տունը, թույլ եմ  
տվել սպառել Ձեզ վշտացնող խոսքերը: Մակայն պետք է ի նկատի առնել  
այն սոսկալի ծանր բեռը, որ վիճակված է ինձ տանել մեն-մենակ իմ ուսերիս  
վրա ամենամաննպաստ պայմաններում: Կարծեմ մի քիչ ներքի կլինեք, որ ես  
որպես ինձ լավ ծանոթ և ոչ լավ գրողի հոգվածի նկատմամբ լինեի մի քիչ  
մատահացող: Երբեք ոչ մի առթիվ ոչ մի դժգոհության դեպք չունենալով իմ  
սիրելի ուսուցչից,—գնահատելով նրա ծառայությունը մայրենի գրականու-  
թյան և հասարակական լավագույն ձգտումներին, մի՞թե ևս ինձ թույլ կտայի  
այդպիսի տուն: Երբ ևս կարդացի այդ տողերը՝ նկատեցի Տ. Հ. որ այլ տոնով  
էի սպասում գրվածքը, ավստացի եղածի մասին, սակայն կարծում էի, որ  
Դուք ներողամիտ կլինեք և համենայն դեպս պետք է ներանալ ինձանից,  
սիրելի Սպենդրյանցը խո՛ւմ ըողորովին անմեղ է, նա հանձն է առել կոչումը  
«պատասխանատու խմբագիր» միայն նրա համար, որ միջոց տա շարունակել  
հրատարակությունը: Ուրեմն նախ՝ արդարացնելով... Հ. Սպենդրյանցին և  
սպա ըսցա՛տրելով Ձեզ մեղմացուցիչ հանգամանքները—խնդրում եմ կատա-  
րյալ մոռացության տալ անախորժ պատահուճքը և ընդունել իմ անկեղծ  
հարգանացն հավաստիքը:

Լեվ.ՈՆ ՍԱՐԳՍՅԱՆ

նության վերածնության մեջ: Այդ անաչառ դատավորները ոչ «Լեոնի վշտի» ճրագին կնախանձեն, եթե արդարև, մի այդպիսի ճրագ կա նրա մեջ, և ոչ կթաքցնեն այն հանգամանքը, որ նույն «Վիշաբ» ոչ թե ճրագ է եղել, այլ միայն մի հազիվ հազ առկայժող պատուել, որ իսկույն հանգել է և թանձր մուր է թողել նոր գրականության մեջ: Մի բան միայն ես չեմ հասկանում, թե ինչպես կարելի է «հին հագուստ» կոչել այն, որ դեռ ոչ ոք չհագած մաշվել է: Միթե մեղավոր է հագուստ կարող-ձևողը, եթե նրա տերը—հասարակությունը—կամ մեռած է և կամ թե երկարատև հիվանդության անկողնում ընկած: «Լեոնի վշտի» գաղափարները, վերաբերյալ հասարակաց կյանքի կազմակերպության, շորի պես հնանում են այն ժամանակ, երբ այդ հասարակաց կյանքը արդեն մշակագործել է ինքը յուր մեջ և այնուհետև կարոտ է ուրիշ գաղափարների բարձրագույն հառաջադիմության համար: Ինչ որ «Լեոնի վիշտը» պահանջել է հայերից, մինչև այսօր այնքան է իրագործվել, որ համարյա թե անկարելի է նկատել: «Լեոնի վշտի» առաջնորդող գաղափարն է մայրենի լեզվի զարգացումը հայերի մեջ, որի սկիզբը տիրապես զբվում է մայրերի միջոցով: Վաթսուն թվականներից մինչև ցայսօր շատ է առաջ գնացել հայ կինը: Կարծում ենք, շատ փոքր: Հայ կինը առաջ է գնացել միայն նրանով, որ ամբողջպես ծփում է մոզաների բաղձատեսակության մեջ: Այս տեսակ հարցերի մասին շատ երկար կլինեն խոսել: Իսկ մեր կրթիկոսները, որոնց համար խոսքի տնտեսություն չկա, անզադար շոայում են տողեր ու էջեր, միայն թե կարողանային «Լեոնի վշտի» նշանակությունը նսեմացնելու:

1902 թվի ապրիլի 14-ին նա, դարձյալ նույն առթիվ՝ գրել է իր եղբորորդուն. «Մի նաս Բերբերյանից ստացա երկու օրինակ «Էտյուդի», մինը փառակազմ: Այդ գործը «Վտակ»-ից է արտատրված, ասում եմ, յուր ընդհանուր գծերով բավական համակրելի ֆոնի վրա է քաշված: Հեղինակի հայացքը «Լեոնի վշտի» մասին մասամբ ուղիղ է և, որ գլխավորն է, հազար անգամ ավելի անկեղծ ու աղնիվ, քան թե այն «ընկերովի» փսխած քննադատությունը, որ իմ երախտագետ աշակերտն է թխել ու համեմել և որի անունը անարժան եմ դատում այստեղ հիշել: Իրավի, վարժապետի գործը քննել աշակերտներին յուր տեսակետից ոչ թե կարելի է, այլև անհրաժեշտ հարկավոր, եթե այնպիսին զրտուն է և ընդունակ, որովհետև այդ վարժապետի պարժանքն է. բայց

Քինվորվել յուր դաստիարակի դեմ և փրփրել, սեպհական է վարենի ընավորություններին և աններելի հանցանք, երբ այն հանգամանքը առաջ է գալիս մանր-մուկը հաշիվներից: Այս ի դասն մտածողության առիթը այս է, որ այս օրերս, այսինքն 12 ապրիլի «Новости дня», հայտնի շանտաժիստ լրագիրը, հրատարակեց մի հողված՝ նվիրված Վեսելովսկու «Армянский поэт С. Шах-Азиз» էտյուդին, թրծած նույնանման նյութից ու ուղղությամբ, ինչպես և վերը հիշած համբակի գործը: Հողվածագիրը այնպիսի մանրամասնությունների մեջ է մտնում, որ կարող էր հայ մարդը գրել կամ հայ մարդը դրդել օտարին յուր ապականությունը ծածկելու համար: Այդ տեսակ աղտեղարանությունը վաղուց ինձ ծանոթ է և ես միանգամայն հանդիստ եմ միայն վախում եմ, որ դու կամ դուք անհանգիստ լինեք, երբ հիշյալ հողվածից իմանաք, որ ես մեռած եմ. «Покойный поэт» ասված է, որ երեկ, 13 թվին, այսինքն մի օր հետո ուղղված է: «Он жив и здравствует». Եվ այս բոլորը գիտությամբ սարքած բաներ են. իբր թե գրողը օտար մարդ է, ինձ չի ճանաչում, իսկ հետո, համարյա նույն օրին, մի անտեսանելի ուղի նրան աղբի է ճշմարտությունը: Ուրախացիր, որ քո հորեղբայրը Քրիստոսից մի քանի ժամ առաջ է առել հարություն», և այլն:

53. Շահագիրը չի մաքառել եկեղեցու դեմ, այլ, ընդհակառակն, ընդունել է նրան և պաշտպանել: «Մի քանի խոսք իմ ընթերցողներին» իր վերջին արձակ գրվածքի մեջ, խոսելով հայերի՝ Նվրոպայի մեծ ազգերի մեջ դավանակից չունենալու և դրա հետևանքով հաճախ անպաշտպան և անօգնական մնալու մասին,

1 Շահագիրը, իհարկե, սխալվել է, որ ասել է, թե գոյութուն է ունեցել մի հատուկ դավադիր խմբակ, այլ եղել են առանձին անհատներ զուցե, մի երկուսը զբանցից Փանանյանի մոտ անձերից, որոնք քննադատել և վերադձանատել են մեր զբաղանքության հին արժեքները և նրա մասին հանգել բացասական եզրակացության: Ինչպես որ եղել են և այնպիսիները, որոնք, ընդհակառակը, հանդել են նրա մասին գրական եզրակացության, մեծ արժանիքներ գտնելով նրա երկերի մեջ, Մենք միայն, արդարադատ լինելու համար, պարտք ենք համարում այստեղ նկատել, որ քննադատներից մի քանիսը շափազանց խստորեն են վերաբերվել նրան, մոտենալով նրան, 60-ական թվականների մի բանաստեղծի, նոր զարգալիի հայացքներով և չափերով և իրենց արտահայտությունների մեջ գործ զննելով այնպիսի ձևեր ու ոճեր, որոնք համեմայն դեպ չէին կարող վերալորական չլինել, չենք խոսում արդեն «Новости дня» թերթի հողվածագրի վարժունքի մասին, որ դուրս է եղել պարզ քաղաքավարության սանձաններից և չէր կարող հանդուրժել լինել մի օրակից բարեկիրթ հասարակության մեջ:

որ չէր կարող ազդած չլինել նրանց քաղաքական կացութեան վրա, այդ առթիվ նա ասում է. «Հայերը զրա պատճառով, սակայն, չպետք է թողնեն իրենց եկեղեցին, որ մի աննիքիլի հանցանք կլինի, որովհետև ժամանակն անցել է և այժմ հայ եկեղեցին դարձել է ազգային և այդ պատճառով էլ նա ներկայումս ազգի գոյութեան պաշտպանութեան գործը գործունեորէ մեկն է: Ազգը չպետք է խաբւի ու հավատա սուտ քրիստոնյաներին, թե իրենց կրօնը բոլորից էլ գերազանց է, հայը թող չխաբւի այդ ծերերի առասպելներից և հավատարիմ մնա յուր եկեղեցուն և ոչ մի երանութեան հետ էլ չփոխի զրան հենց այն պատճառով, որ այդ եկեղեցին խոսում է հարազատ լեզվով և ուրիշների խոստացած երանութեանը ինքն էլ կարող է տալ»:

Իսկ հայ հոգևորականութեան վերաբերմամբ Շահազիզը համոզմունքով ավելի հետև է գնացել իր ժամանակակիցներից, այն ժամանակ, երբ ժամանակակիցներն, ընդունելով հոգևորականութեանը, պայքարել են նրա դեմ, պահանջելով, որ հոգևորականները անհրաժեշտորեն և անպայման ընտրված և ձեռնադրված լինեն կրթված անձերի շարքից, Շահազիզը, ընդհակառակը, ոչ միայն հայ հոգևորականութեանը, այլև ընդհանրապես բոլոր դավանութեանների հոգևորականութեանն իր այժմյան ավանդական վիճակով՝ սկզբունքով չի ընդունել, օգտակար չհամարելով նրան մի որևիցե մարդկային ընկերութեան: Այս մասին նա իր եղբորորդուն 1884 թվի հունիսի 8-ին գրած նամակում ասում է. «Քրտարապայտած մտքերին Ռաֆֆու վերաբերութեամբ ես համաձայն չեմ. հոգևորական դասը յուր այժմյան ավանդական վիճակերում երբևք օգտակար չէ կարող լինել որևիցե մարդկային ընկերութեան. ոչ թե մեր հայրոջանքն է պակասեցնում այդ դասի վարկը կամ պատիվը ժողովրդի աչքում, այլ նույն իսկ հոգևորականի վատթարումը ու անվանարկութեանը գտանվում է յուր մեջ, յուր անբնական կազմակերպութեան մեջ, յուր խարդախ, խարբա և փառիսական վարմունքի մեջ: Աշխարհին, ժամանակին այն անկատելի մարդկային հառաջխաղացութեանը անկարելի է դրժել, ժամանակն է կուլ տալի յուր անարժան գավառներին, մի օր ևս եղիպտական քրմերը, հնդկական բրահմանները մտածել են, որ յուրյանց տիրապետած կարգերից ուրիշ լավ կարգ չի եղել, բայց ի՞նչ է եկել նրանց գլխին, — է՛ ինձ, և քեզ քաջ ծանոթ է. անառակ և ավազակ մարդին կամ բեզին որքան և գովում է ստրկացած հպատակը, այնքան ևս ասում է

սրտով, համարում է անառակ և ավազակ: Բայց որոնց տված է ինչք և բանականութուն, չէ կարող լուռ մնալ և թույլ տալ, որ անզգամը միշտ մնա անզգամ, որովհետև ստրուկները հնազանդ են: Գովարանել կամ լուռ մնալ հոգևոր դասի անառակ և կաշառակեր ընթացքի մասին, ասել է և հորդորել, որ նա հանապաղ սաստկացնե յուր անառակութեանը, իսկ այս ասել է և բնավ քայքայել, ցրվել և սպանել և՛ ժողովուրդը, և՛ նրա բարոյականութունը: Հայոց ազգի մեջ եղած բոլոր կրոնափոխական ձգտողութեաններն եղել են նորա ընդհանուր անշարժութեան և լուռութեան ժամանակը: Երբ տպադրական խոսքը հանգես դուրս եկավ և փոքր ի շատե մտացավ ժողովրդին, ձայնակից ելավ նորա ներքին կրոնական դարգերին, և ժողովուրդը գաղաթից կրոնափոխ լինել և որոշել կրոնը և հոգևորականը:

Վաֆֆին Տեր-Թողիկներին կամ ողորմելի Լալային էջմիածնի միաբաններից պղծվելը նկարելով, ահազին գործ է կատարել մեր աչքում, զգաստացնելով զորանց և հրապարակ հանելով զորանց գործը. Ռաֆֆու գրութեանները պակասութեաններ ունեն, բայց ամեն բան յուր սկզբում պակասավոր է, սակայն անուրանալի է այն ֆակաթը, որ նա առաջինն է եղել իսկ ումանիստ. նա ունի գեղեցիկ տիպարներ, Մլինի նման հայկական հերոսներ և այլն, և հենց սորանց համար արժանի է տոնախմբութեան»:

Նույն հոգևորականութեան, կրոնի և եկեղեցու մասին նա իր 1901 թվի դեկ. 27-ի նամակում դարձյալ գրում է իր եղբորորդուն. «Քեզ հետ միանգամայն համաձայն եմ, որ կրոնի անուշով անկարելի է միացնել մի ազգի նույնիսկ կրոնով բաժանված մասերը. այդ ցանկալի միութեանը պետք է լինի լեզվի ու գրականութեան միջոցով: Իրավի, հենց որ կրոնը մեջ է մտնում միացնելու նպատակով, մենք տեսնում ենք համաշխարհային պատմութեանից, փոխանակ միութեան, առաջ են գալիս արյունահեղ երկպառակութեաններ, անվերջ ու անօղուտ վեճեր, որ հակառակ կողմերը տանում են հասցնում խորխորատի փին, երկուսին ևս աղետ և թշվառութեան պատճառելով: Գժբախտաբար կրոնը, ինչպես մի անհաստատ զրութեան, որոշ սահման չունենալով, անհուն շառավիղներ է արձակում և խորթափանցում սոցիալական կյանքի խորշերի մեջ, այնպես որ հարկավոր է մեծ կուլտուրական աշխատութեան, որ ազգը կամ առանձին անհատը կարողանան ընդդիմադրել կրոնի անարգել տիրապետութեան: Այս բանին օտարազգի հրապարակախոսները

քաջ վերահասու լինելով, ճիշդ են թափում պետութունների ծրագրից հանել եկեղեցին և աշխարհական գործերից հեռացնել հոգևորականների իրավասութունը, բայց նույն պետութունները մասամբ հետևելով տրադիցիային և առավել իրենց առանձին շահերը նկատելով, գերադասում են հետագեմ տարրերը առաջադիմականից», և այլն:

Այսպիսի սկզբունքային կարծիք ունենալով ընդհանրապես հոգևորականութան մասին, նա ստիպված է եղել, սակայն, ընդունել մյուսների նման հայ հոգևորականութունը, որոհեաև նրա ձեռքին կենտրոնացած է եղել որոշ իշխանութուն կամ իշխանական ազդեցութուն:

Այդ մասին էլ նա 1894 թվի մարտի 20-ին գրել է. «Եվրոպաբար չափել ու կշռել մեր մտավոր վաստակների արժեքը՝ շատ դժվար է. միտ գնելով մեր ազգի դրության, մենք ստիպված ենք լինում շատ բան ընդունել, ինչ որ Եվրոպայի մեջ հերքում ենք: Եկեղեցին եկեղեցականներով, որ եվրոպական գիտութունների մեջ շատ սակավ տեղ է բռնում, մենք հարկադրված ենք անդադար հիշել գորանց, իմանալ հավատարմական գանգվածները հատուկ նրա համար միայն, որ դա կամ դոքա ունին ազգի մեջ իշխանական ազդեցութուն. հայ գիտականները պետք է լինեն և եկեղեցու գիտականներ»:

Շահագիշտ միշտ հրաժարվել է կաթողիկոսների ընտրության պատգամավորութունից, որովհետև, ցարական կառավարութունը խառնվելով այդ ընտրութուններին, ազատ ընտրութուն չի կատարվել: Մակար կաթողիկոսի ընտրության ժամանակ, օրինակ, Մոսկվայի գաղութը շատ է առաջարկել և խնդրել նրան, որ նա չհրաժարվի ընտրութունից, բայց նա կտրակա նորեն հրաժարվել է և այդ մասին գրել է իր եղբորորդուն. «Կաթողիկոսական պատգամավորութունից կհրաժարվեմ. ուրիշի ձեռքին խաղալիք դառնալ և փակ աչքերով ճանապարհ գնալ և յուր ցանկացածին չհասնել—չկամիմ. բայց թե պատահեք ինձ ընտրել կաթողիկոսացուն—թե ըստ ամենայնի արժանավորը չգտնեի, ապա կնախադասեի հաստատաժիտ և կոշտաբարո Գևորգյաններին գյուրաթեք նար-բեխերից: Եթե հայրապետական գահի վերաբաղմուն Մահալներ, Ներսեսներ—ժափ կտայի և կողջունեի, բայց եթե սոցա փոխարեն նստեին նորաձև մարդիկ, որպես Գրիգոր Անավարդեցին կամ Կոստանդին Պրոնագործը և կամ Եզր օրթոդոքս—բացեիրաց կհերքեի»:

Եվ երբ ընտրվում է երկրորդ թեկնածու Մակարը, և ցարն առաջին անգամ հաստատում է կաթողիկոս այդ երկրորդ թեկնածուին, իբրև հոգևորականության ձայների մեծամասնութունը շահածի, նա գրում է իր եղբորորդուն. «Էջմիածնա արեղյանը և արեղյապաշտպան մեծավորները հայկական ազգի ուրախության համար վերջապես գտան մի արժանավոր աստղ, մի օրհնյալ ծերության հասած մարդ Լուսավորչու աթոռի համար և նստացրին անմոռանալի Մակարին. խորին շնորհակալութուն ազգի սրբութունը պաշտող եպիսկոպոսներին, որ ըստ արժանվույն կշռեցին ազգի բարիքը և բարյոք չափեցին եկեղեցական շահերի համար»:

«Են դորանց ուղարկեցի հանպատրաստից իմ ուղերձը. մի քառյակ ոտանավոր, գրված մեր մայրերի իրենց աչքի լույս մանուկներին նրանց քնից զարթնելու ժամանակ ասածի կամ երգածի մոտիվով»: Մենք քաշվում ենք այստեղ բերել այդ ոտանավորը, նրա մեջ կիրարկված ոչ սպազբեկիք արտահայտութունների հետևանքով, նամանավանդ որ նա խնդրել է այդ քառյակը զաղտնի պահել»:

Շահագիշտ իր տեսած կաթողիկոսներից հավանել է հատկապես Հայրեկին՝ Սրբիմյան Մկրտիչ կաթողիկոսին՝ նրա ազատ հայացքների, քարոզչական ընդունակության, Վարագի գործունեության և եկեղեցական կալվածքները խլելու ժամանակները ցուցաբերած խիզախության համար, բայց նա զնասակար է համարել նրա վարվեցողության պարզության չափազանցութունը. նա սխալ է համարել և նրա գնալը Պետերբուրգ ցարի հետ երես առ երես մի քանի կնճոռոտ ազգային-եկեղեցական խնդիրներ լուծելու համար, որոնց մասին նա չի կարողացել լեզու գտնել Կովկասի բարձր իշխանության հետ, որովհետև ցարի արքունիքում չէ, որ այդ ժամանակները լուծվել են այդպիսի կնճոռոտ խնդիրները, այլ Պոբեդանոսյանների, որոնք ճանաչել են միայն ուսուցչական կոպիտ ուժ և բռնութուն: Այդ մասին նա (1905 թ.) մայիսի 7-ին գրել է իր եղբորորդուն. «Մեր տեր Պապը այդտեղ է և երկար օրերով ապրում է ձեր քաղաքում, որ պետք է համարել կամավոր կամ ուկամա բանտարկութուն... իմ-կարծիքով, Հայոց հայրապետին, այդքան երկար նստել նախիջևանում, միանգամայն անհարմար է և անտեղի, ասում եմ քեզ, և աննպատակ, որ դուցե պատիվ է բերում նրան որպես հասարակ մարդու, բայց հայրապետական աթոռին պատճառում է մի կրավորական և չեզոք գիրք, իսկ յուր

չըջապատող գոռոզ մեծամեծներին—չարախնդություն և քամահրանք: Թորամիտ և սրամիտ հայերը Պետերբուրգում գորան տարան-բերան մինչև այսօր, բայց ի՞նչ շահեցան—չգիտեմ: Մի՞թե միտ դնելով այժմյան պետական սեփմին, կարելի է մի բան հուսալ Պետերբուրգից. ինչ տեղ կա Պորեղանոսցե և զբա նման արբանյակներ—ի՞նչ կարող է անել մի Հայոց հայրապետ, որ կամենում է միայն խաչով և ավետարանով հաղթել պոլիտիկային, որ խաչ ու ավետարան երբեք չի ունեցել: Ուղիղն ասեմ, ինձ մեծ ցավ է պատճառում այդ հանգամանքը և սաստիկ դիպչում է մեր ազգային անձնասիրութեանն:

54. Շահազիզն ընդհանրապես, ինչպես արդեն ասել ենք, ապրել է ազատ, անկախ և իր ուզածի պես, և զբա նպաստել է նրա ունեցած նյութական կարողութեանը: Արդ՝ սրտեզից էր նրա այդ կարողութեանը, չէ՞ որ նա եթե ոչ չքավոր, դո՛նե, շատ չափավոր կարողութեան տեր ծնողների զավակ է եղել, ուսել է Լազարյան շեմարանում իբրև ձրիավարժ գիշերօթիկ սան և ուսումն ավարտելուց հետո ապրել է միայն իր ուժով: Ստացած սոճիկն էլ այնքան քիչ է եղել, որ շատ դժվարութեամբ է կարողացել վճարել իր երաշխավորութեամբ Մանուկ Սաղաթյանի համար վերցրած պարտքը, որ վերջինիս մահից հետո նա ստիպված է եղել մաս-մաս վճարել իբրև երաշխավոր:

Մենք նրա կարողութեան մասին իբեն՝ բանաստեղծի բերանից ոչինչ չենք լսել. այդ մասին ոչ մի գրավոր տեղեկութեան չկա նաև նրա մահից հետո ֆնացած թղթերի մեջ: Մենք միայն հարևանցիորեն իմացել ենք նրա բժիշկ Մկրտիչ Թանգյանից, թե հաջող ժամանակները Շահազիզն ունեցել է 300,000 ռուբլի մի կարողութեան, որ հատկապես շահած է եղել ժամհարյան եղբայրների ձեռքով բորսայում զանազան արժեթղթեր ծախել-գնելու գործողութեան միջոցով:

Նա մինչև 1873 թիվը իր բնակարանում պահելիս է եղել ունևոր անհասաների զավակներից 6—7 հոգի, որոնց պատրաստել է Լազարյան շեմարանի համար և յուրաքանչյուրից ստացել 600 ռուբլի՝ ժամանակի համար մի խոշոր գումար: Արդ, նկատելով, որ ինքը չափավոր կյանք է վարել և ժամանակի կյանքն էլ մայրաքաղաքում շատ էժան է եղել, նկատելով և այն, որ նա բնակարանի վարձ չի վճարել և իր պահած աշակերտների համար ուտելիք ստացել է շեմարանի խոհանոցից շատ չափավոր արժեքով, կարելի է ասել, որ նա տարեցտարի շահած գումարով կարո-

ղացել է գնել Մոսկվայի վաճառականական դրամատան մի փայ, որի արժեքը հետզհետե բարձրացել հասել է 12 հազար ռուբլու: Ահա այդ գումարն է կազմել նրա կարողութեան հիմքը և գործին հմուտ ժամհարյանների ձեռքով խաղարկվել բորսայում:

Իրա հետևանքով նա հետզհետե շատ մոտեցել է ժամհարյան եղբայրներին և մտերմական հարաբերութեան ստեղծել նրանց ընտանիքների հետ, որոնցից ամենամոտ, կարելի է ասել մտերմական-ընկերական հարաբերութեան նա ունեցել է Իսահակ ժամհարյանի հետ: Նրա թղթերի մեջ գտնվել է մի կատակ-ոտանավոր, որ բանաստեղծի կողմից ուղղված է եղել իր այդ բարեկամին և որը, ըստ ամենայնի, բնորոշում է նրանց հարաբերութեանը.

Սիրում էի,  
Տանջվում էի,  
Բայց նա ինձ մոռացավ.  
Կանչում էի,  
Երգվում էի,  
Բայց շուտ հեռացավ:  
Ավանդ, նա գնաց,  
Բիթս կախ ֆնաց,  
Եղբայր, լավ խուրման  
Խոզերն են ուտում,  
Այն, որ հուսահատ  
Սահակն ու Սմբատ  
Իզուր պըտըրտում:

Այս կատակ-ոտանավորը նա գրել է իր մի նամակի վերջում և ուղարկել իր այդ բարեկամին, որը զանգատվելիս է եղել նրան իր առօրյա հոգսերի մասին. նա միջ բերելով հայ աշուղներից մեկի այդ մասին ասածը—«Ա՛յ աշխարհ, յարաք քեզնից շնորհակալ մարդ կլինի»,—չեմ կարծում, որովհետև ամեն մարդում զարդ կլինի», պատասխանել է, թե զբանք մանր-մուկն հոգսեր են, որոնք հատուկ են ամեն մարդու, իսկ ինքը, բացի այդ բոլորից, ունի և մի շատ ծանր հոգս, որ նա չունի, հոգս, որ օրնիբուն մաշում, տանջում է իբեն—այդ ազգի հոգսն է, նրա վիշտը, նրա տառապանքը, որ ինքը հարատև կրում է իր սրտում: Եվ իրոք նա իր «սիրո կորստին» հաղթահարելուց հետո, իր ամբողջ սերը նվիրած է եղել ազգին, նրա վիշտն ու տառապանքը համարելով

իրենը: Այդ վիշտն է, որ նա քաղցրահնչյուն երգել է իր «Լեռնի վիշտը» պոեմում, բոլոր Լեռնների և Նալբանդյանների վիշտը, իր «Ազգային վիճակը» երկում՝ Նալբանդյանի հոգով ու ջնջով, իր արձակ գրվածքներում՝ ժամանակի գրաքննչության պայմանների կարելիության սահմաններում, ժողովրդին նրա փրկության ուղիները ցույց տալու նպատակով ու ցանկությամբ, իսկ ինչ որ չի կարողացել, նույն պայմանների հետևանքով գրել և ցույց տալ, գրել է իր եղբորորդուն ուղղված բազմաթիվ նամակների մեջ, հուսալով, որ դրանք անկորույս պահպանվելով, ապագայում կդառնան հասարակության սեփականություն:

55. Հայ ժողովրդի փրկության ուղին գտնելու համար իր կատարած բազմաթիվ որոնումներից հետո, նա, վերջապես, թյուրքիայի հայոց մեջ, մեծ պետությունների ներկայացուցիչներին աչքի առաջ, կատարված նողկալի զեպքերի ազդեցության տակ խելամուտ է եղել, որ հայն ու հայ երկիրը կարող են ազատագրվել ոչ «մեղապարտ» Եվրոպայի ձեռքով, այլ միայն և միայն իրենց հարազատ զավակների նահատակության սուրբ արյունով, որն այնքան զորութուն ունի իր մեջ, որ կարող է «ամուր բանտեր, քարե պարսպով... սաստկությամբ թավալել գետին և վանդակից հանել անճար թշվառին»:

Ահա այդ մտորումներով նա գրել է և իր վերջին 86 տողանի «Ձոհեր» խորագրով բանաստեղծությունը՝ նոր սերնդին թողած նրա վերջին խոսքն ու կտակը, որից և մենք մեջ բերելով մի երկու հատված, փակում ենք այստեղ նրա կենսադրությունը, նրա կյանքի էական գծերի մասին մեր ասելիքն ավարտած համարելով:

Ահա լուսածին և մանուկն եկավ  
Սուրբ ազատության տաճարին ընծա.  
Մանուկ Հայաստան տեղից շարժվեցավ,  
Դիմեց համարձակ զեպի Գողգոթա:  
Հենց նահատակի սուրբ ոսկորներից  
Նոր լույս է ծագում աշխարհիս վերա.  
Հենց Գողգոթայի լեռան կատարից  
Կանգնեց նոր Աստված, և անմեղ արյուն  
Դեպի կյանք մարդիկ կանչելով մահից,  
Տարավ վարդազույն նոր պսակ փշյա,  
Այսքան հաղթող է արյան զորութուն:

Հյուսթ աստվածեղն, հեղուկ լուսեղն,  
Եվ ծիրանածին դրոշ փրկության,  
Քո ամեն մի շիթ, ամեն մի հյուլին,  
Նոր դար է կազմում ստրուկ մարդկության.  
Եվ ամուր բանտեր, քարե պարսպով,  
Գիտես սաստկությամբ թավալել գետին,  
Լեռներ և դաշտեր ողողել ծովով,  
Վանդակից հանել անճար թշվառին:  
Ահա նորածին և մանուկն եկավ  
Սուրբ ազատության տաճարին ընծա.  
Մանուկ Հայաստան տեղից շարժվեցավ,  
Դիմեց համարձակ զեպի Գողգոթա:  
Փայլեց արևելք նոր արշալույսով,  
Անհետ չքացավ և ժանդ հնության,  
Նորոգման ոգին կյանք ավետելով,  
Արյունից կըռեց պսակ հաղթական.  
Նահատակները փովեցին գետին,  
Գետինը կակղեց նոր սերմի համար,  
Նոր զորձը մնաց մեր նոր սերնդին.  
Եվ այսուհետև առաջ անդադար:

ԱՌԱՋԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ

Քանաստեղծ Սմբատ Շահազիզ-Կամսարականի տեխնագրությունն  
ուղիղ գծով

(Հստ Շահազիզյանց տան հիշողության)

Տ ո հ մ ա պ ե տ ն ե Ր

Տեր-Պետրոս և Մնացական  
երկու եղբայր Կամսարականներ

Տեր-Պետրոս Կամսարական

Հովհաննես և Թորոս

Գրիգոր և Ահարոն

Հովակիմ և Հովհաննես

Գրիգոր-աղա, Տեր-Սիմեոն և Մեսրոպե հիմնապետ

Հովակիմ-աղա, Եփրեմ, Կամսար, Սահակ, Սարգիսիկ  
և բանաստեղծ Սմբատ Շահազիզ-Կամսարականը, որ  
իր եղբայրների մեջ կրասերն է եղել, ծնված Աշտա-  
րակում 1841 թվի սեպտ. 5-ին և վախճանած Մոսկ-  
վայում 1907 թվի դեկտ. 24-ին:

Բանաստեղծի բուն տոհմանունը կամ ազգանունը եղել է «Կամսարական», իսկ «Շահազիզ» — մականունը, որով տոհմը հայտնի է դարձել Աշտարակում: Աշտարակի Կամսարականները շիրակեցի են եղել. նրանց նախնին, Շահազիզյանց տան ավանդությամբ, եղել է Ներսես իշխան Կամսարականը, որ Անիի ավերվելուց հետո դուրս է եկել մայրաքաղաքից և իր մեծ գերդաստանով վերաբնակվել նախ Մարմաշենում և հետո էլ տեղից տեղ փոխադրվելով և երկար տարիներ այդ տեղերում ապրելուց հետո, վերջապես հասել է Աշտարակ և այդտեղ ընդ-միշտ բնակվել հանգստացել: Նրանք մանավանդ երկար ապրել են Սեանի Գոմաձորում, Եղվարդում և Աշտարակի մոտ ՎՍ. Սարգիս ուխտատեղի սարավանդի վրա, որ գտնվում է գյուղի հին կամրջի գլխին, գյուղը մտնելու ճանապարհի վրա: Իրենց մշտական բնակության համար նրանք որոնել են հացա-ռատ դաշտեր և բնակության համար՝ ամուր տեղ, և Աշտարակը բավարարել է նրանց այդ պահանջները, բայց գյուղացիք առաջին նվազ վախենալով, որ նորեկները հզոր մարդիկ լինելով, կարող են գյուղում մեծ կալվածների տիրանալ և իշխել իրենց վրա, գյուղովի դուրս են եկել նրանց դեմ և արգելել գյուղ մտնելու: Հետագայում, տարիներ անցնելուց հետո, երբ տոհմն արդեն ունեցել է իր մեջ երկու իշխանավոր մարդ, մեծություն ստացած երկրի իշխողներից՝ Ջհան-Շահից և Երեանի կառավարիչ Յաղուբ-Պանից — Մնացականի որդի Մարգարը, որ շահին հավատարմությամբ ծառայելու համար կոչվել է «Շահ-Ազիզ», այսինքն «շահի սիրելի», և Տեր-Պետրոսի որդի Թորոսը, որ խանին հավատարմությամբ ծառայելու համար կոչվել է «Պանդուլի», — նրանք վերստին գրոհել են ու մտել գյուղ, և գյուղացիք չեն կարողացել դիմադրել: Շահազիզ-Կամսարականի տոհմից գյուղում հետագայում նշանավոր են հանդիսացել երկու տուն — Հովակիմենց տունը, որ բանաստեղծ Սմբատ Շահազիզ-Կամսարականի տունն է, և Մնացականենց տունը, որ Ներսես 5-րդ կաթողիկոս Աշտարակեցու տունն է:

Շահազիզյանց Մնացականի տան կամ տոհմի վավերականները, որոնք տրված են Ներսես Աշտարակեցու եղբայր Կարապետ-աղայի անունով, ներկայումս գտնվում են ՀՍՍՌ Գրական թանգարանում — Ֆաթ-Ալի-Շահի ոսկենկար զարդարուն ֆերմանը, Աբրահամ-Միրզայի բարձրագույն հրամանը, Հյուսիս-խան Սարգարի «Թալան» և Դանիել կաթողիկոսի վկայագրեր-կոնդակը, որոն-

ցից երևում է, որ Շահազիզյան տոհմը վայելել է «Թարխանության» արտոնություն և նրանց Կամսարական տոհմից սերված լինելը: Այդ կոնդակի մեջ պատմված ավանդությունը հաստատելու նպատակով իրենց ստորագրությունն են դրել նրա տակ այնպիսի ականավոր մարդիկ, ինչպիսին եղել են ժամանակին Արշարունյաց գավառի իշխող Մելիք Մինաս Հակոբյան Կամսարական-Սաղաթրեկյանը, Միրզա Թադևոս Մելիք-Մինասի Սաղաթրեկյան-Կամսարականը և երևանցի Գաբրիել և Հովհաննես Գեղամյանները:

ԵՐԿՐՈՐԿ ԸԱՎԵԼՎԱԾ

ՄԱՏՆՈՂՈՒԹՅԱՆ ԹՈՒՂԹ 1

Մատուցված 1865 թվին ցարական ներքին գործոց նախարար վարուհին «Լևոնի վշտի» և դրա հեղինակ Սմբատ Շահազիզի մասին

Գաղանի

Այս օրերս լույս տեսավ Մոսկվայում հայերեն լեզվով մի գրքույկ, որի վրա ուզում եմ հրավիրել Ձերդ բարձր գերազանցություն ուշադրությունը: Այդ գրքույկի խորագիրն է «Լևոնի վիշտը» — ժամանակակից վեպը, շարադրություն Ս. Շահազիզի, տպարան Լազարյան շեմարանի (Մամոնտովի):

Այս գրքույկի մասին գովասանական կարծիք հայտնեց Ս. Նազարյանցը իր «Հյուսիսսփայլ» ամսագրի մեջ, № 12: Հայ ժամանակակից մամուլի գաղանիքներին ծանոթ մարդուն հայտնի է, թե ինչ խորհուրդ ունի «Հյուսիսսփայլի» գովասանական կարծիքը. այդ ամսագրի հետևորդները քաղաքական հանցավոր, Պետրոպոլիսի բերգում նստած Նալբանդովի հետևորդներն են: «Լևոնի վիշտը» գրքույկը կամ, ըստ այլոց, միևնույնն է, թե ասված լինե՞ր «Նալբանդովի վիշտը», պարունակում է իր մեջ շատ բան, որ չպետք է թույլատրված լինե՞ր գրաքննչության կողմից: Նա պարունակում է իր մեջ—1) հակակառավարչական արտահայտություններ, արտահայտություններ, որոնց մեջ օրինակ բերված լինելով խախտողները, Գաբրիելի և լեհացիները, խորհուրդ է տրվում հայերին ջանք գործ դնել ձեռք

<sup>1</sup> Այս փաստաթղթերն առաջին անգամ տպագրվել են Մ. Նալբանդյանի «Անտիպ երկեր»-ում, Մոսկվա, 1935:

բերելու լիակատար ազատություն ստրկությունից, քանի որ առանց այդպիսի ազատության, հեղինակի ասելով, հայերը չպիտի կարողանան հուսալ բարվոքելու իրենց վիճակը: 2) պարունակում է իր մեջ արտահայտություններ կրոնի ու եկեղեցու դավանության դեմ, արտահայտություններ, որոնց մեջ այսպանվում են եկեղեցու ծեսերը, եպիսկոպոսները, քահանաները և մյուսները, և, վերջապես, Հիսուս-Քրիստոսը ներկայացվում է Ռենանի ուսմունքի համաձայն, և 3) պարունակում է իր մեջ հարձակումներ Ռուսաստանին անձնվիր և Նալբանդովի կուսակցության չպատկանող անձանց վրա: Այս պատճառով և պետք էր—1) արգելքի տակ դնել հիշյալ գիրքը, իբրև վնասակար, [գրված] գաղտնի նպատակներով: 2) մի լավ հանդիմանություն կարդալ գրաքննչին, որ թույլ է տվել սույն գիրքը տպագրելու, և 3) հսկողության տակ առնել և պահել գրքի հեղինակին: Սույն զեկույցի ճշգրտության վերահասու լինելու համար, «Լևոնի վիշտը» գրքից մի օրինակ ուղարկեցեք Այվազովսկի վարդապետին և պահանջեցեք նրա կարծիքը գրքի մասին: Ուրիշ անձերից, նամանավանդ պետերբուրգցի հայերից, որոնք պատկանում են Նալբանդովի կուսակցության, գուք չեք կարող ճշմարտություն իմանալ սույն գրքի մասին:

Անձնվիրը գահին և հայրենիքին

Թե ինչ հետևանք է ունեցել այս թուղթը, մենք չենք կարող ստույգն ասել, բայց կարծում ենք, որ դա, ինչպես երևում է, թողնված է եղել առանց հետևանքի, որովհետև եթե դա մի օրե է հետևանք ունեցած լինե՞ր, պետք է որ առաջին հերթին արգելված լինե՞ր «Լևոնի վիշտը», որ սակայն չի եղել:

Ո՞վ է եղել կամ, լավ է ասել, ո՞վ կարող էր լինել այդ մատնության հեղինակը: Մեզ թվում է, որ դա «Մասյաց աղափու» օջախի մարդ պիտի լինե՞ր, և մենք կարծում ենք, որ «անձնվիրը գահին և հայրենիքին» ստորագրության տակ իր անձը թաքցրած քսուհի հատկապես եղել է հայտնի Հովսեփ Ձերքեզյանը, որ Այվազովսկու «Մասյաց աղափու» էջերում կատարի պայքար է մղել «Հյուսիսսփայլի» և հյուսիսսփայլականների դեմ, և այդ ամսագիրը փակել տալու համար ներելի և անհերքելի միջոցների միջև խտրություն չի դրել: Հենց միայն նրանով, որ նա առաջարկել է նախարարին իր թուղթը ստուգման համար ուղարկել Այվազովսկուն, մասնել է իրեն, որովհետև «նորերի և հների» մեջ ժամանակին մղված պայքարին,

նրա ընթացքին, հոգուն և ուղղութեան քաջ ծանոթ անձերին լավ հայտնի է Չերքեղյանի և Այվազովսկու գործակցութունը այդպիսի մատնողական գործողութունների մեջ: Այվազովսկին, իհարկե, չպիտի կարողանար հանդուրժել այն դառն ու նշավակող քառյակներին, որ նրա մասին գրել էր իր «Լևոնի վշտում» Շահազիզը: Չերքեղյանն ավելիքով կատարել էր նրա ցանկութունը: նա իր թղթի մեջ գրել էր այն, ինչ որ կար «Լևոնի վշտում» և այն, ինչ որ չկար, ինչպես, օրինակ, արտահայտութուններ եկեղեցու դավանութեան դեմ և Ռենանի ուսմունքի համաձայն մի որևէ բան Քրիստոսի մասին:

### Կարապետ Եղյանի եզրակացութեան սևագրութիւնը

Շահազիզովի «Լևոնի վիշտը» (հայոց թագավոր) ժամանակակից վկայ է, որ դրվատվել է «Հյուսիսսփայլ» ամսագրի № 12-ում: Այդ ամսագրի հրատարակող Նազարյանցը պայքարում էր կաթողիկոսի դեմ: Շահազիզովը վերակացու է Լազարյան ձեմարանում, Նազարյանցը, որ դոկտոր է արևելյան գրականութեան, պետական խորհրդական, պրոֆեսոր պարսից գրականութեան, գիտնական մարդ է, բայց Իվան Դավիդիչ Դեյլանովի կարծիքով, մի մեծ խելքի տեր չէ: Նա ցանկացող է հայ հոգևորականութեան և ընդհանրապես հայ կյանքի բարվոքման, սակայն, իհարկե, չի երազում հայերի անկախութեան մասին, նա խոսակցութեան մեջ Նալբանդովին խելագար էր կոչում, թեև նրա մտերիմ բարեկամն էր:

Ուսումնական մասի գլխավոր տեսուչ Նեերովը գրում է թիֆլիզից, թե այնտեղ գոյութուն ունի մի կուսակցութուն մանուկ Հայաստանի և Վրաստանի, որ երազում է սեպարատիզմի և Հայաստանի անկախութեան մասին:

Եվ իրոք, հայերը բաժանվել են երկու կուսակցութեան. պաշտոնաթող պատվո խորհրդական Բուդաղովը և մյուս ուլտրա-ազատամիտները չեն ցանկանում մոտենալ ուսմունքին, խմբվել են Նալբանդովի շուրջը: Մյուս կուսակցութունը հայ ազգութունը համարում է մի նեխյալ դիակ, որ արդեն կենսազուրկ լինելով, պետք է կատարելապես ձուլվի այն տարրերի հետ, որոնց մեջ գտնվում են նրա մեռնող մասերը:

Վերոհիշյալ գրքի մեջ, ճիշտ է, որ կան կառավարութեան դեմ ուղղված թշնամական տեղեր, ակնարկներ այն մասին, որ

ժողովուրդը չպետք է կուրորեն հնազանդվի ցարական կառավարութեան, շատ է խոսվում և Գարիբալդիի մասին և այլն<sup>1</sup>

### ԵՐՐՈՐԳ ՀԱՎԵԼՎԱԾ

Սմբատ Շահազիզը, ինչպես հայտնի է, իր «Լևոնի վիշտը» և դրա հետ միասին տպագրված մանր բանաստեղծութունները գրելուց հետո, այլևս նոր բանաստեղծութուններ չի գրել և միայն իր 30-ամյա հորեղյանի նախօրյակին գրել է մի քանի նոր բանաստեղծութուններ, սրոնք մտել են 1893 թվին տպագրված «Հորեղյանի տարեգարձը» գրքույկի մեջ: Այդ մասին նա 1893 թվի հունիսի 12-ին գրել է իր եղբորորդուն. «Իմ նոր քնարի մասին ավելորդ է խոսել, որովհետև դա մի ժամանակավոր բնական էր, որ հարատե չէ կարող լինել... Եվ եթե ցանկալի է քեզ խմանալ, ահա սոքա են նոր քնարիս արդյունքը.—

1. «Հանգած քնար».

2. «Տեր-Հակոբյանցի քսանհինգամյա հարսանյաց տարեգարձին».

3. «Ուղերձ նույն տարեգարձին՝ երեսաներին».

4. «Անգին գոհար»՝ Կոտից.

5. «Պանդուխտ հոգի».

6. «Բանաստեղծի դամբանին».


7. «Զոհեր» (86 տող).

Ցանկիս մեջ մտած և «Հորեղյանի տարեգարձի» մեջ տպագրված այդ նոր ոտանավորներից նա հատկապես սիրել ու գնահատել է վերջին՝ «Զոհեր» խորագրով ոտանավորը: Այդ մասին նա հիշված նամակում գրել է. «Իմ մեծ ոտանավորը՝ «Զոհեր», այս վերջին օրերը արգելեց ցնդուբան, և այդպես զրկեց իմ գրքույկը յուր զարդից»: Բանաստեղծի այս խոսքերը կարոտ են լրացման, որովհետև մենք համեմատելով այդ ոտանավորը «Տարեգարձի» մեջ տպագրված նույն խորագրով, 24 տողից բաղկացած ոտանավորի հետ, տեսնում ենք, որ դա մի առանձին ոտանավոր չէ, այլ մեծ ոտանավորի առաջին մասը, այսինքն նրա առաջին 24 տողը, ասել է թե մեծ ոտանավորն ամբողջովին

<sup>1</sup> Բուն մատնողութեան թուղթը, որ ուղարկված է եղել Կարապետ Եղյանի եզրակացութեան, և այս եզրակացութեան սևագրութունը—երկուսն էլ հանված են Եղյանի արխիվից. զրանք անթվակիր են և անստորագիր:

չի արգելված եղել, այլ միայն իր մի խոշոր մասով: Եվ հետո, ցանկի երրորդ ոտանավորը՝ «Ուղերձ նույն տարեդարձին երեսնաներին» — չի երևում ոչ գրքույկի մեջ և ոչ էլ հայտնվել է նրա մահից հետո մնացած թղթերի մեջ. թե ի՞նչ է եղել, հայտնի չէ:

Շահազիզը իր եղբորորդուն գրած նամակներում շատ տեղ զգվանքով է խոսում Եվրոպայի գործադրած մեղմեխ և անբարոյական քաղաքականության մասին հայերի վերաբերմամբ, որի հետևանքն են եղել Սուլթան Համիդի կատարած խժոժությունները Հայաստանում և տերություն մյուս հայաբնակ վայրերում: Իր անթվական նամակներից մեկում, օրինակ, նա գրում է. «Վերջ դնենք այս մեր թշվառ կոմեդիային, մի անտանելի թշվառություն անա պաշարում է մեր սրտերը: Հայության շունչը սպառում է յուր ազնիվ և դուրսցանական կրթի մեջ, և Եվրոպան խաղ է անում, մի անարդ և բարբարոսական կոմեդիա. տասնիններորդ դարի էջերը կիման սևացած պատմություն մեջ և կարճանագրեն խայտառակ դիպլոմատիայի հնարագիտությունները: Եվրոպայի մարդասիրությունը, Եվրոպայի պրոգրեսը ոչ այլ ինչ է, քան թե մի ամբողջ շարք վայրենի կրքերի և անսուսկություն: Թեքն այդ ցիվիլիզացիայի երեսին, որ ներկայացնում է մի կատարյալ մտավորական սիֆիլիզացիա: Տես՝ ի՞նչ դիրք է բռնել այն ճղճղան Ֆրանսիան, որ մեզ ուսուցանում էր եղբայրություն և հավասարություն, այժմ ինքը փոխվել է ստրուկ և ծառա և պապունձել է լեզվով, որ մի ծպիտ անգամ չհանն այն անմեղ զոհերի համար, որոնք պաշտպան են հանդիսանում նրա դավանած սկզբունքների համար: Գրիչս հրաժարվում է շարունակել այն անտանելի պատմությունը: Բայց այնուամենայնիվ ավելի պիտի հուսալ, քան թե վհատել»:



ՄՏՈՒԳՎԱԾ է 1971 թ.

875

Академия Наук Армянской ССР

Институт Литературы

Е. ШАХАЗИЗ

БИОГРАФИЯ

СМБАТА ШАХАЗИЗА

(На армянском языке)

Изд. АН Арм. ССР Ереван, 1944.

հեղ. Տ. Տ.

Ստորագրված է տպագրության 17/VII 1944 թ.  
ՎՅ 00882 Պատ. № 103. Հրատ. № 219. Տիրաժ 2000  
Յ տպագրական մամուլ, մեկ մամուլում 38,400 ապ. նիշ.  
ՀՍՍՌ Գրա. Ակադեմիայի 1-ին տպարան, Երևան.